Աստրիդ Լինդգրեն

Երկարագուլպա Պիպին

Վիպակ

Թարգմանությունը՝ Աշխեն Բախչինյանի

Զանգակ

2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ. ՄԻ ՓՈՔՐԻԿ-ՓՈՔՐԻԿ ՔԱՂԱՔԻ ԾԱՅՐԱՄԱՍՈՒՄ...

Գլուխ 1. ՊԻՊԻՆ ԲՆԱԿՎՈՒՄ Է ՎԻԼԼԱ ՎԻԼԵԿՈՒԼԱՅՈՒՄ

Գլուխ 2. ՊԻՊԻՆ ԲԱՆՓՆՏՐԻՉ Է ԵՎ ԿՌՎԻ ՄԵՋ Է ԸՆԿՆՈՒՄ

Գլուխ 3. ՊԻՊԻՆ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ ԲՌՆՈՑԻ Է ԽԱՂՈՒՄ

Գլուխ 4. ՊԻՊԻՆ ԳՆՈՒՄ Է ԴՊՐՈՑ

Գլուխ 5. ՊԻՊԻՆ ԲԱՐՁՐԱՆՈՒՄ Է ԴԱՐՊԱՍԻ ՎՐԱ ՈՒ ԾԱՌ Է ՄԱԳԼՅՈՒՄ

Գլուխ 6. ՊԻՊԻՆ ԷՔՍԿՈՒՐՍԻԱ Է ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒՄ

Գլուխ 7. ՊԻՊԻՆ ԳՆՈՒՄ Է ԿՐԿԵՍ

Գլուխ 8. ՊԻՊԻԻՆ ԳՈՂԵՐ ԵՆ ԱՅՑԵԼՈՒՄ

Գլուխ 9. ՊԻՊԻՆ ՀՅՈՒՐ Է ԳՆՈՒՄ

Գլուխ 10. ՊԻՊԻՆ ՀԱՆԴԵՍ Է ԳԱԼԻՍ ՈՐՊԵՍ ՓՐԿԱՐԱՐ

Գլուխ 11. ՊԻՊԻԻ ԾՆՆԴՅԱՆ ՕՐԸ

ՆԱԽԱԲԱՆ. ՄԻ ՓՈՔՐԻԿ-ՓՈՔՐԻԿ ՔԱՂԱՔԻ ԾԱՅՐԱՄԱՍՈՒՄ...

Այս գիրքը մի զարմանալի աղջկա՝ Երկարագուլպա Պիպիի մասին է: Նա մանկական գրականության մեջ հայտնվել է գրքի հեղինակի՝ շվեդ կին գրող Աստրիդ Լինդգրենի դուստր Կարինի շնորհիվ: 1941 թվականին, երբ Կարինը հիվանդանում է թոքերի բորբոքումով, անընդհատ խնդրում է մորը հեքիաթներ կարդալ: Իսկ մի օր պատվիրում է մի պատմություն պատմել Պիպիի մասին, որ շվեդերեն նշանակում է գժուկ և քմահաճ

երեխա:

Աստրիդ Լինդգրենը, որ ժամանակ առ ժամանակ աշխատում էր որպես լրագրող և գործավար, սկսում է ամեն երեկո պատմություններ հնարել ինքնուրույն, իրասածի ու աներևակայելի ուժի տեր աղջկա՝ Երկարագուլպա ազգանունով Պիպիի մասին: 1944 թվականին Աստրիդ Լինդգրենը սայթաքում է ձյան վրա, ընկնում և ոտքի կոտրվածք է ստանում: Որոշ ժամանակ ստիպված լինելով մնալ տանը՝ սա գրի է առնում իր պատմած բոլոր այդ պատմությունների որպես նվեր դստեր ծննդյան 10-ամյակին:

Ամբողջացած պատմությունները դառնում են գիրք, որն իր հեղինակին անմիջապես հռչակ է բերում, իսկ հերոսուհին դառնում է շվեդ երեխաների ամենասիրված հերոսը: Այն ժամանակներում մեծահասակները բոլորովին այլ կերպ էին վերաբերվում երեխաներին՝ խստություններ կիրառում, հնազանդություն պահանջում, անտեսում երեխայի եսն ու ինքնությունը: Պիպին քանդում է հին մտածողությունը, մանկավարժության և մանկական հոգեբանության մեջ ընդունված հին մոտեցումներն ու կարծրատիպերը: Նա ազատ ու երջանիկ երեխա է,

ինչպիսին ուզում է լինել յուրաքանչյուր մանուկ:

Իր առաջին գրքից հետո Աստրիդ Լինդգրենը հաջորդաբար հրատարակում է բազմաթիվ մանկական գրքեր, որոնք սիրված են ոչ միայն իր հայրենիքում: Անշուշտ, լսել եք Կառլսոնի և Մանչուկի, լյոնեբերգցի Էմիլի և ավազակի դուստր Ռոնյայի մասին:

...Եվ ահա այդպես, հեղինակի աղջկա շնորհիվ ծնունդ է առել Երկարագուլպա Պիպին, որը մեն-մենակ ապրում է իր տանը՝ Վիլեկուլա կոչվող առանձնատանը, որտեղ ամեն ինչ թույլատրվում է, միշտ խառնաշփոթ է և միշտ կարելի է

զվարճանալ: Մենակ, այսինքն՝ առանց ծնողների, սակայն իր կապիկ պարոն Նիլսոնի ու ձիու հետ, որոնք մասնակից են Պիպիի բոլոր արկածներին ու միջոցառումներին:

Պիպին ուժեղ և հարուստ է: Նա հեշտությամբ կարող է հաղթել ցանկացած ոստիկանի կամ գողի և անգամ իր ընկերոջ վրա հարձակված կատաղած ցուլին: Յուրաքանչյուր տղա կերազեր այդքան ուժեղ լինել: Այդ անասելի ուժի հետ մեկտեղ Պիպին նաև շատ մեծահոգի է և ազնիվ: Իր փոքրիկ-փոքրիկ քաղաքում բնակիչներն աստիճանաբար սկսում են ճանաչել նրան:

Պիպին ամեն ինչում ինքնուրույն է: Մի օր ինքնուրույն թխվածքի խմոր է պատրաստում ու շվեդական ազգային պղպեղաթխվածքն է թխում, որն իրականում ամենևին ու կծու չէ, որովհետև ոչ թե պղպեղով, այլ դարչինով և մեխակով է:

Ընկերանալով հարևան տանը բնակվող երեխաների՝ Թոմիի ու Անիկայի հետ՝ Պիպին նրանց հետ միասին զվարճանում է՝ բանփնտրիչություն անելով կամ էքսկուրսիա կազմակերպելով, և, բնականաբար, այդ ամենն առանց արկածների չի անցնում: Իսկ դպրոցում ընդամենը մեկ օր է մասնակցում դասերին՝ իր

համարձակ պատասխաններով զայրացնելով ուսուցչուհուն և զվարճացնելով աշակերտներին:

Պիպին իր հոր նավով շրջել է բոլոր երկրներում և միշտ կարողանում է զարմանալի պատմություններ հիշել մեծ ականջներով չինացու, Կոնգոյի սուտասանների, հետ-հետ քայլող եգիպտացիների և ուրիշների մասին: Թոմին ու Անիկան երջանիկ են, որ վերջապես նման խաղընկեր գտան: Ո՞վ չի երազի նման ընկերոջ մասին:

Գիրքը կարդալուց հետո, կարծում եմ, դու էլ կաշխատես ամենալավ ընկերը դառնալ քո խաղընկերների համար:

Աշխեն Բախչինյան

Գլուխ 1. ՊԻՊԻՆ ԲՆԱԿՎՈՒՄ Է ՎԻԼԼԱ ՎԻԼԵԿՈՒԼԱՅՈՒՄ

Մի փոքրիկ-փոքրիկ քաղաքի ծայրամասում մի հին ու լքված այգի կար: Այգում մի հին տուն էր կանգնած, իսկ այդ տանն ապրում էր Երկարագուլպա Պիպին: Նա ինը տարեկան էր և ապրում էր բոլորովին մենակ: Պիպին մայր ու հայր չուներ, և դա նույնիսկ վատ չէր, որովհետև այդպիսով չկար մեկը, որ զվարճության ամենաթեժ պահին ուղարկեր քնելու կամ էլ ստիպեր ձկան յուղ կուլ տալ, երբ իր սիրտն

ավելի շուտ քաղցրավենիք էր ուզում:

Մի ժամանակ Պիպին հայրիկ ուներ, որին անչափ շատ էր սիրում, պարզ է, մայրիկ էլ ուներ, բայց այնքան վաղուց էր, որ բոլորովին չի հիշում: Մայրը մահացել էր, երբ Պիպին դեռ շատ-շատ փոքրիկ էր, օրորոցում էր քնում ու այնպես սարսափելի էր ճչում, որ բոլորը մոտակայքից փախչում էին: Պիպին կարծում էր, որ հիմա իր մայրիկը, երկնքում նստած, մի փոքրիկ ճեղքից նայում է իր աղջկան, և դրա համար հաճախ ձեռքով էր անում նրան ու ասում.

— Մի՛ անհանգստացիր, ես իմ գլխի ճարը կտեսնեմ:

Պիպին հորը չէր մոռացել: Նա նավապետ էր և կտրել-անցել էր բոլոր մեծ ծովերը, ու նրա հետ միասին էլ Պիպին ճամփորդում էր նավով, մինչև որ մի անգամ փոթորիկ բարձրացավ, ու հայրն անհետացավ: Բայց Պիպին լիովին վստահ էր, որ օրերից մի օր նա կվերադառնա: Երբեք էլ մտքով անգամ չէր անցնում, թե կարող է խեղդված լինել: Նա կարծում էր, թե հայրը լողալով հասել է մի կղզի, որտեղ լիքը սևամորթներ են ապրում, էլ որ դարձել է բոլոր սևամորթների թագավորը և ամբողջ օրը զբոսնում է կղզիով մեկ՝ ոսկե թագը գլխին:

— Մայրս հրեշտակ է, իսկ հայրս՝

սևամորթների թագավոր, հաստատ ոչ բոլոր երեխաները էդպիսի հրաշալի ծնողներ ունեն, — հաճախ գոհ-գոհ ասում էր Պիպին: — Ու հենց որ հայրս հաջողեցնի մի նավ սարքել, կգա ու կտանի ինձ, ու ես էլ կդառնամ սևամորթների արքայադուստրը: Հեյ-հոպ, ա՛յ թե կյանք կանենք:

Այգու այդ հին տունը Պիպիի հայրը գնել էր շատ տարիներ առաջ: Նա մտածում էր, որ այդտեղ Պիպիի հետ կապրի, երբ շատ ծերանա ու այլևս ուժ չի ունենա ծովերն ակոսելու: Բայց դե գիտեք արդեն, թե ծովում ինչ տխուր բան պատահեց նրան, և Պիպին, նրա վերադարձին

սպասելով, ճանապարհվեց ուղիղ տուն՝ Վիլլա Վիլեկուլա: Տունն այդպես էր կոչվում: Այն կահավորված և պատրաստ սպասում էր Պիպիին:

Մի գեղեցիկ ամառային երեկո նա իր հոր նավի բոլոր նավաստիներին մնաք բարով ասաց: Նրանք բոլորն էլ սիրում էին Պիպիին, Պիպին էլ նրանց էր սիրում:

— Մնաք բարո՛վ,— ասաց նա ու հերթով բոլորի ճակատները համբուրեց:— Մի՛ անհանգստացեք, ես չեմ կորչի:

Նավից երկու բան վերցրեց իր հետ: Մի փոքրիկ կապիկ, անունը՝ պարոն

Նիլսոն, որ հորից էր նվեր ստացել, և մի մեծ ճամպրուկ՝ ոսկեդրամներով լի: Նավաստիները, տախտակամածի վրա կանգնած, երկար նայում էին նրա հետևից, քանի դեռ կարող էին տեսնել: Պիպին քայլում էր վստահ, առանց շրջվելու, պարոն Նիլսոնն՝ ուսին ու ճամպրուկն ամուր բռնած:

— Արտասովոր երեխա է,— ասաց նավաստիներից մեկը՝ սրբելով արցունքը, երբ Պիպին անհետացավ հեռվում:

Նա իրավացի էր: Պիպին շատ արտասովոր երեխա էր: Իսկ ամենաարտասովորն այն էր, որ նա սարսափելի ուժեղ էր: Այնքան ուժեղ, որ ամբողջ աշխարհում չէր գտնվի

նույնիսկ նրա չափ ուժեղ մի ոստիկան: Նա կարող էր մի ամբողջ ձի բարձրացնել, եթե ուզենար: Եվ այդպես էլ արեց: Հենց նույն օրը, երբ եկավ տուն՝ Վիլլա Վիլեկուլա, իր բազմաթիվ ոսկեդրամներից մեկով մի ձի գնեց: Պիպին միշտ երազել էր ձի ունենալ: Եվ այժմ ձին ապրում էր պատշգամբում: Բայց երբ Պիպին ուզում էր ճաշից հետո սուրճ խմել այնտեղ, առանց երկար- բարակ մտածելու, ձիուն գրկած՝ դուրս էր տանում այգի:

Վիլլա Վիլեկուլայի հարևանությամբ մի ուրիշ այգի ու մի տուն կար: Այդ տանը մի հայրիկ ու մայրիկ էին ապրում իրենց երկու անուշիկ երեխաների հետ: Տղայի անունը Թոմի էր, աղջկանը՝ Անիկա: Նրանք շատ սիրալիր, դաստիարակված ու համեստ երեխաներ էին: Թոմին երբեք չէր կրծում եղունգները և միշտ անում էր այն, հետ խնդրում էր մայրիկը: Անիկան երբեք չէր վիճում, երբ ինչ-որ բան իր ուզածով չէր լինում, միշտ գեղեցիկ տեսք ուներ իր արդուկած զգեստներով և շատ զգույշ էր, որ չկեղտոտվի: Թոմին ու Անիկան խելոք խաղում էին իրենց այգում, բայց հաճախ երազում էին

խաղընկերոջ մասին և երբեմն երբ Պիպին դեռ իր հոր հետ էր նավարկում, կանգնում էին ցանկապատի մոտ ու զրուցում իրար հետ:

— Ափսոս, որ ոչ ոք չի տեղափոխվում այստեղ: Մեկը պետք է ապրի այստեղ, երեխաներ ունեցող մեկը:

Մի գեղեցիկ ամառային երեկո, երբ Պիպին առաջին անգամ ոտք դրեց Վիլլա Վիլեկուլա, Թոմին ու Անիկան տանը չէին, մի շաբաթով այցելության էին գնացել իրենց տատիկին: Դա էր պատճառը, որ տեղյակ չէին, որ ինչ-որ մեկն արդեն բնակվում է հարևան տանը: Եվ երբ վերադառնալու

հաջորդ օրն իրենց դարպասի մոտ կանգնել ու նայում էին փողոցին, դեռևս չգիտեին, որ փաստորեն իրենց այդքան մոտիկ մի խաղընկեր ունեն: Հենց այն պահին, երբ մտածում էին, թե ինչով զբաղվեն, կամ թե հույս կա արդյոք, որ այդ օրը մի զվարճալի բան կպատահի, թե սովորականի պես տաղտկալի օր է սպասվում, երբ չի հաջողվում ոչ մի հետաքրքիր բան հնարել, ճիշտ այդ պահին Վիլլա Վիլեկուլայի դարպասը բացվեց, ու մի աղջնակ հայտնվեց փողոցում: Թոմիի ու Անիկայի երբևէ տեսած ամենաարտասովոր աղջիկն էր՝ Երկարագուլպա Պիպին, որ դուրս էր եկել առավոտյան զբոսանքի: Ահա

այսպիսի տեսք ուներ նա:

Մազերը ճիշտ գազարի գույնի էին, և հյուսքերն այնքան ձիգ էին հյուսված, որ ցցված էին երկու կողմերից: Քիթը կարծես փոքրիկ կարտոֆիլ լիներ ու ամբողջովին պեպենոտ էր: Քթի տակ էլ չափազանց լայն բերանն էր՝ սպիտակ, առողջ ատամներով: Հագուստն էլ էր տարօրինակ: Պիպին ինքն էր կարել: Այն հավանաբար կապույտ էր նախատեսված, բայց կտորը չէր հերիքել, ու Պիպին այստեղ-այնտեղ կարմիր լաթեր էր կարել: Նրա բարակ, նիհար ոտքերին մի զույգ երկար գուլպա կար, մեկը՝ շագանակագույն, մյուսը՝ սև: Նաև՝ ոտքերին հաստատ երկու անգամ

մեծ մի զույգ սև կոշիկ, որ հայրն էր գնել Հարավային Ամերիկայից: Պիպին, դրանցից բացի, ուրիշ ոչինչ չէր ուզում հագնել:

Թոմին ու Անիկան զարմանքից քարացան՝ անծանոթ աղջկա ուսին նստած կապիկ տեսնելով: Մի փոքրիկ կապիկ էր՝ կապույտ շալվար, դեղին բաճկոն ու սպիտակ ծղոտե գլխարկ հագին:

Պիպին քայլում էր փողոցով: Քայլում էր՝ մի ոտքը մայթին, մյուսը մայթեզրի առվակի մեջ դնելով: Թոմին ու Անիկան, ինչքան հնարավոր է, երկար նայեցին նրա հետևից:

Մի քիչ հետո Պիպին վերադարձավ:

Հիմա էլ հետ-հետ էր քայլում, որպեսզի տուն գնալիս ստիպված չլինի հաճախակի շրջվել: Համարյա հասնելով Թոմիի ու Անիկայի դարպասին՝ կանգ առավ: Երեխաները լուռ իրար նայեցին: Վերջապես Թոմին ասաց.

— Ինչո՞ւ ես հետ-հետ գնում:

— Ինչի եմ հետ-հետ գնո՞ւմ,— կրկնեց Պիպին:— Մենք ազատ երկրում չենք ապրում, ինչ է: Ինչ է, մարդ չի՞ կարող քայլել իր ուզածի պես: Համ էլ ասեմ քեզ, որ Եգիպտոսում բոլոր մարդիկ էլ էդպես են քայլում, ու ոչ մեկի մտքով չի անցնում, թե ինչ-որ տարօրինակ բան է անում:

— Ինչ գիտես,— հարցրեց Թոմին:— Դու էլ հո Եգիպտոսում չես եղել:

— Ես չեմ եղել Եգիպտոսում: Ո՞նց չէ, իմացած լինես, որ եղել եմ: Ես ամբողջ երկրագնդով մեկ ման եմ եկել ու շատ ավելի զարմանալի բաներ եմ տեսել, թան հետ-հետ քայլող մարդիկ: Տեսնես ինչ կասեիր, եթե ձեռքերիս վրա քայլեի, ոնց որ հեռավոր Հնդկաստանի մարդիկ:

— Ինչ ստեր ես փչում,— ասաց Թոմին:

Պիպին մի պահ լռեց:

— Հա, ճիշտ իմացար: Սուտ ասացի, — տխուր ասաց Պիպին:

— Լավ բան չէ սուտ ասելը,— վերջապես համարձակվեց բերանը բացել Անիկան:

— Հա, լավ բան չէ սուտ ասելը,— էլ ավելի տխուր ասաց Պիպին:— Բայց ես այդ մասին միշտ մոռանում եմ, հասկանում ես: Համ էլ ոնց ես մի փոքրիկ երեխայից, որի մայրիկը հրեշտակ է, իսկ հայրը՝ սևամորթների թագավոր, ու ինքն էլ ամբողջ կյանքը նավի վրա է անցկացրել, պահանջում, որ ճիշտ խոսի: Ու վերջապես,— Պիպիի ամբողջ պեպենոտ դեմքը փայլատակեց,— ասեմ ձեզ՝ Կոնգոյում գոնե մի ճիշտ խոսող մարդ չեք գտնի: Նրանք ամբողջ օրը

ստեր են հորինում: Սկսում են առավոտվա յոթից ու էդպես մինչև արևի մայր մտնելը: Էնպես որ, եթե նորից ստերս բռնեք, փորձեք ներել ինձ ու հիշել, որ Կոնգոյում մի քիչ երկար մնալուց է: Կարծում եմ, կընկերանանք, չէ՞:

— Իհարկե,— ասաց Թոմին ու հանկարծ զգաց, որ սա ոչ սովորական օրերից մեկն է լինելու:

— Չգնանք ինձ մոտ նախաճաշելու,— հարցրեց Պիպին:

— Իհարկե,— ուրախացավ Թոմին,— ինչու չգնանք որ, եկեք, գնացինք:

— Հա,— ասաց Անիկան,— գնացինք:

— Բայց ես սկզբից ձեզ պիտի ներկայացնեմ պարոն Նիլսոնին,— ասաց Պիպին, և այդ ժամանակ փոքրիկ կապիկը հանեց գլխարկն ու քաղաքավարի բարևեց:

Եվ, այսպիսով, նրանք մտան Վիլլա Վիլեկուլայի՝ ամեն որպե փլվելու ենթակա դարպասից, անցան այգու խճապատ արահետով, որի երկայնքով աճում էին ծեր մամռապատ ծառեր, որոնք իսկական մագլցածառերի տեսք ունեին, հետո շարժվեցին ուղիղ դեպի տունը ու բարձրացան պատշգամբ: Այնտեղ կանգնած էր ձին ու ապուրի ափսեից վարսակ էր ուտում:

— Ինչո՞ւ ես ձիուն պատշգամբում պահում,— հետաքրքրվեց Թոմին: Նրա իմացած բոլոր ձիերը ախոռում էին ապրում:

— Հը՛մ,— երկար մտածելուց հետո ասաց Պիպին, — խոհանոցում նա ուղղակի ոտքի տակ կընկներ: Իսկ հյուրասենյակում նրան այնքան էլ դուր չի գալիս: Թոմին ու Ալիկան թփթփացրին ձիու մեջքին ու մտան տուն: Պիպին մի խոհանոց ուներ, մի հյուրասենյակ ու ննջարան: Բայց տունն այնպիսի տեսք ուներ, կարծես թե այդ անգամ Պիպին շաբաթօրյա մաքրություն չէր արել: Թոմին ու Ալիկան զգուշորեն իրենց շուրջը նայեցին՝ անընդհատ սպասելով, թե

ահա մի անկյունում նստած կլինի սևամորթների թագավորը: Նրանք կյանքում երբևէ սևամորթների թագավոր չէին տեսել: Սակայն ոչ հայրն էր երևում, ոչ էլ մայրը, և Անիկան վախվորած հարցրեց.

— Դու բոլորովին մենակ ես ապրում այստեղ, ինչ է:

— Իսկի էլ չէ,— ասաց Պիպին:— Պարոն Նիլսոնն ու ձին էլ են էստեղ ապրում:

— Չէ, ես հորդ ու մորդ նկատի ունեի: Նրանք այստեղ չեն ապրում:

— Չէ, բոլորովին,— գոհ-գոհ պատասխանեց Պիպին:

— Այդ դեպքում ով է քեզ իրիկունները քնելու ուղարկում,— զարմանում էր Անիկան:

— Ես ինքս,— բացատրեց Պիպին:— Սկզբում շատ խաղաղ ձայնով եմ ասում, եթե չեմ հնազանդվում, մի անգամ էլ եմ ասում՝ բայց արդեն խիստ, իսկ եթե էլի բանի տեղ չեմ դնում, էդ դեպքում ինքս ինձ մի լավ հասցնում եմ, հասկանո՞ւմ եք:

Թոմին ու Անիկան մինչև վերջ էլ չհասկացան, բայց մտածեցին, որ երևի թե լավ ձև է: Մինչ այդ նրանք արդեն հասել էին խոհանոց, ու Պիպին գոչեց.

— Հիմա մենք բլիթներ կթխենք:

Իսկ հետո երեք ձու վերցրեց ու վերև շպրտեց: Մեկը շրխկաց նրա գլխին ու ջարդվեց, դեղնուցն էլ ներքև հոսեց ու լղոզեց աչքերը: Բայց մյուս երկուսը հասցրեց ճարպկորեն որսալ կաթսայով, որի մեջ էլ հենց ջարդվեցին:

— Ես շատ եմ լսել, որ դեղնուցը օգտակար է մազերի համար,— ասաց Պիպին ու սրբեց աչքերը:— Կտեսնեք՝ հիմա մազերս էնպես կաճեն, թող ու փախիր: Բրազիլիայում ընդհանրապես բոլոր մարդիկ գլխներին ձու քսած են ման գալիս, դրա համար էլ ոչ մի ճաղատ մարդ չկա: Մենակ մի անգամ էր եղել, որ մի գիժ ծերուկ, փոխանակ ձվերը

մազերին քսեր, կերել էր: Վերջը էդ մարդու մազերը թափվեցին, ու երբ որ նա երևում էր փողոցում, էնպիսի իրարանցում էր սկսվում, որ կարգուկանոն հաստատելու համար ստիպված ոստիկանություն էին կանչում:

Պիպին պատմելու ընթացքում վարժ շարժումներով մատներով ձվի կճեպները հանում էր կաթսայի միջից: Հետո վերցրեց պատից կախված հարիչն ու սկսեց այնպիսի արագությամբ հարել բլիթների խմորը, որ այն ցայտում էր պատերին: Վերջում ինչ որ մնացել էր, սկսեց լցնել վառարանի վրա դրված թավայի մեջ: երբ բլիթը մի կողմից

պատրաստ էր լինում, շպրտում էր վերև, ու այն, առաստաղին չհասած, օդում պտտվում էր, իսկ Պիպին էլ թավայով որսում էր: Երբ բլիթն արդեն պատրաստ էր, Պիպին, ամբողջ խոհանոցով մեկ նշան բռնելով, նետում էր այն ճիշտ սեղանին դրված ամանի մեջ:

— Կերեք,— գոչեց Պիպին,— կերեք, քանի չի սառել:

Թոմին ու Ալիկան ուտում էին ու մտածում, թե ինչ հրաշալի բլիթներ են:


sidor
röst

Ճաշից հետո Պիպին առաջարկեց բարձրանալ հյուրասենյակ: Այնտեղ միայն մի պահարան կար՝ բազմաթիվ փոքրիկ դարակներով: Պիպին հերթով բացում էր դարակներն ու ցույց տալիս դրանցում պահվող իր ողջ հարստությունը՝ մի արտասովոր ձու, տարօրինակ խեցիներ ու քարեր, փոքրիկ սիրունիկ տուփիկներ, գեղեցիկ արծաթե հայելիներ, մարգարտաշար մի վզնոց ու շատ ուրիշ գանձեր, որոնք Պիպին հավաքել էր հոր հետ շուրջերկրյա ճանապարհորդությունների ժամանակ: Նա իր նոր խաղընկերներին մեկական նվեր տվեց ի հիշատակ: Թոմին փայլփլուն

սադափե բռնակով մի դաշույն ստացավ, Անիկան էլ մի փոքրիկ տուփիկ, որի կափարիչը պատված էր տարբեր խեցիներով, տուփի մեջ էլ կանաչ քարով մի մատանի կար:

— Եթե հիմա սրանք վերցնեք ու գնաք տուն,— ասաց Պիպին,— ապա վաղը նորից կարող եք հետ գալ: Որովհետև եթե չգնաք տուն, բնականաբար չեք էլ կարող վերադառնալ: Իսկ ես շատ կափսոսամ:

Թոմին ու Անիկան էլ էին այդպես կարծում: Եվ հենց այդ պատճառով էլ տուն գնացին: Անցան ձիու կողքով, որ արդեն ամբողջ վարսակը կերել էր, հետո էլ դուրս եկան Վիլլա

Վիլեկուլայի դարպասից: Պարոն Նիլսոնը նրանց գլխարկով հրաժեշտ տվեց:

Գլուխ 2. ՊԻՊԻՆ ԲԱՆՓՆՏՐԻՉ Է ԵՎ ԿՌՎԻ ՄԵՋ Է ԸՆԿՆՈՒՄ

Անիկան այդ առավոտ շուտ արթնացավ: Արագ դուրս թռավ անկողնուց ու իրեն գցեց Թոմիի մոտ:

— Արթնացի՛ր, Թո՛մի,— ասաց Անիկան՝ Թոմիի թևից քաշքշելով,— վե՛ր կաց գնանք այն մեծ կոշիկներով զվարճալի աղջկա մոտ:

Թոմին վայրկենապես արթնացավ:

— Ես, ախր, քանի դեռ քնած էի, գիտեի, որ այսօր ինչ-որ զվարճալի բան է լինելու, բայց չէի կարողանում

հիշել՝ ինչ,— ասաց նա ու հանեց գիշերազգեստը:

Հետո երկուսն էլ գնացին լողասենյակ: Լվացվեցին, սովորականից ավելի արագ մաքրեցին ատամները, շտապ-շտապ հագան շորերը ու իրենց մայրիկի սպասածից մի ամբողջ ժամ շուտ, վերևի հարկից աստիճանների բազրիքին նստած սահելով, վայրէջք կատարեցին ճիշտ նախաճաշի սեղանի մոտ ու բղավեցին, որ իրենց հասանելիք շոկոլադի ըմպելիքը հենց այդ պահին են ուզում խմել:

— Ի՞նչ է պատահել որ,— տարակուսեց նրանց մայրիկը,— ինչո՞ւ եք այդպես շտապում:

— Գնում ենք կողքի տանն ապրող նոր աղջկա մոտ,— ասաց Թոմին:

— Կարող է ամբողջ օրն այնտեղ մնանք,— ասաց Անիկան:

Այդ առավոտ Պիպին զբաղված էր թխվածք թխելով: Նա մի սարսափելի մեծ խմորագունդ էր սարքել ու հենց խոհանոցի հատակի վրա էլ գրտնակում էր:

— Գիտես ինչի,— բացատրում էր Պիպին իր փոքրիկ կապիկին, — բա էլ ուրիշ որտեղ կտեղավորվի էսքան խմորը, որից ամենաքիչը հինգ հարյուր հատ թխվածք պիտի սարքեմ:

Եվ հենց այդտեղ էլ գետնին պառկած՝

ամբողջ ուժով սրտաձև թխվածքներ էր կտրում հանում:

— Դե՛, դուրս արի խմորի միջից,

պարոն Նիլսոն,— բարկացավ նա:

Ճիշտ այդ պահին դռան զանգը խփեցին: Պիպին վազեց դուռը բացելու: Նա ջրաղացպանի նման ոտքից գլուխ սպիտակ էր, իսկ երբ ձեռքով սրտանց բարևեց Թոմիին ու Անիկային, նրանց վրա ալյուրի մի ամբողջ ամպ իջավ:

— Ինչ լավ արեցիք, որ եկաք,— ասաց նա ու թափ տվեց գոգնոցն այնպես, որ մի նոր ալրաամպ բարձրացավ:

Թոմին ու Անիկան սկսեցին հազալ, որ ազատվեն կոկորդներր լցված ալյուրից:

— Ինչո՞վ ես զբաղված,— հարցրեց Թոմին:

— Թե որ ասեմ ծխնելույզ եմ մաքրում, էնքան կասկածամիտն ես, մեկ է, չես հավատա,— ասաց Պիպին:— Իրականում թխվածք եմ թխում: Բայց արդեն վերջացնում եմ: Կարող եք արկղին նստել, մի քիչ սպասել:

Պիպին իսկապես կարող էր արագ աշխատել: Թոմին ու Ալիկան, արկղին նստած, նայում էին, թե ոնց է Պիպին թռչկոտում խմորի վրայով ու թխվածքները շպրտում թավաների վրա ու հետո էլ թավաները նետում ուղիղ վառարանի մեջ: Նրանց կարծիքով՝ դա համարյա կինոյի նման էր:

— Վերջ,— ասաց Պիպին ու վերջին թավաները փուռն ուղարկելուց հետո

աղմուկով շրխկացրեց վառարանի դռնակը:

— Հիմա ինչ ենք անելու,— հետաքրքրվեց Թոմին:

— Չգիտեմ, դուք ինչ եք մտածում,— ասաց Պիպին:— Իսկ ես իրավունք չունեմ անգործ նստելու:

Որովհետև ես բանվորուհի եմ, իսկ այդ դեպքում մարդ երբեք ազատ վայրկյան չի ունենում:

— Ինչ ասացիր, դու ինչ ես,— հարցրեց Ալիկան:

— Բանվորուհի:

— Դա ինչ բան է,— զարմացավ Թոմին:

— Դա մի մարդ է, որ իրերը կարգի է բերում, էլի:

— Ի՞նչ իրեր,— չէր հասկանում Անիկան:

— Հնարավոր ամեն բան,— բացատրեց Պիպին,— ոսկե սալիկ ու ջայլամի փետուրներ, սատկած առնետներ ու շատ փոքրիկ մեխեր ու էդպիսի բաներ:

Թոմիի ու Անիկայի կարծիքով՝ Պիպիի ասածը հրաշալի էր հնչում, և իրենք նույնպես հաճույքով կուզենային բանփնտրիչներ դառնալ, բայց Թոմին ասաց, որ հույս ունի ոսկու կտորներ գտնել ու, ոչ թե ինչ-որ փոքրիկ պնդօղակներ ու մեխեր:

— Դե մենք կտեսնենք՝ վերջում ոնց կլինի,— ասաց Պիպին,— մարդ միշտ էլ մի բան գտնում է: Իսկ հիմա պիտի շտապենք, քանի ուրիշ բանփնտրիչներ չեն եկել ու շրջակայքի բոլոր ոսկու կտորները հավաքել:

Երեք բանփնտրիչները ճանապարհ ընկան: Նրանք կարծում էին, որ լավագույնը մոտակա տների շուրջը փնտրելն է, որովհետև, Պիպիի ասելով, չնայած շատ հնարավոր է, որ անտառի խորքում էլ մի որևէ բան գտնվի, սակայն, միևնույն է, ամենալավ բաները համարյա միշտ ընկած են լինում մարդկանց բնակավայրերի հարևանությամբ:

— Չնայած, խնդրեմ,— ասաց Պիպին, — ես հակառակն էլ եմ տեսել: Մի անգամ հիշում եմ՝ դրսում էի՝ Բոռնեոսի ջունգլիներում: Հենց անտառի ամենախորքում, որտեղ ոչ մի մարդ արարած ոտք չէր դրել, ինչ եք կարծում, ինչ գտա՝ մի արտակարգ հրաշալի փայտե ոտք: Հետո ես միոտանի մի ծերուկի տվեցի դա, ինքն էլ ասաց՝ էդ տեսակ ոտք նույնիսկ փողով չես առնի:

Թոմին ու Ավիկան նայում էին Պիպիին, որ տեսնեն, թե բանփնտրիչությունն իրեն ոնց է արդարացնելու: Իսկ Պիպին վազվզում էր փողոցի մի կողմից մյուսը՝ ձեռքով աչքերն արևից

պաշտպանելով և փնտրում ու փնտրում էր: Երբեմն ծնկի էր իջնում, ձեռքը մտցնում ցանկապատի արանքն ու հիսաթափված ասում.

— Տարօրինակ է, ես վստահ էի, որ ոսկու կտոր տեսա:

— Մարդ գետնին ինչ-որ տեսնի, պիտի վերցնի,— հարցրեց Անիկան:

— Հա, գետնին ընկած ամեն ինչ,— ասաց Պիպին:

Մի քանի քայլի վրա՝ իր տան մոտի կանաչ խոտերին, մի տարիքով մարդ էր պառկած-քնած:

— Ա՛յ սա գետնի վրա է,— ասաց Պիպին,— ու մենք նրան գտել ենք: Դե՛,

վերցնում ենք:

Թոմին ու Անիկան սարսափահար եղան:

— Չէ՛, չէ՛, Պի՛պի, մենք այդ քեռուն չենք տանի, այդպես չի կարելի,— ասաց Թոմին:— Համ էլ, ի վերջո, ինչներ՞ս է պետք: Վերցնենք ՞ինչ անենք:

— Ինչ անե՞նք: Շատ բան կարող ենք անել: Կարող ենք նրան ճագարի փոխարեն վանդակի մեջ դնելու խատուտիկի տերև տալ, որ ուտի: Բայց որ դուք չեք ուզում, իսկի պետքս էլ չի: Չնայած ինձ շատ ջղայնացնում է, որ կարող է մի ուրիշ բանփնտրիչ գա ու թռցնի նրան:

Նրանք առաջ անցան: Հանկարծ

Պիպին մի սարսափազդու ճիչ արձակեց.

— Չէ, էս տեսակ բան գետնին լինի ընկած...,— գոչեց նա ու պահածոյի մի հին, ժանգոտած տուփ բարձրացրեց խոտերի միջից:— Ինչ բաժակ է, ինչ բաժակ: Տուփեր հաճախ չեն պատահում:

Թոմին մի քիչ կասկածանքով նայեց տուփին ու հարցրեց.

— Լավ, դա ինչի համար պետք կգա:

— Ինչի համար ասես,— ասաց Պիպին:— Նախ՝ կարելի է մեջը թխվածք պահել: Այդ դեպքում դա մի հրաշալի Թխվածքների Տուփ կդառնա: Մյուս տարբերակը՝ կարելի

է մեջը թխվածք չդնել: Այդ դեպքում կդառնա Անթխվածք Տուփ ու, իհարկե, էնքան էլ հրաշալի չի լինի, պարզ է, բայց էլի լավ է:

Նա մանրամասն ուսումնասիրեց տուփը, որն իրականում սարսափելի ժանգոտ էր, և, բացի այդ, տակն էլ ծակ էր:

— Սա ավելի շուտ Անթխվածք Տուփի է նման,— ասաց նա մի քիչ մտածելուց հետո:— Ամեն դեպքում այն կարելի է գլխին հագցնել ու պատկերացնել, թե կեսգիշեր է:

Այդպես էլ արեց: Գլուխը տուփի մեջ մտցրած՝ սկսեց վազվզել Վիլլաների թաղամասով մեկ՝ փոքրիկ մետաղյա

աշտարակի նման, մինչև որ ոտքը կպավ ցանկապատի մետաղալարին ու բերանքսիվայր փռվեց գետնին: Կարգին դրխկոց լսվեց, երբ տուփը խփվեց գետնին:

— Տեսաք, չէ՞,— ասաց Պիպին ու հանեց տուփը: — Թե գլխիս չլիներ, հենց քիթ-մռութով կխփվեի ու մի կարգին ջարդուխուրդ կլինեի:

— Հա, բայց եթե դա գլխիդ չդնեիր,— ասաց Անիկան, — ոտքդ երբեք էլ չէր կպչի մետաղալարին:

Բայց մինչ նա կհասցներ խոսքն ավարտել, նորից մի ճիչ լսվեց, և Պիպին հաղթանակած դեմքով գետնից մի թելի կոճ բարձրացրեց:

— Էսօր ոնց որ իմ հաջողության օրը լինի,— ասաց նա։— Էս ինչ փոքրիկ, սիրունիկ կոճ է. սրանով օճառի պղպջակներ կլինի սարքել կամ թելով վզից կախել՝ վզնոցի նման։ Հենց հիմա գնում եմ տուն՝ սարքեմ։

Այդ պահին բացվեց մոտակա տան դռնակն, ու մի տղա շնչասպառ դուրս վազեց։ Նա սարսափած տեսք ուներ, որ ամենևին էլ զարմանալի չէր, որովհետև հինգ տղա կրնկակոխ հետևում էին նրան։ Նրանք շուտով հասան, հրեցին նրան դեպի ցանկապատը, ու բոլորով վրա տվեցին։ Հինգն էլ միանգամից սկսեցին խփել, ծեծել խեղճին։ Նա լաց էր լինում, ձեռքերը բարձրացրել

էր դեմքի մոտ, որ պաշտպանվի:

— Տվեք դրան, ոնց որ պետքն է, տղերք,— գոռաց տղաներից ամենամեծն ու ամենաուժեղը,— տվեք, որ էլ երբեք չուզի երևալ էս փողոցում:

— Օ՛,— ասաց Անիկան,— նրանք Վիլլեին են ծեծում: Ինչպես կարող են այսքան դաժան լինել:

— Սա այն գարշելի Բենգտն է. նա միշտ կռիվ է անում,— ասաց Թոմին,— ու հինգ հոգով՝ մեկի դեմ. ինչ ստորն են:

Պիպին առաջ գնաց դեպի տղաները ու ցուցամատով բզեց Բենգտի մեջքը:

— Էյ, դու,— ասաց նա,— ուզում եք փոքրիկ Վիլլեից պյուրե սարքել, որ միանգամից հինգ հոգով հարձակվել եք վրան:

Բենգտը շրջվեց ու տեսավ մի աղջկա, որին երբևէ չէր հանդիպել: Մի անծանոթ աղջիկ, որ համարձակվեց հրել իրեն: Սկզբում մի վայրկյան զարմանքից աչքերը չռած կանգնեց, իսկ հետո դեմքին մի լայն ժպիտ երևաց:

— Տղե՛րք,— կանչեց նա,— տղերք: Թողեք էդ Վիլլեին, մի էս օրիորդին նայեք, բոլոր ժամանակների օրիորդի՛ն:

Նա ձեռքերը ծնկներին խփեց ու

ծիծաղեց: Մի վայրկյանում բոլորը խմբվեցին Պիպիի շուրջը, բոլորը՝ բացի Վիլլեից, որն, արցունքները սրբելով, վախվորած գնաց կանգնեց Թոմիի կողքին:

— Տեսա՞ք ինչ տեսակ մազեր ունի՝ ճիպ-ճիշտ կրակի նման: Բա կոշիկները,— շարունակեց Բենգտը:— Չի լինի դրանցից մեկը պարտքով վերցնեմ: Ես շատ էի ուզում գնալ գետով լողալու, բայց նավակ չունեմ:

Նա բռնեց Պիպիի հյուսքերից մեկն ու արագ ձեռքը հետ քաշելով՝ ասաց.

— Վայ, վառվեցի:

Հետո բոլոր հինգ տղաներն էլ շրջապատեցին Պիպիին: Նրանք

թռչկոտում էին նրա շուրջն ու կրկնում.

— Կարմիր գլխարկ, կարմիր գլխարկ:

Պիպին, կանգնած տղաների շրջանի մեջ, բարեկամաբար ժպտում էր: Բենգտը սպասում էր, թե Պիպին պիտի ջղայնանա կամ էլ լաց լինի, կամ ծայրահեղ դեպքում գոնե վախենա: Երբ ոչինչ չօգնեց, մոտեցավ ու հրեց նրան:

— Ես հույս էլ չունեի, թե դու կանանց հետ ավելի լավ ես վարվում,— ասաց Պիպին և իր ուժեղ ձեռքերով վեր բարձրացրեց նրան, տարավ ու կախեց մոտակա կեչու ճյուղից: Հետո բռնեց մյուս տղային ու կախեց

մեկ ուրիշ ճյուղից, իսկ մյուսին բարձրացրեց ու տեղավորեց կողքի տան դարպասի սյունին, հետո բռնեց մյուսին ու շպրտեց բակի ցանկապատից ներս այնպես, որ նա վայրէջք կատարեց ծաղկանոցի ուղիղ մեջտեղը: Իսկ միջադեպի վերջին մասնակցին խցկեց փողոցում ընկած մի շատ փոքրիկ խաղալիք սայլակի մեջ: Հետո Պիպին, Թոմին, Անիկան ու Վիլլեն կանգնեցին ու նայեցին կատարվածից իրենց կորցրած տղաներին: Պիպին ասաց.

— Էս վախկոտներին տեսեք: Հինգ հոգով հարձակվել եք մեկի վրա: Ինչ ստորություն: Հետո էլ՝ մի փոքրիկ

անպաշտպան աղջկա: Թու՛հ, շատ տգեղ է:

— Դե՛, եկե՛ք, տուն ենք գնում,— շրջվեց նա դեպի Թոմին ու Ալիկան: Իսկ Վիլլեին զգուշացրեց.

— Եթե սրանք էլի փորձեն քեզ վրա ձեռք բարձրացնել, ինձ կասես:

Ծառից կախված ու շարժվել չհամարձակվող Բենգտին էլ ասաց.

— Թե մազերիս կամ կոշիկներիս մասին ուրիշ ասելու բան ունես, ավելի լավ կլինի՝ հիմա առիթից օգտվես, ասես, քանի տուն չեմ գնացել:

Բայց Բենգտը ուրիշ ասելու բան

չուներ ոչ Պիպիի կոշիկների, ոչ էլ, առավել ես, մազերի մասին: Այդ ժամանակ Պիպին, Թոմիի ու Անիկայի ուղեկցությամբ, մի ձեռքում մետաղյա տուփը, մյուսում՝ թելի կոճը, հեռացավ այդտեղից:

Երբ նրանք վերադարձան տուն, Պիպին ասաց.

— Սիրելիներս, շատ եմ ափսոսում, որ ես երկու հրաշք բան գտա, իսկ դուք ոչինչ չգտաք: Դուք մի քիչ էլ փնտրեք: Թոմի, ինչու էն ծեր ծառի փչակը չես ստուգում: Ծեր ծառերը մյուս բոլոր տեղերից ամենահարմարն են լինում բանփնտրիչների համար:

Թոմին հույս չուներ, որ ինքն ու Անիկան երբևէ ինչ- որ բան կգտնեն, բայց որպեսզի Պիպիի սրտով լինի, համենայն դեպս ձեռքը մտցրեց ծառի փչակի մեջ:

— Ա՛յ քեզ բան,— անասելի զարմացած՝ արտաբերեց նա, ու ձեռքը բարձրացրեց: Նրա ձեռքում կաշվե կազմով մի հրաշալի նոթատետր էր, ներսում էլ՝ արծաթե գրիչ:

— Իրոք որ զարմանալի է,— ասաց:

— Տեսնում ես, որ բանփնտրիչ լինելուց լավ բան չկա,— ասաց Պիպին:— Ո՞նց է, որ մարդիկ, ձեռ ու ոտ ընկած, չեն շտապում

բանփնտրիչ լինել: Հյուսն ու կոշկակար, ծխնելույզ մաքրող ու նման բաներ ուզում են դառնալ, իսկ բանփնտրիչ՝ չէ. էդ մեկը հարմար չէ: Ու հետո դարձավ Անիկային.

— Ինչու դու էլ էն մյուս կոճղի տակ չնայես: Մարդ համարյա միշտ էլ մի բան գտնում է նման տեղերում:

Անիկան ձեռքը տարավ կոճղի տակ
ու հենց նույն վայրկյանին էլ մի

կարմիր մարջանե վզնոց գտավ: Եվ նա ու Թոմին այնպես էին ապշել, որ մի որոշ ժամանակ աչքերը չռած կանգնելու մտածում էին, որ իսկապես բանփնտրիչ լինելուց լավ բան չկա աշխարհում:

Պիպին նախորդ գիշերվա կեսը իր սենյակում գնդակ էր խաղացել և հիմա հանկարծ իրեն ահավոր հոգնած զգաց:

— Ես երևի պիտի գնամ մի քիչ աչքս կպցնեմ,— ասաց նա:— Չէիք կարող հետս գալ ու ծածկել ինձ:

Երբ Պիպին նստեց մահճակալի եզրին ու կոշիկները հանեց, մի պահ դրանց նայելով՝ ասաց.

— Ուզում էր նավակ դարձնել էն Բենգտը, հը՛մ, մի դրան տեսեք,— արհամարհանքով փնչացրեց նա:— Ես նրան նավակ քշել ցույց կտամ, բայց մի ուրիշ անգամ:

— Պի՛պի,— ակնածանքով ասաց Թոմին,— ինչո՞ւ են կոշիկներդ այսքան մեծ:

— Դե, գիտես, որ կարողանամ մատներս շարժել,— պատասխանեց նա: Հետո պառկեց, որ քնի: Նա միշտ ոտքերը բարձին, իսկ գլուխը բավական ներքև՝ վերմակի տակ դրած էր քնում:

— Գվատեմալայում էսպես են քնում,— բացատրեց նա:— Համ էլ էս քնելու

միակ ճիշտ ձևն է, որ քնած ժամանակ էլ ոտքերս ճոճել կարողանամ:

— Դուք կարող եք առանց օրորոցայինի քնել,— շարունակեց,— ես միշտ մի քիչ երգում եմ ինձ համար, թե չէ աչքերս իսկի չեն փակվում:

Թոմին ու Անիկան լսում էին վերմակի տակից հնչող մռմռոցը. Պիպին էր երգելով ինքնիրեն քնեցնում:

Զգուշորեն ու անձայն, որպեսզի չխանգարեն, Թոմին ու Անիկան դուրս եկան սենյակից: Դռան մոտ շրջվեցին ու վերջին անգամ հայացք գցեցին մահճակալին: Բարձին

հանգստացող Պիպիի ոտքերից բացի՝ ուրիշ ոչինչ չէր երևում, միայն անընդհատ ճոճվող ոտքերը:

Երեխաները շտապեցին տուն: Անիկան ափի մեջ ամուր սեղմել էր մարջանե վզնոցը:

— Ամեն դեպքում շատ տարօրինակ է, — շրջվեց նա դեպի Թոմին:— Չեմ կարծում, որ Պիպին է սրանք նախապես դրել:

— Ինչ իմանաս,— ասաց Թոմին,— դժվար է գուշակել, երբ գործ ունես Պիպիի հետ:

Գլուխ 3. ՊԻՊԻՆ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ ԲՌՆՈՑԻ Է ԽԱՂՈՒՄ

Այդ փոքրիկ քաղաքում շատ արագ տարածվեց այն լուրը, որ ինը տարեկան մի աղջնակ մեն-մենակ ապրում է Վիլլա Վիլեկուլա կոչվող տնակում: Քաղաքի մորաքույրերն ու քեռիները չէին կարծում, թե դա թույլատրելի բան է: Բոլոր երեխաների գլխին էլ, պարզ է, պիտի մի մեծ լինի, ու բոլոր երեխաներն էլ պիտի դպրոց գնան ու բազմապատկման աղյուսակը սովորեն: Այդ իսկ պատճառով

քաղաքի մորաքույրերն ու քեռիները միասին որոշեցին, որ Վիլլա Վիլեկուլայի աղջնակին պետք է տեղավորել մանկատանը:

Մի գեղեցիկ օր Պիպին Թոմիին ու Անիկային սուրճի ու թխվածքի էր հրավիրել իր մոտ: Նա սուրճը մատուցում էր ծածկապատշգամբի աստիճանների վրա:

Հրաշալի ու արևոտ եղանակ էր, և Պիպիի պարտեզի բոլոր ծաղիկները բուրում էին: Պարոն Նիլսոնը՝ Պիպիի կապիկը, անընդհատ վերուվար էր անում պատշգամբի բազրիքներով: Ու մեկ-մեկ էլ ձին տնկում էր գլուխը՝ թխվածք ստանալու ակնկալիքով:

— Իրոք, ինչ հրաշալի բան է ապրելը, — ասաց Պիպին ու ոտքերը հնարավորինս երկար ձգեց:

Ճիշտ այդ պահին դարպասից համապատասխան հանդերձանքով երկու ոստիկան ներս մտան:

— Օ՛յ,— ասաց Պիպին,— երևում է՝ բախտս բերում է: Ոստիկանն իմ իմացած ամենալավ բանն է. իհարկե՝ խավրծիլի կիսելից հետո:

Ու նա ոստիկաններին ընդառաջ գնաց հիացմունքից փայլատակող դեմքով:

— Դու այն աղջիկն ես, որ բնակվում է Վիլլա Վիլեկուլայում,— հարցրեց ոստիկաններից մեկը:

— Ընդհակառակը,— ասաց Պիպին,— ես այն պառավ մորաքույրն եմ, որ ապրում է քաղաքի հակառակ ծայրի տան չորրորդ հարկում:

Պիպին այդպես ասաց, որովհետև ուզում էր մի քիչ կատակել ոստիկանների հետ: Բայց, ոստիկանների կարծիքով, դա բոլորովին էլ ծիծաղելի չէր: Նրանք ասացին, որ չարժե սրամտության փորձեր անել: Եվ պատմեցին, որ իրենց քաղաքի բարի մարդիկ արդեն կարգադրել են, որ մանկատանը նրան մի տեղ հատկացնեն:

— Ես արդեն տեղ ունեմ մանկատանը,— ասաց Պիպին:

— Ի՞նչ ես ասում, այդ հարցն արդեն լուծված է,— հարցրեց ոստիկաններից մեկը:— Որտե՞ղ է այդ մանկատունը:

— Այստեղ,— հպարտորեն ասաց Պիպին:— Ես մանուկ եմ, ու սա էլ իմ տունն է, հետևաբար սա մանկատուն է: Ու այնքան տեղ ունեմ այստեղ, ինչքան սիրտս ուզի:

— Սիրելի՛ փոքրիկ,— ասաց ոստիկանն ու ժպտաց,— դու ճիշտ չհասկացար: Դու պիտի իսկական մանկատուն գնաս, ու մեկն էլ պիտի լինի, որ քեզ խնամի:

— Իսկ կարելի՞ է, որ մարդ իր հետ ձիեր տանի ձեր մանկատուն,—

հետաքրքրվեց Պիպին:

— Դե, բնականաբար չի կարելի,— ասաց ոստիկանը:

— Հենց այդպես էլ կարծում էի,— մռայլվեց Պիպին:— Լավ, իսկ գոնե կապիկներ:

— Հուսով եմ՝ հասկանում ես, որ՝ ոչ:

— Եթե այդպես է,— ասաց Պիպին,— ուրեմն գնացեք ուրիշ տեղից երեխաներ ճարեք ձեր մանկատան համար: Ես չեմ պատրաստվում տեղափոխվել այնտեղ:

— Լավ, բայց չես կարծում, որ պիտի դպրոց գնաս:

— Իսկ ինչի համար են դպրոց գնում:

— Դե, հասկանալի է, որ տարբեր բաներ սովորեն:

— Էդ ինչ բաներ են որ, — հետաքրքրվեց Պիպին:

— Ինչ հնարավոր է,— ասաց ոստիկանը, — շատ-շատ օգտակար բաներ, օրինակ՝ բազմապատկման աղյուսակը:

— Ես արդեն ինը տարի է լավ էլ գլուխ եմ հանում առանց ինչ-որ բազմապատկման աղյուսակի,— ասաց Պիպին:— Ու այդպես էլ շարունակելու եմ:

— Հա, բայց պատկերացրո՛ւ՝ ինչ տխուր բան կլինի քեզ համար, որ այդքան անգրագետ մնաս:

— Պատկերացրո՛ւ մի օր, երբ արդեն մեծ լինես, հնարավոր է, մեկը գա ու հարցնի քեզ, թե որն է Պորտուգալիայի մայրաքաղաքը, ու դու այդ ժամանակ չկարողանաս պատասխանել:

— Ես, իհարկե, կկարողանամ պատասխանել,— ասաց Պիպին:— Ես ուղղակի կասեմ, եթե դու էդքան ուզում ես իմանալ՝ որն է Պորտուգալիայի մայրաքաղաքը, ուրեմն, խնդրեմ, հենց Պորտուգալիային էլ գրի՛ ու հարցրո՛ւ:

— Լավ, բայց չ՞ես կարծում, որ կմտածես, թե ամոթ էր, որ դու ինքդ չգիտեիր:

— Կարող է պատահել,— ասաց Պիպին: — Ես երևի մեկ-մեկ արթուն պառկած կլինեմ իրիկունները, ու ինքս ինձ հարց կտամ՝ տեսնես ոնց էր, էդ Պորտուգալիայի մայրաքաղաքի անունը: Բայց ով ասաց, որ մարդ անընդհատ պիտի զվարճանա,— ասաց Պիպին ու մի ակնթարթում կանգնեց ձեռքերի վրա: — Համ էլ ես հայրիկիս հետ եղել եմ Լիսաբոնում,— շարունակեց նա գլխիվայր կանգնած, որովհետև այդպես է կարող էր խոսել:

Բայց այդ ժամանակ ոստիկաններից մեկն ասաց, թե Պիպին թող իրականում չկարծի, որ կարող է իր ուզածն անել: Եվ էլ ավելի խիստ

ձևով հրամայեց նրան իրենց հետ գնալ մանկատուն: Նա մի քայլ արեց դեպի Պիպին ու նրա ձեռքից բռնեց: Բայց Պիպին արագ դուրս պրծավ, թեթև հարվածեց նրան ու ասաց.

— Բռնեցի, քո հերթն է:

Ու մինչ ոստիկանը հասցրեց աչք թարթել, Պիպին թռավ-բարձրացավ պատշգամբի տանիքին: Մի քանի վայրկյան անց արդեն նայում էր վերևի պատուհանից: Ոստիկանները ցանկություն չունեին նույն ճանապարհով վեր մագլցելու: Դրա համար էլ ներս սուրացին ու բարձրացան վերևի հարկ: Բայց երբ նրանք դուրս եկան պատշգամբ, Պիպին արդեն համարյա տանիքին

էր: Նա այնպես էր մագլցում տանիքի կղմինդրների վրայով, ոնց որ իսկական կապիկ լիներ: Մի վայրկյանից կանգնած էր տանիքի քիվերի մեջտեղում, որտեղից ճարպկորեն ցատկեց ծխնելույզի վրա: Ներքևում՝ պատշգամբում, կանգնած էին երկու ոստիկաններն ու մազերն էին փետում, իսկ խոտի գորգի վրա տեղավորված Թոմին ու Անիկան նայում էին վեր՝ Պիպիին:

— Ինչ զվարճալի է բռնոցի խաղալը,— գոչեց Պիպին,— ու ինչ լավ արեցիք, որ եկաք էստեղ: Էսօր իմ բախտը բերում է, կասկած չկա:

Մի որպե ծանրութեթև անելուց հետո ոստիկաններն ինչ-որ տեղից փայտե սանդուղք բերեցին, հենեցին տան պատին և այդպես՝ մեկն առջևից, մյուսը՝ հետևից, բարձրացան վերև, որ Պիպիին ցած բերեն: Բայց նրանք հաստատ վախեցած տեսք ունեին, երբ հասան տանիքի ամենաբարձր մասին ու սկսեցին հավասարակշռությունը պահելով՝ մեծագույն զգուշությամբ շարժվել դեպի Պիպին:

- Մի՛ վախեցեք, — գոչեց Պիպին:— Ամենևին վտանգավոր չէ, ուղղակի զվարճալի է:

Երբ ոստիկաններն արդեն երկու քայլի վրա էին, Պիպին հանկարծ ցատկեց ծխնելույզի վրայից ու վազեց դեպի տանիքի մյուս կողմը, որտեղից մի քանի մետր հեռավորության վրա մի ծառ կար:

- Ես հիմա սուզվում եմ,— գոռաց Պիպին ու թռավ ուղիղ ծառի կանաչ սաղարթի մեջ, ամուր կառչեց մի ճյուղից, մի որպե հետուառաջ ճոճվեց ու հետո բարեհաջող ցատկեց գետնին: Այնուհետև սլացավ տան մյուս կողմն ու աստիճանը հեռացրեց պատից:

Ոստիկանները մի քիչ շփոթված տեսք ունեին, երբ Պիպին ցատկեց,

բայց շատ ավելի շվարեցին, երբ հավասարակշռությունը հազիվ պահելով՝ անցան ամբողջ տանիքի երկայնքով ու պիտի սանդուղքով ներքև իջնեին:

Սկզբում նրանք սարսափելի ջղայնացան Պիպիի վրա, ով, ներքևում կանգնած, նրանց էր նայում, ու գոռացին, որ նա անմիջապես տեղը դնի սանդուղքը, թե չէ իրենք նրա հետ այլ կերպ կխոսեն:

— Ինչի՞ եք էդքան կատաղել, — հանդիմանանքով ասաց Պիպին:— Դե մենք ուղղակի բռնոցի ենք խաղում, ու համ էլ մարդիկ պիտի իրար ընկեր լինեն:

Ոստիկանները մի որպե մտածեցին, ու վերջապես նրանցից մեկը հանդարտված ձայնով ասաց.

— Էյ, դու, լսիր, բարի եղիր, աստիճանը տեղը դիր, հա՞ որ կարողանանք իջնել:

— Սիրո՛վ,— ասաց Պիպին ու ակնթարթորեն բերեց աստիճանը:— Հետո էլ կարող ենք սուրճ խմել ու միասին ուրախ ժամանակ անցկացնել:

Բայց ոստիկաններն իրականում շատ նենգ էին, որովհետև հենց որ ներքև իջան, նետվեցին Պիպիի հետևից:

— Հիմա կտեսնես, զզվելի՛ լակոտ,—

գոչեցին նրանք:

Բայց Պիպին ասաց.

— Չէ, ես էլ խաղալու ժամանակ չունեմ: Չնայած լավ էր, շատ ուրախացանք:

Եվ դրանից հետո նա երկու ոստիկանների գոտիներից ամուր բռնեց ու ձեռքերի վրա բարձրացրած՝ այգու միջով տարավ դարպասից դուրս՝ փողոց: Այնտեղ նրանց վայր դրեց ու սպասեց, մինչև ի վիճակի եղան շարժվելու:

— Մի րոպե սպասեք,— գոչեց Պիպին ու վազեց խոհանոց: Դուրս եկավ՝ երկու թխվածք ձեռքին ու ընկերաբար ասաց.

— Համտեսեք: Ոչինչ, չէ՞, որ մի քիչ այրված են:

Հետո վերադարձավ Թոմիի ու Անիկայի մոտ, որոնք, աչքերը չռած, ապշած կանգնած էին: Իսկ ոստիկանները շտապեցին քաղաք վերադառնալու պատմել բոլոր քեռիներին ու մորաքույրերին, որ Պիպին մանկատուն տանելու բան չէ: Նրանք չպատմեցին, որ տան կտուր են բարձրացել: Եվ մորաքույրերն ու քեռիները որոշեցին, որ այդ դեպքում ավելի ճիշտ կլինի, որ թողնեն Պիպին շարունակի ապրել Վիլլա Վիլեկուլայում: Եվ եթե այնպես պատահի, որ հանկարծ ուզենա դպրոց գնալ, թող ինքն էլ իր հարցերը

լուծի:

Իսկ Պիպին, Թոմին ու Ալիկան իսկապես աննման երեկո անցկացրին: Նրանք շարունակեցին ընդհատված սուրճը: Պիպին իր փորն ուղարկեց տասնչորս թխվածք ու հետո ասաց.

— Սրանք ոնց որ իմ իմացած ոստիկաններից չլինեին: Ահավոր շատ խոսեցին ինչ-որ մանկատան, բազմակապտման աղյուսակի ու Լիսաբոնի մասին:

Ուտելուց հետո նա դուրս տարավ ձիուն, ու երեքն էլ ձի քշեցին: Ալիկան սկզբում վախենում էր ու չէր ուզում, բայց երբ տեսավ, թե ինչ ուրախ էին

Պիպին ու Թոմին, ուզեց, որ Պիպին իրեն էլ բարձրացնի ձիու մեջքին: Ձին պտտվում էր այգով մեկ, և Թոմին երգում էր...

Երբ այդ երեկո Թուփն ու Անիկան մտան անկողին, Թոմին ասաց.

— Անիկա, լավ է, չէ՞, որ Պիպին եկավ էստեղ ապրելու:

— Ըհը, շատ լավ է,— ասաց Անիկան:

— Ես չեմ էլ հիշում, թե մի կարգին խաղացած լինեինք առաջ՝ մինչև Պիպիի էստեղ գալը, իսկ դռ՞ւ:

— Է՛հ, կրոկետ էինք խաղում ու նման բաներ,— ասաց Անիկան:— Բայց դե, իմ կարծիքով, Պիպիի ու ձիերի հետ

ավելի հետաքրքիր է:

Գլուխ 4. ՊԻՊԻՆ ԳՆՈՒՄ Է ԴՊՐՈՑ

Պարզ բան է, որ Թոմին ու Անիկան դպրոց էին հաճախում: Ամեն առավոտ՝ ժամը ութին, ձեռք ձեռքի տված, դասագրքերը թևի տակ՝ ճանապարհվում էին դասի:

Այդ ժամանակ Պիպին ազատ էր ու ամենաշատը զբաղվում էր ձիուն մաքրելով կամ պարոն Նիլսոնին նրա փոքրիկ հանդերձանքը հագցնելով: Կամ էլ առավոտյան իր մարզանքն էր անում: Մարզանքը սկսվում էր նրանով, որ Պիպին զգաստ կանգնում էր գետնին ու իրար

հետևից քառասուներեք անգամ ցատկում ու պտտվում էր տեղում: Դրանից հետո սովորաբար տեղավորվում էր հենց խոհանոցի սեղանի վրա ու կատարյալ խաղաղության մեջ մի կտոր հաց ու պանրով մի մեծ բաժակ սուրճ էր խմում: Թոմին ու Ալիկան դպրոց շտապելիս միշտ անասելի թախիծով էին նայում Վիլլա Վիլեկուլային: Նրանք ավելի մեծ հաճույքով կգնային Պիպիի հետ խաղալու: Կամ ծայրահեղ դեպքում գոնե Պիպին դպրոց գնար, դա ինչ-որ չափով կմխիթարեր իրենց:

— Պատկերացրո՛ւ ինչքան կզվարճանայինք, երբ դպրոցից

միասին տուն վերադառնայինք,— ասաց Թոմին:

— Հա, դպրոց գնալիս էլ...,— մտածեց Անիկան:

Ինչքան շատ էին մտածում այդ մասին, այնքան ավելի տխուր էր թվում, որ Պիպին դպրոց չի գնում, այնպես որ, ի վերջո, նրանք որոշեցին փորձել համոզել Պիպիին, որ դպրոց գա:

— Չես պատկերացնի՝ ինչ բարի ֆրյոկեն[1] ունենք,— խորամանկորեն սկսեց Թոմին, երբ մի օր՝ կեսօրից հետո, ինքն ու Անիկան եկան Վիլլա Վիլեկուլա, իհարկե, սկզբում դասերը բարեխղճորեն պատրաստելուց

հետո:

— Թե իմանայիր՝ ինչ ուրախ է դպրոցում,— համոզում էր Անիկան:— Ես ուղղակի կգժվեի, եթե ինձ արգելեին գնալ:

Պիպին նստել էր աթոռակին ու տաշտակի մեջ ոտքերն էր լվանում: Նա ոչինչ չասաց, միայն մի անգամ ոտքերով այնպես չլմփացրեց, որ ամբողջ հատակը ջուր դառավ:

— Այնտեղ շատ երկար չես էլ մնում,— շարունակեց Թոմին,— ընդամենը մինչև ժամը երկուսը:

— Ըհը, հետո էլ Նոր տարվա արձակուրդն ու Զատիկի արձակուրդն ու ամառային

արձակուրդն են սկսվում,— վրա բերեց Անիկան:

Պիպին մտասուզված կրծում էր ոտքի բութ մատը, բայց դեռևս շարունակում էր լռել: Հանկարծ նա վճռական շարժումով ամբողջ ջուրը շուռ տվեց խոհանոցի հատակին այնպես, որ երկու քայլի վրա նստած, հայելիով զբաղված պարոն Նիլսոնի տաբատը թրջվեց:

— Շատ անարդարացի է,— խստորեն ասաց Պիպին՝ առանց ուշադրություն դարձնելու պարոն Նիլսոնի հուսահատությանը՝ թաց տաբատի պատճառով:— Ահավոր անարդարություն է: Ես չեմ կարող նման բան հանդուրժել:

— Ի՞նչ ես ուզում ասել,— զարմացավ Թոմին:

— Չորս ամսից Նոր տարի է, և դուք Նոր տարվա արձակուրդ կունենաք: Իսկ ես, ես ինչ կունենամ,— Պիպիի ձայնն ավելի սրտաճմլիկ հնչեց:— Ո՛չ մի արձակուրդ, ոչ մի: Գոնե ամենապստիկ մի արձակուրդ ունենայի,— բողոքեց նա:— Պետք է վերջ տալ դրան: Վաղը դպրոց եմ գնում:

Թոմին ու Անիկան հիացմունքից ծափահարեցին:

— Ուռռաա՛, ուրեմն մենք ժամը ութին քեզ կսպասենք մեր դարպասի մոտ:

— Չէ՛, չէ՛,— ասաց Պիպին,— էդքան

շուտ ես չեմ կարող: Համ էլ ես ձիով եմ գալու դպրոց:

Այդպես էլ արեց: Ուղիղ առավոտվա ժամը տասին ձիուն իջեցրեց ներքև, ու այդ փոքրիկ քաղաքի մարդիկ շտապեցին իրենց պատուհանների մոտ՝ տեսնելու, թե այդ ինչ ձի է դոփելով անցնում: Պետք է ասել, որ նրանք կարծեցին, թե ամպերն են գոռում: Բայց սխալվեցին: Պարզապես Պիպին էր շտապում դասերին հասնել: Ամենակատաղած քառատրոփ վազքով նա սլացավ դպրոցի բակ, առանց կանգնեցնելու ցատկեց ձիուց, կապեց ծառին ու այնպիսի շրխկոցով բացեց դասարանի դուռը, որ Թոմին ու

Անիկան և նրանց կարգապահ դասընկերները քիչ մնաց ընկնեին նստարաններից:

— Ողջույն,— բղավեց Պիպին ու թափահարեց իր մեծ գլխարկը:— Լավ հասա բազմակապտությանը:

Թոմին ու Անիկան պատմել էին իրենց ֆրյոկենին, որ մի նոր աղջիկ է գալու, անունը՝ Երկարագուլպա Պիպի: Այդ փոքրիկ քաղաքում ֆրյոկենն արդեն շատ բաներ էր հասցրել լսել Պիպիի մասին: Ու քանի որ նա շատ բարի ու հրաշալի ֆրյոկեն էր, որոշել էր ամեն ինչ անել, որ Պիպին ընտելանա և սիրի դպրոցը:

Պիպին առանց որևէ մեկի

թույլտվությանը սպասելու փռվեց մի ազատ նստարանի վրա: Բայց ֆրյոկենն իրեն չկորցրեց նման անկիրթ վերաբերմունքից: Նա միանգամայն բարեկամաբար ասաց.

— Բարի՛ գալուստ դպրոց, փոքրի՛կ Պիպի: Հուսով եմ՝ դպրոցը քեզ դուր կգա, ու դու այստեղ շատ բան կսովորես:

— Բա ոնց, ես էլ հուսով եմ՝ Նոր տարվա արձակուրդ կունենամ,— ասաց Պիպին:— Դրա համար եմ եկել էստեղ: Արդարությո՛ւն ամեն ինչից առաջ:

— Չէիր ասի ինձ քո լրիվ անունը,— խնդրեց ֆրյոկենը,— որ քեզ գրանցեմ

դպրոցում:

— Պիպիլոտտա Սննդամթերինե Վարագույրինե Դաղձինե Էֆրաիմ դուխտ Երկարագուլպա: Նավապետ Էֆրաիմ Երկարագուլպայի՝ նախկինում ծովերի ահ ու սարսափի, իսկ այժմ՝ սևամորթների թագավորի աղջիկը: Պիպին իմ, այսպես ասած, փաղաքշական անունն է, որովհետև հայրիկս կարծում էր, թե Պիպիլոտտան շատ երկար է:

— Շատ լավ, — ասաց ֆրյոկենը, — ուրեմն մենք էլ քեզ Պիպի կասենք: Ի՞նչ կասես, եթե մենք հիմա մի քիչ ստուգենք քո գիտելիքները,— շարունակեց նա:— Դու արդեն մեծ աղջիկ ես ու անպայման շատ բան

գիտես: Երևի կարելի է սկսել թվաբանությունից: Դե, Պիպի, կարո՞ղ ես ինձ ասել, ի՞նչ կստացվի 7-ին գումարած 5:

Պիպին ապշած ու դժգոհ նրան նայեց.

— Եթե դու ինքդ չգիտես, չկարծես, թե ես պատրաստվում եմ ասել քեզ:

Բոլոր երեխաները վախեցած աչքերը հառեցին Պիպիին: Իսկ ֆրյոկենը բացատրեց, որ դպրոցում չի կարելի այդպես պատասխանել: Չի կարելի ուսուցչուհուն «դու» ասել, նրան ընդունված է կոչել «ֆրյոկեն»:

— Ներողություն,— հուզված ասաց Պիպին,— ես չգիտեի: Էլ էդպես չեմ

անի:

— Հույս ունեմ, որ չես անի,— ասաց ուսուցչուհին:— Ուրեմն ասեմ քեզ, որ 7-ին գումարած 5 հավասար է 12-ի:

— Մի սրա՛ն տեսեք, է,— վրա տվեց Պիպին:— Եթե դու ինքդ գիտեիր, էլ ինչու էիր ինձ հարցնում: Վայ, ինչ հիմար եմ, էլի քեզ «դու» ասեցի: Ներողություն,— ասաց Պիպին, ու ինքն իր ականջին մի լավ հասցրեց:

Ֆրյոկենը որոշեց ձևացնել, թե ոչինչ չի եղել: Ու շարունակեց.

— Դե, Պի՛պի, ինչ ես կարծում, ինչ կստացվի 8-ին գումարած 4:

— Երևի ինչ-որ 67:

— Սխալվում ես,— ասաց Ֆրյոկենը,— 8-ին գումարած 4 հավասար է 12-ի:

— Չէ, հարգելի՛ս, էդ մեկն արդեն շատ կլինի,— բորբոքվեց Պիպին:— Դու ինքդ հենց նոր ասացիր, որ 7- ին գումարած 5 հավասար է 12-ի: Դպրոցո՞ւմ էլ կարգ ու կանոն չլինի: Վերջապես, եթե քո ուշքը գնում է էդ հիմարությունների համար, հանգիստ նստի՛ր մի անկյունում ու ինքդ թեզ համար հաշվի՛ր, մեզ էլ հանգի՛ստ թող, որ բռնոցի խաղանք: Է՜հ, նոր էլի քեզ «դու» ասացի,—սարսափահար գոչեց նա:— Ես վերջին անգամը կներես ինձ, ես էլ հետագայում կփորձեմ չմոռանալ:

Ուսուցչուհին ասաց, որ կների: Չնայած չէր կարծում, թե իմաստ ունի շարունակել թվաբանություն սովորեցնել Պիպիին: Փոխարենը սկսեց մյուս երեխաներին հարցնել.

— Տեսնենք Թոմին կպատասխանի իմ այս հարցին,— սկսեց նա: — Եթե Լիզան ունի 7 խնձոր, իսկ Ակսելը՝ 3, քանի խնձոր կունենան նրանք միասին:

- Հա՛, դե ասա,— միջամտեց Պիպին:— Ու համ էլ կարող ես ինձ միաժամանակ ասել, եթե Լիզան փորացավ ունենա, Ակսելի փորն էլ ավելի շատ ցավի, ո՞ւմ մեղքով կլինի, և որտեղից էին նրանք էդ խնձորները թռցրել:

Ֆրյոկենը փորձեց ձևացնել, թե ոչինչ չի լսել ու շրջվեց դեպի Անիկան.

— Հիմա, Անիկա, քեզ մի խնդիր. Գուստավը իր ընկերների հետ գնացել էր քաղաքից դուրս: Գնալիս նա 1 կրոնա[2] ուներ, իսկ վերադարձին՝ ընդամենը 7 օրե[3] : Որքա՞ն էր նա ծախսել:

— Ճիշտ է,— ասաց Պիպին,— իսկ ինձ էլ հետաքրքրում է, թե ինչի՞ էր նա էդքան աջ ու ձախ շռայլել ու առաձն էլ մի օշարակ էր, թե ինչ, եթե ականջները լվացել էր տնից դուրս գալուց առաջ:

Ուսուցչուհին որոշեց ընդհանրապես վերջ տալ թվաբանությանը: Նա

մտածեց, որ Պիպին երևի ավելի հաճույքով կարդալ կսովորի: Դրա համար նա ոզնի պատկերող մի փոքրիկ սիրուն նկար հանեց: Ոզնու քթի դիմաց «Ո» տառն էր:

— Դե՛, Պի՛պի, հիմա դու մի զվարճալի բան կտեսնես,— աշխուժորեն ասաց նա:— Ահա տեսնո՞ւմ ես՝ ո-ո-ո-ոզնի: Ոզնու դիմացի տառն էլ կոչվում է «Ո»:

— Երբեք մտքովս չէր անցնի,— զարմացավ Պիպին: Ես կարծում եմ, դա ավելի շուտ պայտի է նման: Բայց ինձ չափազանց հետաքրքրում է, թե դա ոզնու ինչ՞ն է պետք:

Ֆրյոկենը հանեց հաջորդ՝ օձ

պատկերող նկարը ու բացատրեց Պիպիին, որ դիմացի տառը Օ-ն է:

— Որ օձերի մասին խոսք գնաց, ասեմ,— լեզվին ազատություն տվեց Պիպին,— որ երբեք չեմ մոռանա, թե ոնց մի անգամ Հնդկաստանում կռվի բռնվեցի մի սարսափելի օձի հետ: Չեք պատկերացնի, թե ինչ հսկայական օձ էր. 14 մետր երկարություն ուներ ու մեղվի նման կատաղած էր և ամեն օր հինգ հատ հնդիկ էր ուտում, երկու երեխա էլ քաղցրեղենի փոխարեն: Մի օր եկավ ինձ ուտելու՝ որպես քաղցրեղեն, շուրջս փաթաթվեց՝ շրջիկ, «բայց իմ հախից էդքան հեշտ չես զա»,— ասացի ես ու մի հատ հասցրի գլխին

՝ բոմփ, ինքը վրաս հո չֆշշացրեց՝ ֆըշշշշ՛ մի հատ էլ խփեցի՝ բոմփ, ու փոքւի՝ օձը շունչը փչեց: Էս էլ մեր «Օ» տառը. շատ նշանավոր տառ է:

Պիպին պիտի մի վայրկյան շունչ քաշեր: Քանի որ ուսուցչուհին արդեն սկսել էր մտածել, որ Պիպին աղմկոտ ու հոգս պատճառող երեխա է, դասարանին առաջարկեց նկարչությամբ զբաղվել վստահ լինելով, որ Պիպին սուսուփուս կնստի ու կնկարի: Եվ նա թղթեր ու մատիտներ բաժանեց երեխաներին:

— Կարող եք նկարել՝ ինչ որ ուզում եք,— ասաց նա ու նստեց ամբիոնի մոտ՝ տետրերը ստուգելու: Որոշ ժամանակ անց գլուխը բարձրացրեց՝

տեսնելու, թե ինչպես է ընթանում նկարչությունը: Բոլոր երեխաները նստած նայում էին գետնին փռված ու ինքնամոռաց նկարող Պիպիին:

— Բայց, Պիպի,— համբերությունը կորցրեց ուսուցչուհին,— ինչու թղթի վրա չես նկարում:

— Էդ թուղթը ես վաղուց ծերից ծեր նկարել-պրծել եմ, բայց իմ ձին դրա վրա չի տեղավորվում,— բացատրեց Պիպին:— Հիմա էլ առջևի ոտքերով եմ զբաղված, իսկ երբ պոչին հասնեմ, պիտի միջանցք դուրս գամ:

Ֆրյոկենը մի որպե կենտրոնացած մտածում էր՝ ինչ անի:

— Ի՞նչ եք կարծում, փոխարենը մի

երգ չերգենք,— առաջարկեց նա:

Երեխաները կանգնեցին նստարանների մոտ՝ բացի Պիպիից, որը մնաց հատակին պառկած:

— Դուք երգեք, ես էլ մի քիչ հանգստանամ,— ասաց նա:— Չափից շատ գիտելիքները նույնիսկ ամենաառողջին կվնասեն:

Դրանից ուսուցչուհին վերջնականապես կորցրեց համբերությունը: Նա բոլոր երեխաներին խնդրեց դուրս գնալ, որովհետև ուզում էր Պիպիի հետ առանձին խոսել:

Երբ նրանք մենակ մնացին, Պիպին բարձրացավ տեղից ու մոտեցավ

ամբիոնին:

— Գիտեմ ինչ,— ասաց նա,— Ֆրյոկեն, ես ուզում եմ ասել ահավոր զվարճալի էր գալ ու տեսնել, թե ինչով եք էստեղ զբաղվում: Բայց չեմ կարծում, թե էլի հավես կունենամ դպրոց գալու: Իսկ ձմեռային արձակուրդը ինչ լինում է՝ լինի: Չափից դուրս շատ էին էդ խնձորները, ոզնիները, օձերն ու նման բաները: Արդեն գլուխս պտտվում է դրանցից: Հույս ունեմ, Ֆրյոկեն, որ չես նեղանա:



Բայց ֆրյոկենն ասաց, որ ինքը շատ է տխրում: Տխրում է, որ Պիպին բոլորովին չփորձեց իրեն կարգին պահել, և որ Պիպիի նման վարք ունեցող ոչ մի աղջկա թույլ չեն տա դպրոց հաճախել, եթե անգամ շատ ուզենա:

— Ես ինձ վմտ եմ պահել,— անկեղծորեն զարմացավ Պիպին:— Վայ, իսկ ես չգիտեի,— ասաց նա սարսափելի տխուր տեսքով: Ոչ մեկը չէր կարող այնքան տխուր տեսք ունենալ, ինչպես Պիպին, երբ իսկապես տխուր էր: Նա մի վայրկյան լուռ կանգնեց, հետո դողացող ձայնով ասաց.

— Գիտես, Ֆրյոկեն, եթե մեկի մայրիկը հրեշտակ լինի, հայրիկն էլ՝ սևամորթների թագավոր, ինքն էլ ամբողջ կյանքը ծովի վրա անցկացրած՝ էլ որտեղից իմանա, թե ոնց պահի իրեն էդ բոլոր խնձորների ու ոզնիների հետ:

Ֆրյոկենն ասաց, որ հասկանում է ու այլևս չի բարկանում Պիպիի վրա, և որ Պիպին երևի կարողանա գալ դպրոց, երբ մի քիչ մեծանա:

Այդ ժամանակ Պիպին արդեն մի քիչ գոհ դեմքով ասաց.

— Իմ կարծիքով՝ դու սարսափելի բարի ես, Ֆրյոկեն: Ու խնդրեմ, վերցրու, սա՝ իմ կողմից:

Պիպին գրպանից մի փոքրիկ, սիրունիկ ոսկե զանգակ հանեց ու դրեց սեղանին: Ֆրյոկենն ասաց, որ չի կարող այդքան թանկարժեք նվերն ընդունել, բայց Պիպին ասաց.

— Պիտի վերցնես, թե չէ ես վաղը առավոտյան նորից կգամ ու մի կարգին ներկայացում կսարքեմ:

Հետո դուրս եկավ դպրոցի բակ ու ցատկեց ձիու մեջքին: Բոլոր երեխաները խմբվեցին նրա շուրջը, որ շոյեն ձիուն ու տեսնեն, թե ոնց է Պիպին մեկնելու:

— Ես Արգենտինայի դպրոցներին ծանոթ եմ,— թամբին հարմար տեղավորվելով՝ ասաց Պիպին:— Ա՛յ

էստեղ պիտի սովորեիք: Նրանց մոտ ձմեռային արձակուրդը վերջանում է, ու երեք օր հետո սկսվում է Զատիկի արձակուրդը, երբ դա էլ վերջանում է, երեք օր է մնում ամառվա արձակուրդին: Ամառային արձակուրդն էլ վերջանում է նոյեմբերի 1-ին, դրանից հետո կարգին տանջվում են, մինչև որ նոյեմբերի 11-ին սկսվում է ձմեռային արձակուրդը: Բայց դա էլ ոչինչ, որովհետև ոչ մի դաս չեն ունենում: Արգենտինայում խիստ արգելված է դաս անելը: Դե ոնց չէ, մեկ-մեկ պատահում է, որ արգենտինացի մի երեխա թաքնվում է պահարանում ու էստեղ թաքուն դաս է անում, բայց

վայ նրան, եթե հանկարծ մայրը հայտնաբերի:

Նրանց դպրոցներում թվաբանություն ընդհանրապես չկա, իսկ եթե մեկնումեկն իմանա՝ 7-ին գումարած 5 ինչ կստացվի, ամբողջ օրն անկյուն կկանգնի, եթե, իհարկե, էնքան հիմար լինի, որ ֆրյոկենին ասի: Ընթերցանությունը միայն ուրբաթ օրերին է, էն էլ եթե գիրք կա կարդալու: Բայց դե գիրք չի լինում երբեք:

— Լավ, բա այդ դեպքում ինչ են անում դպրոցում,— զարմացավ մի փոքրիկ տղա:

— Կոնֆետ են ուտում,— վստահ

ասաց Պիպին։— Մոտակա կոնֆետի գործարանից մի երկար խողովակ են անցկացրել մինչև դպրոցի դահլիճ ու ամբողջ օրը կարամելը հոսում է դպրոց, էնպես որ երեխաները հազիվ են հասցնում ուտել։

— Իսկ ուսուցչուհին ինչ է անում,— հետաքրքրվեց մի աղջիկ։

— Կոնֆետի թղթերն է բացում երեխաների համար, հիմարիկ,— պարզաբանեց Պիպին,— քո կարծիքով՝ նրանք ինքնուրույն պիտի բացեն։ Միամիտ եք գտել։ Նրանք դպրոց էլ չեն գնում։ Իրենց փոխարեն փոքրիկ եղբորն են ուղարկում։

Պիպին թափահարեց իր հսկա

գլխարկը:

— Հաջողություն ձեզ, երեխեք,— զվարթ գոչեց նա,— Էլ ինձ չեք տեսնի: Բայց միշտ լավ հիշեք՝ քանի խնձոր ուներ Ակսելը, թե չէ ձեզ դժբախտ կզգաք: Հա՛-հա՛-հա՛,— լսվեց Պիպիի զրնգուն ծիծաղը, ու երբ նա ձին դարպասից դուրս քշեց, քարեր էին թռչում ձիու սմբակների տակից, իսկ դպրոցի պատուհանները զրնգում էին:

Գլուխ 5. ՊԻՊԻՆ ԲԱՐՁՐԱՆՈՒՄ Է ԴԱՐՊԱՍԻ ՎՐԱ ՈՒ ԾԱՌ Է ՄԱԳԼՑՈՒՄ

Վիլլա Վիլեկուլայից քիչ հեռու նստած էին Պիպին, Թոմին ու Անիկան: Պիպին նստած էր դարպասի մի սյան վրա, Անիկան՝ մյուսի, իսկ Թոմին՝ դարպասի վրա: Օգոստոսի վերջի տաք ու հրաշալի օրերից էր: Դարպասին բավական մոտիկ աճող տանձենու ճյուղերն այնքան էին ցած կախվել, որ երեխաները կարող էին առանց ջանք գործադրելու նստած

տեղից պոկել այդ հրաշալի փոքրիկ դեղնակարմիր օգոստոսյան տանձերը: Նրանք ուտում ու կորիզները թքում էին ներքև՝ ճանապարհի վրա:

Վիլլա Վիլեկուլան գտնվում էր այդ փոքրիկ քաղաքի ծայրին, որտեղ քաղաքը վերջանում էր, և սկսվում էին արտերը, իսկ փողոցն էլ վերածվում էր մայրուղու:

Քաղաքի բնակիչները շատ էին սիրում Վիլլա Վիլեկուլայից այն կողմ զբոսնելու գնալ, որովհետև դրանք շրջապատի ամենագեղեցիկ տեղերն էին:

Ճիշտ այն ժամանակ, երբ

երեխաները, դարպասին թառած, տանձ էին ուտում, քաղաքից փողոցով դեպի իրենց քայլող մի աղջիկ տեսան: Երեխաներին տեսնելով՝ կանգնեց ու հարցրեց.

— Կարող է հայրիկիս տեսաք այստեղով անցնելիս:

— Հը՛մ,— ասաց Պիպին,— ինչ տեսք ուներ: Կապույտ աչքերով էր:

— Հա,— գլխով արեց աղջիկը:

— Միջին չափի. ոչ շատ բոյով, ոչ շատ կարճ:

— Ըհը,— հաստատեց աղջիկը:

— Սև գլխարկով ու սև կոշիկներով:

— Հա, հա, ճիշտ այդպիսին է,— աղջիկը եռանդագին գլխով արեց:

— Չէ՛, էդ տեսակ մեկին չենք տեսել,— վստահ ասաց Պիպին:

Աղջիկն ապշած կանգնեց, հետո առանց որևէ բան ասելու շարժվեց առաջ:

— Սպասիր,— հետևից գոռաց Պիպին,— ճաղատ հո չէ՞ր:

— Չէ, ճաղատ չէր,— նեղսրտած ասաց աղջիկը:

— Ավելի լավ իր համար,— տանձի կորիզը թքելով՝ ասաց Պիպին:

Աղջիկն արագ հեռանում էր, իսկ Պիպին նորից գոռաց հետևից.

— Կարող է սարսափելի մեծ ականջներ ուներ՝ համարյա ուսերին հասնող:

— Չէ,— զարմանքից շրջվեց աղջիկը: — Հո չեմ ուզում ասել, թե մեկին տեսել ես էդպիսի մեծ ականջներով անցնելիս:

— Երբեք էլ չեմ տեսել, որ մարդ ականջներով քայլի,— ասաց Պիպին:

— Էհ, դմբոյի մեկը, ասում էի՝ դու իսկապես այդքան մեծ ականջներով մարդ ես տեսել:

— Չէ,— ասաց Պիպին,— Էդքան մեծ ականջներով մարդ չկա: Անհնար բան է: Ինչ տեսք կունենար: Մարդ չի կարող էդպիսի մեծ ականջներ

ունենալ: Համենայն դեպս, ոչ մեր երկրում,— ավելացրեց մի պահ մտածելուց հետո:— Ա՛յ, Չինաստանում ուրիշ է: Մի անգամ Շանհայում հանդիպեցի մի չինացու: Էնքան մեծ էին ականջները, որ հանգիստ կարող էր անձրևանոցի տեղ օգտագործել: Անձրևի ժամանակ նա ուղղակի մտնում էր ականջների տակ ու վերջ: Նման ականջներ ունենալը, իհարկե, հրաշալի է: Իսկ թե սարսափելի վատ եղանակ էր լինում, նա միշտ իր ընկերներին ու ծանոթներին հրավիրում էր պատսպարվելու իր ականջների տակ: Նրանք նստում ու երգում էին իրենց տխուր երգերը,

վերևում էլ տեղատարափ անձրև էր: Նրան շատ էին սիրում այդ ականջների համար: Հայ Շանգ էր անունը: Արժեր տեսնել ոնց էր Հայ Շանգը առավոտները շտապում գործի: Ու միշտ էլ վերջին րոպեին էր հասնում, որովհետև շատ էր սիրում երկար քնել: Չեք պատկերացնի՝ ինչ անուշիկ տեսք ուներ, երբ քառատրոփ վազում էր, ականջներն էլ երկու դեղին առագաստների նման ծածանվում էին հետևից:

Աղջիկը բերանը բաց, ապշահար կանգնել ու լսում էր Պիպիին: Թոմին ու Անիկան տանձ ուտելը դադարեցրել էին: Նրանք էլ էին կլանված լսում:

— Հայ Շանգը անթիվ-անհամար երեխաներ ուներ, ամենափոքրի անունն էլ՝ Պետեր:

— Լավ, բայց ինչ կարող էր չինացի երեխայի անունը Պետեր լինել,— առարկեց Թոմին:

— Նրա կինն էլ էր նույնը ասում՝ «չինացի երեխայի անունը չի կարելի Պետեր դնել»: Բայց Հայ Շանգն անտանելի համառությամբ պնդում էր, թե՝ միևնույն է, կամ անունը Պետեր պիտի լինի, կամ ընդհանրապես ոչինչ: Ասում ու քաշվում էր մի անկյուն և սկսում իր ականջները քաշքշել: Էդ ժամանակ, պարզ է, նրա խեղճ կինը արդեն ստիպված տեղի է տալիս, ու

երեխայի անունը դնում են Պետեր:

— Հետո՞,— չի համբերում Անիկան:

— Ամբողջ Շանհայում ավելի կամակոր տղա անհնար էր գտնել,— շարունակեց Պիպին:— Ուտելու հարցում էնքան քմահաճ էր, որ մայրը չէր իմանում՝ ինչ աներ: Դե գիտեք, չէ, Չինաստանում ծիծեռնակի բույն են ուտում: Ու մայրը, մի աման լիքը ծիծեռնակի բույն լցրած, պիտի նրան կերակրեր. «Ըհը, փոքրիկ Պետեր, հիմա մի գդալ ուտենք հայրիկի համար»: Բայց Պետերը միայն բերանն էր սեղմում ու գլուխը տարուբերում: Վերջը Հայ Շանգն ահավոր բարկանում ու արգելում է Պետերի համար ուրիշ

ճաշ պատրաստել, մինչև որ հայրիկի համար մի հատ ծիծեռնակի բույն չուտի: Իսկ որ Հայ Շանգի ասածն ասած էր՝ բոլորը գիտեին:

Միևնույն ծիծեռնակի բույնը խոհանոցից տարան-բերեցին մայիսից մինչև հոկտեմբեր: Հուլիսի 14-ին տղայի մայրը Հայ Շանգին աղաչեց, որ թույլ տա Պետերին երկու մսագնդիկ տալ, բայց նա ասաց՝ ոչ:

— Հիմարություն,— ասաց փողոցում կանգնած մսացած աղջիկը:

— Հա, Հայ Շանգը հենց էդպես էլ ասաց,— շարունակեց Պիպին:— Հիմարություն,— ասաց նա:— Մի ծիծեռնակի բույնն ինչ է, որ երեխան

չուտի, թույլ չեմ տա՝ անընդհատ իր էշը քշի։— Բայց Պետերը միայն ավելի ամուր էր սեղմում բերանը ու չբացեց մայիսից մինչև հոկտեմբեր։

— Բա ինչ կարող էր էդքան երկար ժամանակ չուտել ու ողջ մնալ,— զարմացավ Թոմին։

— Չէր կարող մնալ,— ասաց Պիպին։— Մեռավ։ Ուղղակի համառությունից։ Հոկտեմբերի 18-ին, 19-ին էլ թաղեցին։ Իսկ 20-ին մի ծիծեռնակ թռավ մտավ պատուհանից ներս ու սեղանին մնացած ծիծեռնակի բնի մեջ ձու դրեց։ Էնպես որ, ամեն դեպքում բնից մի օգուտ եղավ, իզուր չկորավ,— գոհունակությամբ ասաց Պիպին։ Հետո կասկածանքով նայեց

չափազանց շվարած աղջկան:

— Ինչ տարօրինակ տեսք ունես,— ասաց Պիպին:— Ասելիքդ ինչ է: Չլինի կարծում ես, թե ես էստեղ նստած փչում եմ: Հը՛, ասա տեսնեմ,— սպառնալի ձայնով ասաց Պիպին ու թևերը քշտեց:

— Չէ, ինչ ես ասում,— վախեցավ աղջիկը,— ես բոլորովին էլ չէի ուզում ասել, թե դու հորինում ես, ուղղակի...

— Ուղղակի,— ընդհատեց Պիպին,— ես հենց էդ գործին եմ: Էնպիսի ստեր եմ հորինում, որ լեզուս հիմա բերանումս կչորանա: Եվ դու էլ հավատացիր, որ հնարավոր է երեխան մայիսից հոկտեմբեր առանց

ուտելու ապրի: Ամեն դեպքում, հաստատ գիտեմ, որ առանց ուտելու հնարավոր է մի 3-4 ամիս լավ թե վատ դիմանալ, բայց մայիսից մինչև հոկտեմբեր, արդեն շատ կլինի Դե՛, հասկանում ես, չէ՞, որ սուտ կլինի: Չպիտի թույլ տաս, որ քեզ հիմարացնեն:

Աղջիկը շտապեց գնալ առանց հետ նայելու: -- Մարդիկ ինչ հեշտ են խաբվում,— Պիպին դարձավ Թոմիին ու Անիկային:— Մայիսից հոկտեմբեր, ինչ հիմարություն:

Ու գոռաց աղջկա հետևից.

— Չէ, պապայիդ չենք տեսել: Էսօր ամբողջ օրը ոչ մի քաչալ մարդ չենք

տեսել: Այ երեկ ձեռք ձեռքի տված՝ տասնյոթ հոգի անցան:

Պիպիի այգին իսկապես հիասքանչ էր: Այն անհնաամ էր, բոլորովին անհնաամ, բայց հողը պատված էր հրաշալի կանաչ խոտագորգով, որ երբեք չէին խուզում, ու վարդերի մեծ թփերով, որոնց վրա առատորեն աճում էին տեսքից ոչ այնքան սիրուն, բայց արտակարգ հոտավետ վարդագույն, դեղին ու սպիտակ վարդեր: Իհարկե, շատ պտղատու ծառեր էլ կային, իսկ ամենահրաշալին այն էր, որ մի քանի հնամենի հաստաբուն կաղնի ու ծփի կային, որոնց վրա շատ հարմար էր մագլցելը:

Թոմիի ու Անիկայի այգում մագլցածառերի առումով վիճակը շատ վատ էր, իսկ նրանց մայրիկն էլ սարսափում էր այն մտքից, որ նրանք կարող են ընկնել ծառից ու վնասվել: Այդ էր պատճառը, որ նրանք մինչև հիմա այնքան էլ շատ առիթ չէին ունեցել ծառ բարձրանալու: Իսկ հիմա Պիպին առաջարկեց.

— Չգնանք էն կաղնին բարձրանանք:

Թոմին, առաջարկով հիացած, մի վայրկյան դարպասի վրայից ներքև նայեց: Անիկան մի քիչ ավելի երկար տատանվեց, բայց երբ տեսավ ծառի բազմաթիվ ելուստները, որոնք հեշտացնելու էին գործը, նույնպես

մտածեց, որ արժե փորձել:

Գետնից մեկ-երկու մետր բարձրության վրա ծառի բունը բաժանվում էր երկու մասի և այդ մասում մի փոքրիկ հարթ տեղ առաջացնում: Երկար ժամանակ չանցած՝ երեքն էլ տեղավորվեցին այդտեղ: Ծառը նրանց գլխավերևում կանաչ տանիքի նման տարածել էր իր սաղարթը:

— Էստեղ վատ չէր լինի սուրճ խմել,— ասաց Պիպին:— Թռնեմ սարքեմ մի որպեում:

Շատ չանցած՝ Պիպիի սուրճը պատրաստ էր: Իսկ բուլկիները նախորդ օրն էր թխել: Կանգնելով

կաղնու տակ՝ Պիպին սկսեց սուրճի բաժակները վերև նետել: Թոմին ու Անիկան ձեռք էին մեկնում, բռնում: Երբեմն էլ կաղնու բնին էին կպչում, և այդպես սուրճի երկու բաժակ ջարդվեց: Պիպին վազեց նորերը բերելու: Հետո հերթը հասավ բուլկիներին, ու մի քանի վայրկյան օդը լի էր բուլկիներով: Ամեն դեպքում դրանք չջարդվեցին: Վերջում Պիպին բարձրացավ՝ սուրճով լի թեյնիկը ձեռքին, սերուցքը՝ շշի մեջ, շաքարն էլ՝ փոքրիկ տոպրակում:

Թոմիի ու Անիկայի կարծիքով՝ մինչև հիմա երբեք այդքան համով սուրճ չէին խմել: Նրանք սովորաբար սուրճ չէին խմում, միայն հյուր գնալիս:

Հիմա էլ նրանք հյուր էին: Անիկան մի քիչ սուրճ թափեց ծնկին: Սկզբում տաք էր ու թաց, հետո՝ սառը ու թաց, բայց Անիկան ասաց՝ ոչինչ:

Երբ վերջացրին, Պիպին բաժակները նետեց խոտերի վրա:

— Ուզում եմ ստուգել՝ իսկապես ամուր են սարքում,— բացատրեց նա:

Բաժակներից մեկն ու բոլոր երեք ափսեները դիմացան փորձությանը: Միայն թեյնիկի քթիկը կոտրվեց:

Պիպին, ինչպես ենթադրվում է, իրեն հավատարիմ մնաց, սկսեց ավելի բարձր մագլցել:

— Տեսեք, տեսեք,— հանկարծ

բացականչեց Պիպին,— ես մի փչակ գտա: Իրոք, դա մի մեծ փչակ էր, որ սաղարթը թաքցրել էր կողմնակի հայացքից:

— Կարելի է՝ ես էլ բարձրանամ նայեմ, — ոգևորված գոչեց Թոմին, սակայն պատասխան չստացավ:— Պիպի. Որտեղ ես,— անհանգստացավ նա:

Այդ ժամանակ նրանք լսեցին Պիպիի ձայնը, բայց ոչ թե վերևից՝ ինչպես սպասում էին, այլ բավական ներքևից: Թվում էր, թե ձայնը գետնի տակից էր գալիս:

— Ես ծառի մեջ եմ: Փչակը մինչև գետին է հասնում: Էս փոքրիկ ճեղքից մի քիչ հեռու՝ խոտերին

ընկած թեյնիկը երևում է:

— Վա՛յ, ոնց ես դուրս գալու,— վախեցավ Անիկան:

— Էլ երբեք դուրս չեմ գա,— ասաց Պիպին:— Էստեղ կմնամ մինչև թռշակի անցնելը: Դու էլ վերևի ծակից ինձ համար ուտելիք կգցես, օրը՝ 5-6 անգամ:

Անիկան սկսեց լաց լինել:

— Ի՞նչ ես լացուկոծ անում,— հանգստացրեց Պիպին:— Ավելի լավ կլինի՝ դուք գաք ներքև, ու մենք կպատկերացնենք, որ մեզ բանտարկել են:

— Կյանքում չեմ գա,— ասաց Անիկան

և ապահովության համար ընդհանրապես ծառից իջավ:

— Անիկա, ճեղքից դու երևում ես,— գոչեց Պիպին:— Զգո՛ւյշ, թեյնիկը չտրորես: Հին ու որակյալ թեյնիկ է, դրա նման հիմա չեն սարքում: Ափսոս, որ էլ չենք կարող օգտագործել, քթիկը ջարդվել է:

Անիկան մոտեցավ ծառի բնին ու փոքրիկ ճեղքից տեսավ Պիպիի ցուցամատի ծայրը: Դա մի քիչ սփոփեց նրան, բայց, միևնույն է, դեռ անհանգստանում էր:

— Պի՛պի, դու իսկականից չես կարող դուրս գալ,— հարցրեց նա:

Պիպիի ցուցամատն անհետացավ, ու

քիչ անց վերևից՝ ծառի փչակից, երևաց նրա դեմքը:

— Երևի կարողանամ, եթե մի լավ փորձեմ,— ասաց նա՝ ձեռքերով հեռացնելով ծառի ճյուղերը:

— Դուրս գալն այդքան հեշտ էր,— հարցրեց դեռևս ծառին նստած Թոմին:— Դե որ այդպես է, ես էլ եմ ուզում ներքև իջնել ու մի քիչ ինձ բանտարկված զգալ:

— Հը՛մ,— ասաց Պիպին,— ինձ թվում է՝ լավ կլիներ աստիճան բերեինք:

Նա դուրս սողաց անցքից ու ճարպկորեն ցատկեց գետնին: Հետո վազեց սանդուղքի հետևից, քարշ տվեց, բարձրացրեց ծառի վրա ու

խցկեց փչակի մեջ:

Թոմին սարսափելի շատ էր ուզում մտնել այնտեղ: Իսկապես, դժվար էր փչակին հասնելը, որովհետև բավական բարձր էր, բայց Թոմին քաջ էր: Եվ ոչ էլ վախենում էր հայտնվել ծառի՝ այդ մութ բնի մեջ: Անիկան տեսավ, թե ինչպես Թոմին անհետացավ, ու վստահ չէր, թե էլի երբևէ կտեսնի նրան: Փորձեց ճեղքից ներս նայել:

— Անիկա, — լսեց նա Թոմիի ձայնը,— չես պատկերացնի՝ ինչ հրաշալի տեղ է: Դու պիտի անպայման գաս: Ոչ մի վախենալու բան չկա. աստիճան էլ կա, որ իջնես: Եթե մի անգամ փորձես, հետո ուրիշ ոչինչ չես ուզի

անել:

— Հաստատ,— չհավատաց Անիկան:

— Ճիշտ եմ ասում,— հաստատեց Թոմին:

Դրանից հետո միայն Անիկան համարձակվեց դողդողացող ոտքերով նորից ծառը բարձրանալ, իսկ Պիպին օգնեց նրան հաղթահարելու վերջին դժվար մասը: Նա հետ քաշվեց՝ փչակի միջի մթությունը տեսնելով, բայց Պիպին բռնել էր նրա ձեռք ու քաջալերում էր:

— Մի՛ վախեցիր, Անիկա,— ներքևից լսվեց Թոմիի ձայնը,— ես արդեն տեսնում եմ քո ոտքերը, ու եթե հանկարծ ընկնես, քեզ կբռնեմ:

Բայց Անիկան չընկավ, շատ բարեհաջող հասավ Թոմիին: Մի ակնթարթում նրան հասավ նաև Պիպին:

— Լավ տեղ է, չէ՞,— ասաց Թոմին:

Եվ Անիկան էլ պիտի խոստովաներ, որ իսկապես լավ տեղ էր: Այնքան էլ մութ չէր, որովհետև ճեղքից լույս էր թափանցում: Ճեղքին մոտենալով՝ Անիկան համոզվեց, որ երևում էր քիչ հեռվում՝ խոտերի վրա ընկած թեյնիկը:

— Սա կլինի մեր թաքստոցը,— ասաց Թոմին:— Ոչ մեկը գլխի չի ընկնի, որ մենք ներսում ենք: Իսկ եթե մեզ փնտրելիս մեկն անցնի կողքով, մենք

նրան կտեսնենք: Ա՛յ թե լավ կզվարճանանք:

— Մենք կարող ենք մի բարակ ճյուղ գտնել, ճեղքից դուրս հանել ու նրանց ծակել,— առաջարկեց Պիպին,— նրանք էլ կկարծեն, թե ուրվականն էր:

Այդ մտքից երեխաներն այնքան ուրախացան, որ երեքով իրար գրկախառնվեցին: Այդ պահին նրանք լսեցին Թոմիին ու Անիկային տուն՝ ճաշի կանչող զանգի ձայնը:

— Ափսոս,— ասաց Թոմին:— Արդեն պիտի տուն գնանք: Բայց վաղը՝ դպրոցից հետո, ուղիղ կգանք այստեղ:

— Եղավ,— ասաց Պիպին:

Եվ նրանք աստիճաններով բարձրացան վեր. սկզբում՝ Պիպին, հետո՝ Անիկան, ու վերջում՝ Թոմին: Իսկ հետո էլ ծառից իջան, սկզբում՝ Պիպին, հետո՝ Անիկան, ու վերջում՝ Թոմին:

Գլուխ 6. ՊԻՊԻՆ ԷՔՍԿՈՒՐՍԻԱ Է ԿԱՁՄԱԿԵՐՊՈՒՄ

—Այսօր մենք դպրոց չենք գնում,— ասաց Թոմին Պիպիին,— որովհետև շաբաթօրյակ է:

— Ըհը,— գոչեց Պիպին,— նորից անարդարություն: Ու ես ոչ մի շաբաթօրյակ չեմ ունենալու, ես, որ ամենաշատը դրա կարիքն ունեմ: Մի հատ նայեք՝ խոհանոցի հատակն ինչ օրի է: Բայց, ի վերջո,— մտածեց նա,— եթե ճիշտ եմ հասկանում, ուրեմն ամեն դեպքում կարող եմ

մաքրություն անել առանց ձեր այդ օրյակի: Ու հենց էդպես էլ կանեմ՝ շաբաթօրյակ լինի, թե չէ: Կուզեի տեսնել, թե ով կարող է ինձ խանգարել: Խոհանոցի սեղանին նստեք, որ ոտքի տակ չընկնեք:

Թոմին ու Անիկան հնազանդորեն տեղավորվեցին սեղանի վրա, պարոն Նիլսոնն էլ ցատկեց սեղանին ու պատրաստվեց քնելու Անիկայի ծնկներին: Պիպին մի հսկա կաթսայով ջուր տաքացրեց, որը հետո ամբողջությամբ շրջեց խոհանոցի հատակին: Հետո հանեց իր հսկա կոշիկներն ու զգուշորեն դրեց հացի ամանի մեջ: Երկու մեծ խոզանակ կապեց մերկ ոտքերին ու

սկսեց հատակով մեկ այնպես չմշկել, որ ամեն կողմ ցայտում էր, երբ նա կտրում-անցնում էր ջրի միջով:

— Ես պիտի չմշկավազքի չեմպիոն դառնայի,— հայտարարեց նա ու մի ոտքը այնպես բարձրացրեց, որ ոտքի խոզանակը կպավ ջահին ու մի կտոր ջարդեց:— Մեծ հաճույք ստացա, համենայն դեպս,— շարունակեց նա ու ճարպկորեն ցատկեց իր ճամփին դրված աթոռի վրայով:

— Տեսնենք, տեսնենք՝ հիմա արդեն ավելի մաքուր է,— վերջապես խոզանակները հանելով՝ ասաց նա:

— Չեն չորացնելու հատակը,— հետաքրքրվեց Անիկան:

— Չէ, թողնում եմ արևի տակ չորանա,— ասաց Պիպին:— Չեմ կարծում, որ դրանից հատակը մրսի, հիվանդանա, ուղղակի անընդհատ շարժվել է պետք:

Թոմին ու Անիկան սեղանից իջան ու ոտքերի ծայրերի վրա հնարավորինս զգույշ անցան հատակի վրայով, որ հանկարծ չթրջվեն:

Դրսում՝ պայծառ կապույտ երկնքում, շողշողում էր արևը: Սեպտեմբերյան այնպիսի պայծառ օրերից էր, երբ մարդ անտառ գնալու ցանկություն է ունենում: Պիպին միտք հղացավ.

— Ի՞նչ եք կարծում, չվերցնենք հետներս պարոն Նիլսոնին ու մի

փոքրիկ էքսկուրսիայի գնանք:

— Օ՛, հա՛, ուռա՛,— բացականչեցին Թոմին ու Անիկան:

— Դե, թռե՛ք, հարցրեք ձեր մայրիկին, — հրահանգեց Պիպին,— ես էլ էդ ընթացքում ուտելիքի հարցը լուծեմ:

Թոմիի ու Անիկայի կարծիքով՝ դա հրաշալի առաջարկ էր: Նրանք սլացան տուն ու, շատ չանցած, վերադարձան: Պիպին արդեն կանգնած էր դարպասի մոտ՝ պարոն Նիլսոնն ուսին, մի ձեռքին՝ ճամփորդական փայտը, մյուսին՝ մի մեծ զամբյուղ:

Երեխաները սկզբում մի քիչ քայլեցին մայրուղիով, բայց շուտով թեքվեցին

դեպի մարգագետինը ու շարունակեցին ճանապարհը կեչիների ու կաղնիների արանքով ոլորվող արահետով: Այսպես քայլելով հասան մի դարպասի, որից այն կողմ ավելի գեղեցիկ մի մարգագետին կար: Բայց դարպասի առջև մի կով էր կանգնել, որի տեսքից բոլորովին չէր երևում, թե ուզում է ճանապարհը զիջել: Անիկան վրան գոռաց, Թոմին խիզախորեն առաջ գնաց ու փորձեց քշել նրան, բայց կովն անգամ տեղից չշարժվեց, միայն անթարթ նայում էր երեխաներին իր խոշոր կովային աչքերով: Պիպին դրան վերջ տալու մտադրությամբ գետնին դրեց

զամբյուղը, առաջ գնաց, բարձրացրեց ու մի կողմ դրեց կովին, որը շփոթված անհետացավ պնդուկենիների հետևում:

— Էս ինչ հաստակողություն էր: Ո՞վ կմտածեր, որ կովերը կարող են էսքան եզանալ,— ասաց նա ու դարպասի վրայով ցատկեց:— Բա սրա վերջը ինչ կլինի: Պարզ է, եզներն էլ պիտի կովանան: Նույնիսկ մտածելն արդեն սարսափելի է:

— Ինչ սիրուն մարգագետին է,— հրճվում էր Անիկան՝ բարձրանալով իր տեսած յուրաքանչյուր քարի վրա:

Թոմին իր հետ վերցրել էր Պիպիի նվիրած դաշույնը և իր ու Անիկայի

համար մեկական ճամփորդական

փայտ կտրեց: Մի փոքր բութը վնասել էր, բայց դա իսկի չէր խանգարում:

— Մենք պիտի որ մի քիչ էլ սունկ քաղենք,- ասաց Պիպին ու մի գեղեցիկ կարմիր ճանճասպան պոկեց:— Տեսնես սա ուտելո՞ւ է: Ամեն դեպքում, սա հաստատ խմելու չի, ուրեմն, ինչքան գիտեմ, մեզ ուրիշ բան չի մնում անելու, քան ուտել սա: Երևի կստացվի,— եզրակացրեց նա, մի մեծ կտոր կծեց ու կուլ տվեց:

— Ստացվեց,— հիացած արձանագրեց նա:— Հա, բայց մյուս անգամ ճիշտ կլինի՝ խաշենք,—

վերջացրեց նա ու սունկը ծառերի կատարներից էլ վերև շպրտեց:

— Ի՞նչ կա զամբյուղում, Պի՛պի,— հարցրեց Անիկան,— ինչ-որ համով բան ունե՞ս:

— Հազար կրոնա էլ տան՝ չեմ ասի,— համառեց Պիպին:— Սկզբում ճաշելու համար մի կարգին տեղ գտնենք:

Երեխաները եռանդով սկսեցին այդպիսի տեղ փնտրել: Անիկան մի մեծ հարթ քար գտավ, որը, նրա կարծիքով, հարմար էր, բայց դրա վրա լիքը կարմիր մրջյուններ կային, և Պիպին ասաց՝ «դրանց մոտ չեմ ուզում նստել, որովհետև հետները ծանոթ չեմ»:

— Համ էլ կծում են,— լրացրեց Թոմին:

— Թո՛ղ կծեն, դու էլ նրանց կծիր:

Թոմին թփերի արանքում մի ազատ տեղ տեսավ ու մտածեց, որ լավ կլիներ այդտեղ տեղավորվել:

— Չէ, չի լինի, իմ արևասեր պեպենների՝ ավելի շատ արև է պետք, — ասաց Պիպին, — իմ կարծիքով պեպենոտ շատ սիրուն է:

Մի քանի քայլ հեռու բարձրանալու առումով մար փոքրիկ մի ժայռ կար, ժայռի վրա՝ մի փոքրիկ արևոտ հարթ տեղ՝ ճիշտ պատշգամբի նման:

Այդտեղ էլ տեղավորվեցին:

— Հիմա աչքերդ փակեք, մինչև ես

սեղան բացեմ, — ասաց Պիպին:

Թոմին ու Անիկան ամբողջ ուժով փակեցին աչքերը ու լսում էին, թե ինչպես է Պիպին բացում զամբյուղն ու խշխշացնում թղթերը:

— Մե՛կ, երկո՛ւ, երե՛ք, հիմա աչքերը բացե՛ք,— վերջապես ասաց Պիպին:

Եվ նրանք նայեցին: Ու հիացմունքից ճչացին, երբ տեսան այն բոլոր բարիքները, որ Պիպին փռել էր այդ մերկ ժայռի վրա: Դրանց մեջ կային մսագնդիկներով ու ապուխտներով փոքրիկ, սիրունիկ բուտերբրոդներ, բլիթների մի ամբողջ լեռ՝ վրան շաքարի փոշի, մի քանի հատ մուգ նրբերշիկ ու երեք հատ անանասով

պուդինգ: Զարմանալի չէր, որովհետև Պիպին եփել-թափելը սովորել էր իր հայրիկի նավի խոհարարից:

— Ա՛խ, ինչ հրաշալի բան է շաբաթօրյակը,— ասաց Թոմին՝ բերանը լիքը բլիթներ,— երանի ամեն օր լիներ:

— Չէ՛, գիտես ինչ,— ասաց Պիպին,— ես հո գիժ չեմ՝ էդքան մաքրություն անեմ: Զվարճալի է, ճիշտ է, բայց ամեն օր՝ չէ, կհոգնենք:

Ճաշկերույթի վերջում երեխաներն այնքան կուշտ էին, որ հազիվ էին կարողանում շարժվել և պարզապես նստել ու վայելում էին արևի

ջերմությունը:

— Տեսնես դժվար բան է թռչելը,— երազկոտ նայելով ժայռի եզրին՝ ասաց Պիպին: Արահետը կտրուկ վերջանում էր այդտեղ, իսկ մինչև գետինը բավական բարձր էր:

— Ճոբ պիտի մարդ կարողանա գոնե մի քիչ թռչել սովորել,— շարունակեց նա:— Հաստատ վերև թռչելն ավելի դժվար է: Բայց դե մարդ կարող է սկսել ամենահեշտ ձևից: Իմ կարծիքով՝ ես պիտի փորձեմ:

— Չէ՛, Պի՛պի,— միաժամանակ գոչեցին Թոմին ու Անիկան:— Խնդրում ենք, Պի՛պի, չանե՛ս:

Բայց Պիպին արդեն կանգնած էր

զառիթափի եզրին:

— Թռիր, այ հիմար ճանճ, թռիր, և հիմար ճանճը թռավ,— ասաց նա և հենց որ ասաց՝ թռավ, բարձրացրեց ձեռքերն ու մի քայլ արեց օդի մեջ: Կես վայրկյանից մի դմփոց լսվեց: Պիպին էր. խփվեց գետնին: Թոմին ու Անիկան, փորի վրա պառկած, սարսափահար ներքև նայեցին: Պիպին վեր կացավ ու ծնկները թափ տվեց:

— Մոռացա թևերս թափահարեմ,— գոհ դեմքով ասաց նա:— Համ էլ չափից շատ բլիթներ կան փորումս:

Հենց այդ պահին երեխաները նկատեցին, որ պարոն Նիլսոնն

անհետացել է: Հավանաբար նա մեն-մենակ փոքրիկ էքսկուրսիայի էր գնացել: Նրանք հիշում էին, որ նա մեծ հաճույքով նստած ծամծմում էր զամբյուղի ցցված ծղոտները, բայց Պիպիի թռչնավարժությունների ժամանակ բոլորովին մոռացել էին նրան, ու հիմա նա չկար: Պիպին ահավոր բարկացավ ու իր կոշիկներից մեկը շպրտեց մի մեծ, խոր ջրափոսի մեջ:

— Մարդ տեղ գնալիս երբեք չպիտի հետը կապիկներ վերցնի,— ասաց նա:— Պիտի տանը մնար ու ձի քշեր, էդ ճիշտ իր բանն է,— շարունակեց նա ու մտավ ջրափոսի մեջ՝ կոշիկը հանելու: Ջուրը նրա գոտկատեղին էր

հասնում:

— Ճիշտ որ ասենք, մարդ պիտի առիթից օգտվի ու մազերն էլ լվա,— ասաց նա ու գլուխը մտցրեց ջրի մեջ և պահեց այնքան ժամանակ, մինչև պղպջակներ երևացին:— Համ էլ էս անգամ պրծա վարսավիրանոց գնալուց, — գոհունակությամբ շարունակեց նա, հենց որ տեսանելի դարձավ: Հետո դուրս եկավ ջրափոսից ու կոշիկը հագավ: Եվ, այսպիսով, նրանք ճանապարհ ընկան՝ պարոն Նիլսոնին փնտրելու:

— Լսո՞ւմ եք, ոնց է վրայից կաթկթում, երբ քայլում եմ,— ծիծաղեց Պիպին:— Շորից կաթում է՝ կըլթ-կը՛լթ, կոշիկներիս մեջ լսվում է՝ ճը՛պ-ճը՛պ:

Իսկապես զվարճալի է: Իմ կարծիքով՝ դու էլ պիտի փորձես,— դիմեց նա շեկ խոպոպիկներով, սիրունիկ շրջազգեստով ու փոքրիկ սպիտակ կաշվե կոշիկներով Անիկային:

— Մի ուրիշ անգամ,— խուսանավեց Անիկան:

Նրանք շարունակեցին ճանապարհը:

— Պարոն Նիլսոնն ուղղակի կատաղեցնում է, — ասաց Պիպին:— Միշտ էսպես է պահում իրեն: Մի անգամ Սուրաբայայում փախել էր ինձնից ու ապաստարան խնդրել ինչ-որ ծեր այրիից: Էս վերջինը սուտ էր. գլխի ընկաք, չէ՞,— ավելացրեց նա մի

փոքր լռելուց հետո:

Թոմին առաջարկեց բաժանվել ու առանձին-առանձին փնտրել: Անիկան մի քիչ վախեցավ ու սկզբում հրաժարվեց, բայց Թոմին ասաց.

— Չլինի՞ վախենում ես:

Նման վիրավորանք Անիկան, պարզ է, չէր կարող հանդուրժել:

Այդպիսով երեքն էլ գնացին տարբեր ուղղություններով: Թոմին ընտրեց մարգագետնի միջով տանող արահետը: Ոչ մի պարոն Նիլսոնի չհանդիպեց, փոխարենը ուրիշ բան գտավ՝ ցուլ: Կամ, ավելի ճիշտ, ցուլը գտավ Թոմին և չհավանեց նրան, որովհետև դա մի կատաղած ու

մանուկներին առհասարակ չսիրող ցուլ էր: Նա դեպի տղան սլացավ գլուխն իջեցրած ու ոչ բարեկամական փնչոցով, որ Թոմին սարսափից ամբողջ անտառով մեկ մի ահասարսուռ ճիչ արձակեց: Պիպին ու Անիկան նույնպես լսեցին ու վազեցին տեսնելու, թե ինչ է նշանակում Թոմիի այդ ծղրտոցը: Այդ ժամանակ ցուլը, որ արդեն հասցրել էր Թոմիին պոզերով բարձրացնել, վեր շպրտեց նրան:

— Էս ցուլն իսկի խելամիտ չի,— ասաց Պիպին հուսահատությունից հեծկլտացող Անիկային:— Չի կարելի էդպիսի բաներ անել: Ախր Թոմիի սպիտակ նավաստիական զգեստը

լրիվ կեղտոտվել է: Ես պիտի գնամ խելքի բերեմ էդ հիմար կենդանուն:

Այդպես էլ արեց: Առաջ վազեց ու ցուլի պոչից քաշեց:

— Կներես, որ ընդհատում եմ,— ասաց նա ու որովհետև շատ ուժեղ էր քաշել, ցուլը շրջվեց ու մի ուրիշ երեխա տեսավ, որին նույնպես ուզեց պոզահարել:

— Ոնց որ նոր ասեցի, կներես, որ գործից կտրեցի,— կրկնեց Պիպին:— Համ էլ կներես, որ պոզդ կոտրեցի,— ավելացրեց նա ու պոկեց ցուլի պոզերից մեկը:— Էս տարի երկու պոզը մոդա չի: Էս տարվա լավագույն ցուլերը մի պոզով են ման

գալիս: Եթե ընդհանրապես ունեն,— ասաց ու մյուս պոզն էլ պոկեց:

Քանի որ ցուլերի պոզերը բոլորովին նյարդեր չունեն, ուստի ցուլը պոզերի կորուստը չնկատեց: Եվ սկսեց ամբողջ ուժով պոզահարել, ու եթե Պիպիի փոխարեն ուրիշը լիներ, խեղճից ոչինչ չէր մնա:

— Հա՛-հա՛-հա՛, խուտուտ տալուն վերջ տուր,— գոռում էր Պիպին:— Չես պատկերացնի՝ ոնց եմ խուտուտից վախենում, հա՛-հա՛, պրծի՛, թե չէ ծիծաղից կմեռնեմ:

Բայց ցուլը չէր դադարեցնում, ու Պիպին թռավ նրա մեջքին, որ մի վայրկյան հանգստանա: Ավելի

երկար, պարզ է, չէր կարող հանգստանալ, որովհետև Պիպին մեջքին պահելը ցուլին բոլորովին դուր չէր գալիս: Նա ամենակատաղի ոստյուններն էր անում Պիպին մեջքից գցելու համար, բայց Պիպին միայն ոտքերով խփում էր ու շարունակում նստած մնալ: Ցուլը մարգագետնով մեկ հետուառաջ էր վազում ու այնպես բառաչում, որ քթածակերից ծուխ էր դուրս գալիս: Պիպին ծիծաղում էր, ճչում և ձեռքով անում հեռվում կանգնած ու աշնան տերևի նման դողդողացող Թոմին ու Անիկային:

Ցուլը պտտվում ու պտտվում էր՝ փորձելով Պիպին վրայից գցել:

— Ես պարում եմ իմ փոքրիկ բարեկամի հետ,— երգում էր Պիպին ու շարունակում նստած մնալ: Վերջում ուժասպառ եղած ցուլը գետնին ընկավ, և միայն երազում էր, որ աշխարհի բոլոր երեխաներն անհետանան: Նա ընդհանրապես երեխաների գոյության անհրաժեշտությունը չէր զգում:

— Ուզում ես կեսօրվա քունդ առնել,— սիրալիր հարցրեց Պիպին,— էդ դեպքում չեմ խանգարի:

Նա իջավ ցուլի մեջքից ու գնաց Թոմիի ու Անիկայի մոտ: Թոմին մի քիչ լաց էր եղել: Նրա թևին վերք կար, բայց Անիկան իր թաշկինակը փաթաթել էր, այնպես որ էլ չէր

ցավում:

— Օ՜, Պիպի,— հուզված գոչեց Ավիկան, երբ Պիպին մոտեցավ:

— Շ-շ-շ-շ,— շշնջաց Պիպին,— չարթնացնես ցուլին: Քնած է, իսկ եթե արթնանա, ուղղակի անտանելի կլինի:

— Պարոն Նիլսոն, որտեղ ես,— վերջին անգամ կանչեց նա չափազանց բարձր ձայնով՝ բոլորովին չինայելով ցուլի կեսօրյա քունը: — Գնում ենք տուն:

Եվ հենց այդ ժամանակ տեսան սոճու վրա նստած պարոն Նիլսոնին: Նա իր պոչն էր կծմծում ու շատ տխուր տեսք ուներ: Որովհետև

այդպիսի փոքրիկ կապիկի համար, իհարկե, հաճելի բան չէ անտառում մենակ մնալը: Նա արագ թռավ սոճու վրայից, բազմեց Պիպիի ուսին ու սկսեց թափահարել իր ծղոտե գլխարկը, ինչպես անում էր անչափ ուրախության ժամանակ:

— Լավ է՝ էս անգամ ապաստարան չես խնդրել,— ասաց Պիպին ու շոյեց կապիկի մեջքը:— Էհ, պարզ է, սուտ եմ ասում,— և ավելացրեց:— Որովհետև եթե ճիշտ լիներ, պարզ է, սուտ չէր լինի,— շարունակեց նա իր մտորումները:— Տեսեք, եթե ամեն ինչ հաշվի առնենք, շատ էլ հնարավոր է, փաստորեն, որ նա Սուրաբայայում փախստական լիներ: Ու ես գիտեմ՝

սրանից հետո մսագնդիկներ սարքելու գործը ում ենք տալու:

Վերջապես նրանք ճանապարհվեցին տուն, Պիպին՝ դեռևս ճլթճլթացող զգեստով ու ճպճպացող կոշիկներով: Թոմիի ու Անիկայի կարծիքով, չնայած ցուլի հետ հանդիպմանը, հրաշալի օր էին անցկացրել ու երգում էին դպրոցում սովորած մի երգ: Չնայած այն ամառվա մասին էր, իսկ այդ ժամանակ արդեն համարյա աշուն էր, բայց նրանց կարծիքով, միևնույն է, երգը տեղին էր:

Ամառային տաք օրերին

Գնում ենք մենք անտառներով ու դաշտերով.

Ճամփան դժվար է, բայց ոչ մեկը չի դժգոհում

Ուր գնում ենք, երդում ենք մենք՝ էհեյ, էհեյ:

Դու, որ ջահել ես,

Միացիր մեզ ու երգիր,

Մի՛ մնա տանը հիմարի պես:

Երգողների ջոկատը մեր

Նվաճում է գագաթները

Բարձր-բարձր բլուրների.

Ամառային տաք օրերին

Ուր էլ որ գնում ենք, երգում ենք մենք՝ էհեյ, էհեյ:

Պիպին, անշուշտ, նրանց հետ երգում էր, բայց նրա երգի բառերը մի քիչ տարբերվում էին:

Ամառային տաք օրերին

Ես գնում եմ անտառներով ու դաշտերով.

Ինչ որ ուզում եմ, անում եմ,

Ուր գնում եմ, չլմփացնում եմ՝ չըլմփ, չըլմփ:

Իսկ կոշիկիս մեջ, հապա մի պատկերացրեք `

Միշտ լսվում է՝ ճըլմթ, ճըլմփ:

Ես ինքս ինձ լավ թոջեցի,

Ցլիկին լավ գժվացրեցի,

Բրնձի շիլայիս կարոտեցի.

Ամառային տաք օրերին

Ուր գնում եմ, չլմփացնում եմ՝ չըլմփ, չըլմփ:

Գլուխ 7. ՊԻՊԻՆ ԳՆՈՒՄ Է ԿՐԿԵՍ

Մի անգամ այդ փոքրիկ քաղաք կրկես էին բերել, ու բոլոր երեխաները կպել էին իրենց մայրիկներին ու հայրիկներին, որ փող տան ու թույլ տան կրկես գնալ:

Թոմին ու Անիկան էլ էին կպել ծնողներին, ու նրանց բարի հայրիկը հանեց ու մի քանի սիրուն արծաթադրամ տվեց նրանց: Փողը ձեռքներում ամուր սեղմած՝ նրանք սլացան Պիպիի մոտ: Պիպին ձիու հետ պատշգամբում էր և զբաղված էր ձիու պոչին բարակ հյուսքեր

հյուսելով, որոնք զարդարում էր կարմիր վարդերով:

— Իմ կարծիքով՝ այսօր նրա ծննդյան օրն է,— բացատրեց նա:— Այդ պատճառով էլ պիտի սիրուն լինի:

— Պի՛պի,— շատ արագ վազելուց հևալով՝ ասաց Թոմին,— Պի՛պի, ուզո՞ւմ ես մեզ հետ կրկես գալ:

— Ես ձեզ հետ ուր ասես կարող եմ գնալ, բայց չգիտեմ՝ կարո՞ղ եմ գնալ կրկես, որովհետև չգիտեմ, թե ինչ

Բան է այդ *կերկեսը*: Ցավոտ չի:

— Գիժ ես,— ասաց Թոմին: — Ցավոտ չի: Ընդհակառակը: Գիտես ինչ ուրախ տեղ է: Ձիեր, ծաղրածուներ,

պարանի վրայով քայլող սիրուն աղջիկներ...

— Բայց վճարովի է, — ավելացրեց Անիկան ու բացեց իր փոքրիկ ափը տեսնելու, թե արդյո՞ք տեղում են փայլուն 2-կրոնանոցն ու երկու 50 օրենները:

— Ես տրոլի[4] չափ հարուստ եմ,— ասաց Պիպին, — էնպես որ, ուզածս ժամանակ կարող եմ ամբողջ կրկեսը առնել: Չնայած շատ նեղվածք կլինի, եթե ես էլի մի քանի հատ ձի ունենամ: Ծաղրածուներին ու սիրուն աղջիկներին ես մի կերպ կտեղավորեմ լվացքատանը, բայց ձիերի գործն ավելի դժվար կլինի:

— Ինչ՞ եր ես խոսում,— ասաց Թոմին, — չէ, ամբողջ կրկեսը չես առնելու: Վճարում ես, որ գնաս այնտեղ ու նայես: Հասկացա՞ր:

— Փրկեք ինձ,— բացականչեց Պիպին ու աչքերը փակեց:— Նայելու համար փո՞ղ ես տալիս: Իսկ ես, այստեղ օրերով աչքերս չռած, ման եմ գալիս: Ո՞վ իմանա արդեն ինչքան փողի եմ դեսուդեն նայել:— Հետո զգուշորեն բացեց մի աչքը ու գլուխը պտտեց:— Ինչ ուզում է արժենա,— ասաց,— հիմա մի հատ պիտի շուրջս նայեմ:

Վերջապես Թոմին ու Անիկային հաջողվեց բացատրել Պիպիին, թե ինչ բան է կրկեսը, և դրանից հետո Պիպին իր ճամպրուկից մի քանի

ոսկեդրամ վերցրեց: Հետո դրեց իր ջրաղացքարի չափ մեծ գլխարկը, և նրանք շտապեցին կրկես:

Կրկեսի շուրջ մեծ բազմություն էր հավաքվել, իսկ դրամարկղի առջև երկար հերթ էր: Կամաց-կամաց հերթը Պիպիին հասավ: Նա գլուխը մտցրեց պատուհանիկի մեջ, ուշադիր նայեց այնտեղ նստած սիրալիր ծեր տիկնոջն ու հարցրեց.

— Ի՞նչ արժի քեզ նայելը:

Բայց ծեր տոմսավաճառուհին ուրիշ երկրից էր, այնպես որ, չհասկացավ, թե Պիպին ինչ ի նկատի ուներ ու պատասխանեց.

— Փուչուր ախճիկ, ամենալավ տեխը

արշի հինկ կրոնա, ուրիշ տեխերը՝ երեք կրոնա, իսկ կանգնելու տեխերը՝ մի կրոնա:

— Պարզ է,— ասաց Պիպին,— բայց պիտի խոստանաս, որ դու էլ լարի վրայով կքայլես:

Այդ ժամանակ Թոմին միջամտեց և Պիպիին խնդրեց երկրորդ կարգի տոմս վերցնել: Պիպին մեկնեց ոսկեդրամը, իսկ այդ ծեր տիկինը կասկածանքով նայեց փողին: Նա դրամի իսկությունը ստուգելու համար կծեց այն: Ի վերջո, տիկինը համոզվեց, որ դրամն իսկապես ոսկուց է, և Պիպին ստացավ իր տոմսը: Դրանից բացի՝ նա հետ ստացավ նան մանրը՝ մի բուռ

արծաթադրամ:

— Ինչ՞ս են պետք այդ բոլոր պստիկ, սպիտակ, տգեղ փողերը,— դժգոհեց Պիպին:— Քեզ պահի դրանք, ինչ արած, դրա փոխարեն ես քեզ երկու անգամ կնայեմ: Փուչ՞ուր, փուչ՞ուր թիքին:

Որովհետև Պիպին ոչ մի կերպ չէր համաձայնում մանրը վերցնել, ուստի տիկինը ստիպված փոխեց Պիպիի տոմսը, փոխարենը առաջին կարգի տոմս տվեց, և նույնիսկ Թոմիին ու Անիկային առաջին կարգի տոմս տվեց՝ առանց նրանցից փող վերցնելու: Այդպես Պիպին, Թոմին ու Անիկան հայտնվեցին ամենագեղեցիկ կարմիր աթոռներին՝

մանեժին շատ մոտիկ: Թոմին ու Ալիկան մի քանի անգամ շրջվեցին՝ ձեռքով անելու իրենցից շատ ավելի հեռու նստած դպրոցական ընկերներին:

— Ինչ տարօրինակ տեղ ենք եկել, — ասաց Պիպին՝ զարմացած շուրջը նայելով: — Բայց նայեք էստեղ, հատակով մեկ թեփ են շաղ տվել: Դե, ես բան չունեմ ասելու, իմ գործը չէ, բայց շատ անշնորհք տեսք ունի իմ՝ կարծիքով:

Թոմին բացատրեց Պիպիին, որ բոլոր կրկեսներում էլ գետնին թեփ են լցնում, որ ձիերը վրայով վազեն:

Էստրադայում նստած կրկեսի

երաժիշտներն անսպասելիորեն սկսեցին մի թնդացող քայլերգ նվագել: Պիպին մոլեգին ծափահարեց և սկսեց հիացմունքից թռչկոտել աթոռի վրա:

— Լսելու համար էլ պիտի վճարենք, թե դա ձրի է,— հետաքրքրվեց նա:

Ճիշտ այդ պահին վարագույրը բացվեց, և շքամուտքից դուրս վազեց կրկեսի տնօրենը՝ սև ֆրակով ու մտրակը ձեռքին, հետևից էլ՝ տասը սպիտակ ձի՝ գլուխները կարմիր փետուրներով զարդարված: Կրկեսի տնօրենը շրխկացրեց մտրակը, ու ձիերը վազեցին: Հենց որ նա նորից խփեց մտրակով, բոլոր ձիերը կանգնեցին՝ առջևի ոտքերը

դնելով մանեժը շրջափակող պատնեշի վրա: Ձիերից մեկը կանգնել էր երեխաներին շատ մոտիկ: Անիկային դուր չեկավ, որ ձին իրեն այդքան մոտ է կանգնած, ուստի, ինչքան հնարավոր է, հետ նստեց: Իսկ Պիպին առաջ թեքվեց, բարձրացրեց ձիու առջևի ոտքն ու ասաց.

— Հազա՛ր բարև: Իմ ձիուց քեզ ջերմ ողջույններ եմ բերել: Համ էլ այսօր նրա ծննդյան օրն է. չնայած նրա վարդերը պոչին են, ոչ թե ձեզ նման՝ գլխին:

Բարեբախտաբար, Պիպին արդեն բաց էր թողել ձիու ոտքը, որովհետև երբ կրկեսի տնօրենը շրխկացրեց

մտրակը, բոլոր ձիերն իջան բազրիքից ու նորից վազեցին: Երբ համարը վերջացավ, տնօրենը քաղաքավարի գլուխ տվեց, և ձիերը դուրս վազեցին: Մի վայրկյանից վարագույրը նորից բացվեց մի ձյունաճերմակ ձիու առջև, որի մեջքին կանաչ տրիկոյով մի գեղեցիկ աղջիկ էր կանգնած: Անունը միսս Կարմենսիտա էր, գրված էր ծրագրում: Ձին վազեց թեփի վրայով. մեջքին կանգնած էր միսս Կարմենսիտան ու ժպտում էր: Բայց այդ պահին մի բան կատարվեց: Ճիշտ այն պահին, երբ ձին անցնում էր Պիպիի առջևով, օդում ինչ-որ բան սուրաց, և դա ոչ այլ ինչ էր, բան հենց

ինքը՝ Պիպին: Նա ակնթարթորեն տեղավորվել էր ձիու մեջքին՝ միսս Կարմենսիտայի հետևում: Առաջին պահին այդ միսսը զարմանքից քիչ էր մնում ձիուց ընկներ: Հետո կատաղեց: Սկսեց ձեռքերով հարվածել՝ փորձելով վայր գցել Պիպիին: Բայց չհաջողվեց:

— Հանգստացիր, մի՛ բորբոքվիր,— ասաց Պիպին,— մենակ դու չես

զվարճանալու: Մյուսներն էլ են վճարել՝ ինձ թվում է:

Միսս Կարմենսիտան արդեն ինքն էր ուզում ցատկել ձիուց, բայց այդ էլ չհաջողվեց, որովհետև Պիպին գոտկատեղից ամուր գրկել էր նրան: Հանդիսատեսներն, այդ տեսնելով, չկարողացան իրենց ծիծաղը զսպել: Նրանց կարծիքով՝ այնքան հիմար տեսք ուներ գեղեցիկ միսս Կարմենսիտան, որին ամուր բռնել էր ձիու մեջքին կանգնած այդ մեծ կոշիկներով փոքրիկ կարմրամազ աղջնակը, որը, թվում էր, կյանքում կրկեսում ելույթներ ունենալուց բացի, ուրիշ բանով չի զբաղվել:

Սակայն կրկեսի տնօրենը չէր

ծիծաղում: Նա նշան արեց իր կարմիր շորերով թիկնապահներին, որ ընդառաջ վազեն ու կանգնեցնեն ձիուն:

— Ափսոս, համարը վերջացավ, — հուսահատ ասաց Պիպին,— հենց զվարճության ամենաթեժ պահին-

— Իճի՛ր, այ ախճիկ - ատամները կրճտացրեց կրկեսի տնօրենը,—կորիր այստեղից:

Պիպին վշտացած նայեց նրան.

— Հիմա ինչ,— ասաց նա,— ինչ ես վրաս ջղայնանում: Ես կարծում էի՝ մենք եկել ենք, որ մի լավ ուրախանանք:

Նա ցատկեց ձիուց և գնաց նստեց իր տեղում: Բայց նրան երկու հսկա թիկնապահներ մոտեցան, որպեսզի դուրս շպրտեն կրկեսից: Նրանք բռնեցին Պիպիին ու փորձեցին տեղից պոկել: Չստացվեց: Չնայած նրանց բոլոր ջանքերին՝ Պիպին շարունակում էր նստած մնալ, և ոչ մի ուժ չէր կարող նրան տեղից շարժել: Վերջում նրանք ուսերը թոթվեցին և հեռացան:

Մինչ այդ, մյուս համարն արդեն սկսվել էր: Ելույթ էր ունենում լարախաղաց միսս Էլվիրան: Հագին վարդագույն կիսաշրջազգեստ էր, ձեռքին՝ վարդագույն հովանոց: Նա դուրս վազեց՝ ոտքերը համարյա

չկպցնելով լարին, և սկսեց զարմանալի վարժություններ անել և ամենաանհնարին ցատկերն ու պտույտները ցուցադրել: Այդ ամենը շատ գեղեցիկ էր: Նա ցույց տվեց նաև այդ բարակ լարով հետ-հետ քայլելու իր հմտությունը: Բայց երբ վերադարձավ լարի ծայրին գտնվող հարթակի վրա ու շրջվեց, Պիպին արդեն կանգնած էր այնտեղ:

— Հիմա ինչ կասես,— պայծառացավ Պիպին՝ միսս Էլվիրայի ապշահար դեմքը տեսնելով:

Միսս Էլվիրան առանց որևէ բան ասելու ցատկեց լարի վրայից և իրեն գցեց կրկեսի ղեկավարի մոտ, որը, պարզվեց, նրա հայրն էր: Եվ վերջինս

կրկին ուղարկեց իր թիկնապահներին՝ Պիպիին կրկեսից դուրս անելու: Այս անգամ՝ արդեն հինգ հոգու: Սակայն հանդիսատեսները սկսեցին բղավել.

— Թող նա մնա: Մենք ուզում ենք նայել կարմիր մազերով աղջկան:

Բոլորը բղավում էին, ոտքերով խփում գետնին ու ծափ տալիս:

Պիպին ցատկեց լարի վրա: Եվ միսս Էլվիրայի համարը բոլորովին խամրեց Պիպիի ցուցադրածի կողքին: Երբ Պիպին հայտնվեց լարի մեջտեղում, մի ոտքը վերև ձգեց, և նրա մեծ կոշիկը գլխավերևում նրա գլխին, ծածկ դարձավ: Նա մի քիչ էլ

թեքեց ոտքը, այնպես, որ կոշիկով կարող էր ականջը խուտուտ տալ:

Կրկեսի տերն, իհարկե, բոլորովին էլ գոհ չէր Պիպիի մասնակցությունից: Եվ ամեն կերպ ուզում էր ազատվել նրանից: Այդ նպատակով գաղտագողի մոտեցավ ու քանդեց լարը ձգող հարմարանքը՝ վստահ լինելով, որ Պիպին պիտի ընկնի: Բայց Պիպին չընկավ: Դրա փոխարեն սկսեց հետուառաջ ճոճվել լարի վրա: Լարը հետուառաջ էր լինում, Պիպին ճոճվում էր ավելի ու ավելի առաջ և հանկարծ ցատկեց ու վայրէջք կատարեց ուղիղ կրկեսի ղեկավարի վրա:

— Էս ինչ զվարճալի ձի ունեմ,— գոչեց

Պիպին,— իսկ ինչ՞ւ մազերիդ զարդեր չկան:

Պիպին վերջապես որոշեց, որ ժամանակն է վերադառնալու Թոմիի ու Անիկայի մոտ: Կրկեսի տնօրենի ուսերից ցատկելով՝ գնաց իր տեղը: Հաջորդ համարը պիտի սկսվեր: Այն մի քիչ ուշանում էր, որովհետև կրկեսի ղեկավարը պիտի գնար մի բաժակ ջուր խմեր և մազերը կարգի բերեր: Նա շուտով վերադարձավ, խոնարհվեց և ասաց.

— Հմ թիքիններ ու փարոններ, մի վարիկյանից դուք տեսնել հռաշք, տեսնել աշխարհի բոլոռ շամանակների ամենաուշեխ մարդ Ուշեխ Ադոլֆին: Ոչ մեկ սրան

չկարողանալ հախթել: Խնթրեմ, ի՞մ թիքիններ ու փարոններ, ահա գալիս է Ուշեխ Ադոլֆը:

Հրապարակ դուրս եկավ հաղթանդամ մի տղամարդ: Հագին կարմիր տրիկո էր, ուսերին էլ՝

հովազի մորթի: Նա բավական ինքնագոհ տեսքով գլուխ տվեց հանդիսատեսներին:

— Տեսեք՝ ինձ ամուր մկաններ ունենալ,— ասաց տնօրենը և սեղմեց Ուժեղ Ադոլֆի բազուկը, որպեսզի երևան մաշկի տակ փուչիկի նման ուռած մկանները:

— Իսկ հիմա, իմ թիքիններ ու փարոններ, հիմա ես մի շատ լաֆ առաճարկ անել: Ձեզանից ով համարձակվել ընտունել Ուշեխ Ադոլֆի մարտահրավեր: Ո՞վ համարձակվել փորձել ու հախթել աշխարհի ամենաուշեխ մարդ: Ով հախթել Ուշեխ Ադոլֆ՝ ստանալ 100 կրոն, իմ թիքիններ ու փարոններ,

100 կրոն, դե, համեցեք, ո՞վ է առաջ գալիս:

Ոչ մեկը դուրս չեկավ:

— Ի՞նչ ասաց,— հարցրեց Պիպին,— արաբերեն է խոսում:

— Ասաց, որ ով էս հսկայի հախից գա, 100 կրոն կստանա,— կրկնեց Թոմին:

— Ասենք՝ կարող եմ,— ասաց Պիպին, — բայց ինձ թվում է՝ չարժի նրան ծեծել, ինչ է արել որ. շատ էլ բարեհոգի է թվում:

— Չէ հա, դու հո իսկապես չես կարող,— չհավատաց Անիկան:— Նա աշխարհի ամենաուժեղ տղամարդն

է:

— Ճիշտ է, տղամարդը,— ասաց Պիպին,— իսկ ես աշխարհի ամենաուժեղ աղջիկն եմ, մի՛ մոռացիր:

Այդ ընթացքում Ուժեղ Ադոլֆը հսկա մետաղյա գնդեը էր բարձրացնում և երկաթե հաստ ձողեր էր մեջտեղից ծալում, որպեսզի իր ուժը ցուցադրի:

— Ի՛մ փարոններ,— գոչեց կրկեսի տնօրենը,— իսկապես ոչ ոք չցանկանալ 100 կրոն վաստակել, ուրեմն ես ստիպված լինել ինց մոտ պահել այթ փոխր,— ասաց նա և թափահարեց 100-կրոնանոց թղթադրամը:

— Չէ, ես իսկապես այթպես չկարծել, — ասաց Պիպին և պատնեշի վրայից անցնելով՝ մտավ հրապարակ:

Կրկեսի տերը, նրան տեսնելով, ուղղակի կատաղեց:

— Կորի՛ր, չեքվի՛ր, աճքիս չերևա՛ս,— ատամների արանքից հազիվ ասաց նա:

— Ինչի՞ ես դու միշտ էդպես անբարեհամբույր,— հանդիմանեց նրան Պիպին:— Ես ուղղակի Ուժեղ Ադոլֆի հետ կռվել եմ ուզում:

— Սա քեզ համար կատակներ անելու տեղ չլինել,— չէր հանգստանում կրկեսի տնօրենը,— կորի՛ր, քանի Ուշեխ Ադոլֆը չի լսել քո

կատակություններ:

Սակայն Պիպին անցավ նրա կողքով և գնաց ուղիղ դեպի Ուժեղ Ադոլֆը: Բռնեց նրա հսկա ձեռքն ու սրտանց թափ տվեց:

— Դե արի՛ ես ու դու մի քիչ ըմբշամարտենք,— ասաց Պիպին:

Ուժեղ Ադոլֆը նրան նայեց և ոչինչ չհասկացավ:

— Մի րոպեից հարձակվում եմ,— նախազգուշացրեց Պիպին:

Ասաց ու արեց: Ամուր բռնեց Ուժեղ Ադոլֆին, և նախքան մարդիկ կհասկանային, թե ինչ է կատարվում, պառկեցրեց գորգին: Ուժեղ Ադոլֆը

վեր թռավ, դեմքն ամբողջությամբ կարմրել էր:

— Պի՛պի. քեզ տեսնենք, — գոռում էին Թոմին ու Անիկան: Այդ լսելով՝ բոլոր հանդիսատեսները նույնպես սկսեցին գոչել. «Պի՛պի, Պի՛պի»:

Կրկեսի տնօրենը, պատնեշին նստած, կատաղությունից չգիտեր ձեռքերն ինչ անել: Իսկ Ուժեղ Ադոլֆն էլ ավելի կատաղած էր: Ողջ կյանքում նրան այդքան նվաստացուցիչ բան չէր պատահել: Եվ այժմ նա պատրաստվում էր ցույց տալու այդ կարմրամազ աղջկան, թե ո՞վ է Ուժեղ Ադոլֆը: Նա սլացավ դեպի Պիպին և ամբողջ ուժով զրկեց նրան: Բայց Պիպին ժայռի նման կանգնած մնաց:

— Դե ցո՛ւյց տուր ուժդ,— խրախուսում էր Պիպին: Հետո դուրս պրծավ նրա գրկից, և մի ակնթարթում հսկան նորից հայտնվեց գետնին: Պիպին, մոտը կանգնած, սպասում էր: Հակառակորդը երկար չսպասեցրեց: Նա կատաղի մռնչալով բարձրացավ և նորից հարձակվեց Պիպիի վրա:

Հանդիսատեսների բազմությունը ոտքերով խփում էր գետնին, գլխարկները օդ նետում ու գոռում. «Պի՛պի, քեզ տեսնենք»: Երբ Ուժեղ Ադոլֆը երրորդ անգամ սլացավ նրա վրա, Պիպին վեր բարձրացրեց և այդպես՝ ձեռքերի վրա պահած, մի պտույտ կատարեց: Հետո վայր դրեց

նրան, բայց բաց չթողեց:

— Դե՛, ծերո՛ւկ, ինձ թվում է՝ էլ չարժի շարունակել,— ասաց նա:— Ավելի զվարճալի, միևնույն է, չի լինի:

— Պիպին հաղթեց, Պիպին հաղթեց,— գոռում էին բոլորը: Ուժեղ Ադոլֆը հնարավորինս արագ ճողոպրեց հրապարակից: Իսկ կրկեսի տնօրենը ստիպված էր առաջ գալ և 100-կրոնանոցը մեկնել Պիպիին՝ չնայած երևում էր, որ նա պատրաստ է կուլ տալու Պիպիին:

— Համեցե՛ք, ի՛մ օրիորթ,— ասաց նա, — վերցրեք հարյուր կրոնա:

— Էս ինչ է — ասաց Պիպին,- ինչիս է պետք էս թղթի կտորը: Քե՛զ պահի,

վրան ձուկ կմաքրես, թե ուզես:

Եվ գնաց իր տեղը:

— Ինչքա՜ն ձգձգվեց էս կերկեսը- բողոքեց նա Թոմիին ու Ալիկային:— Մի փոքր քնելը չի խանգարի: Բայց արթնացրե՛ք, եթե էլի իմ կարիքը զգացվի:

Այս հանձնարարելով՝ նա հարմար նստեց ու միանգամից քնեց: Եվ այդպես մշմշալով քնեց, մինչ ծաղրածուները, սուր կուլ տվողներն ու օձ պարացնողներն իրենց զարմանալի հնարքներն էին ցուցադրում Թոմիին ու Ալիկային և կրկեսում գտնվող մյուս մարդկանց:

— Բայց, միևնույն է, իմ կարծիքով՝

ամենալավը Պիպին էր,— Անիկայի ականջին շշնջաց Թոմին:

Գլուխ 8. ՊԻՊԻԻՆ ԳՈՂԵՐ ԵՆ ԱՅՑԵԼՈՒՄ

Կրկեսում Պիպիի ելույթից հետո այդ փոքրիկ քաղաքում էլ մարդ չմնաց, որ չիմանար նրա աներևակայելի ուժի մասին: Անգամ թերթում գրվեց նրա մասին: Սակայն շրջակայքի բնակչությունը բնականաբար Պիպիին դեմքով չէր ճանաչում:

Մի մութ աշնանային երեկո երկու թափառական շրջում էին Վիլլա Վիլեկուլայի մոտակայքում: Դրանք մռայլ գողեր էին, որ ման էին գալիս այդ կողմերում՝ հույս ունենալով, որ կհաջողվի ինչ-որ բան թռցնել:

Նկատելով Վիլլա Վիլեկուլայի պատուհանների լույսը՝ նրանք որոշեցին մտնել և մի կտոր հաց խնդրել:

Հենց այդ երեկո Պիպին իր բոլոր ոսկեդրամները շաղ էր տվել խոհանոցի հատակին ու նստած հաշվում էր: Ըստ էության, նա կարգին հաշվել չգիտեր, բայց, համենայն դեպս, երբեմն անում էր այդ գործը, գոնե որոշ կարգ ու կանոնի համար:

— Հիսունհինգ, հիսունվեց, հիսունյոթ, հիսունութ, հիսունինը, հիսունտաս, հիսունտասնմեկ, հիսունտասներկու, հիսունտասներեք,

հիսունտասնհինգ... ու՛ֆֆֆղ էս հի-հիսունից հազս եկավ: Ուրիշ ինչ-որ թվեր էլ կային էդ բանաթվության մեջ, ոնց չէ, հիշում եմ,— ավարտեց Պիպին:

Հենց այդ պահին դուռը խփեցին:

— Ուզում եք՝ մտեք, չեք ուզում՝ էդպես կանգնած մնացեք,— բղավեց Պիպին, — չեմ պարտադրում:

Դուռը բացվեց, և երկու թափառականները ներս մտան: Պատկերացրեք նրանց դեմքի արտահայտությունը, երբ տեսան բոլորովին մենակ գետնին նստած մի փոքրիկ կարմրամազ աղջնակի փողերը հաշվելիս:

— Դու տանը մենակ ես,— հարցրին նրանք խորամանկորեն:

— Սխալվում եք,— ասաց Պիպին,— պարոն Նիլսոնն էլ է տանը:

Գողերը, ինչպես հասկացաք, բոլորովին էլ չէին կարող իմանալ, որ պարոն Նիլսոնը նրա փոքրիկ կապիկն էր և այդ պահին արդեն քնած էր իր կանաչ մահճակալիկում՝ տիկնիկի վերմակով ծածկված: Նրանք կարծեցին, թե դա տանտիրոջ անունն է և իրար բազմանշանակ աչքով արեցին: «Կարող ենք մի քիչ ուշ վերադառնալ»,— ի նկատի ունեին նրանք, սակայն Պիպիին դառնալով՝ ասացին.

— Մենք ուղղակի ժամը չգիտեինք, մտանք, որ հարցնենք:

Նրանք այնքան հուզված էին, որ ոչ մի հացի մասին այլևս չէին մտածում:

— Մեծ մարդիկ եք ու չգիտեք ժամն ինչ է,— զարմացավ Պիպին:— Էս ինչ տեսակ դաստիարակություն եք ստացել: Ժամն իմանում ենք ժամացույցով: Ժամացույցն էլ մի փոքրիկ կլոր բան է, որ թիկ-թակ է ասում և գնում, գնում, բայց երբեք տեղ չի հասնում: Թե հանելուկներ գիտեք, մի քանիսն էլ դուք ասեք,— ասաց Պիպին:

Թափառականները եզրակացրին, որ Պիպին դեռ շատ փոքր է՝

հասկանալու համար, թե ժամն ինչ է, ուստի շրջվեցին և առանց որևէ բառ ասելու դուրս եկան:

— Ես հույս էլ չունեի, որ գոնե շնորհակալություն կասեիք,— գոչեց Պիպին նրանց հետևից: — Մի ժամացույցի չափ էլ խելք չունեք, արժեր մի լավ *քո-թակ* տալ ձեզ, — ասաց Պիպին ու վերադարձավ իր գործին:

Դրսում թափառականները հիացմունքից ձեռքերն էին շփում:

— Տեսա՞ր ինչքան փող ուներ: Գրողը տանի, — բացականչեց նրանցից մեկը:

— Հա՛, բախտներս մեկ-մեկ բերում է,—

ասաց մյուսը:— Մեզ մնում է ուղղակի սպասել, մինչև աղջիկն ու էն Նիլսոնը քնեն: Հետո ներս կսողոսկենք ու էդ համով պատառը կթռցնենք:

Այգում կաղնիներից մեկի տակ տեղավորվելով՝ սկսեցին սպասել: Տեղատարափ անձրև սկսվեց, նրանք էլ սարսափելի սոված էին, այնպես որ, նրանց վիճակն, իրոք, աննախանձելի էր, սակայն փողերին տիրանալու միտքը նրանց բարձր տրամադրության մեջ էր պահում: Կամաց-կամաց բոլոր տների լույսերը սկսեցին մարել, բայց Վիլլա Վիլեկուլայի պատուհանները շարունակում էին լուսավորվել: Պիպին վճռել էր ամեն գնով սկոտիս[5]

պարել սովորել և պառկելու ոչ մի մտադրություն չուներ, մինչև որ վստահ չլիներ, որ արդեն սովորել է: Եվ, վերջիվերջո, Վիլլա Վիլեկուլայի պատուհանների լույսն էլ մարեց:

Գողերը մի որոշ ժամանակ էլ սպասեցին, որպեսզի լիովին վստահ լինեին, որ պարոն Նիլսոնը նույնպես քնած է: Հետո նրանք գաղտագողի մոտեցան հետնամուտքին և հանեցին իրենց հատուկ կոտրող գործիքները՝ դուռը բացելու համար: Նրանցից մեկը, որի անունը, իմիջիայլոց, Ճաղիկ Բլում էր, այդ պահին պատահականության բերումով հանկարծ կպավ դռանը: Եվ այն փակ էլ չէր:

— Էս մարդիկ իսկի խելք չունեն, — շշնջաց նա ընկերոջ ականջին: — Տե՛ս՝ դուռը բաց են թողել:

— Մեզ ավելի լավ, — պատասխանեց սևահեր ընկերը, որին իր շրջապատում Որոտ Կառլսոն էին կոչում:

Որոտ Կառլսոնը միացրեց իր լապտերը, և նրանք սողոսկեցին խոհանոց: Մարդ չկար: Պիպիի մահճակալը, ինչպես նաև պարոն Նիլսոնի փոքրիկ խաղալիք մահճակալիկը, կողքի սենյակում էր: Որոտ Կառլսոնը կամաց բաց արեց դուռը և զգուշորեն ներս նայեց: Լուռ ու հանգիստ էր, և նա լապտերիկով լուսավորեց սենյակի բոլոր

անկյունները: Երբ լույսն ընկավ Պիպիի մահճակալի վրա, գողերը, ի զարմանքս իրենց, բարձի վրա հանգստացող մի զույգ ոտքերից բացի, ուրիշ ոչինչ չտեսան: Պիպին, իր սովորության համաձայն, քնում էր՝ գլուխը վերմակի տակ՝ ոտքերի տեղում:

— Սա պիտի որ էն աղջիկը լինի,— շշնջաց Որոտ Կառլսոնը: Ու ոնց որ

երևում է, քնած է: Իսկ պարոն Նիլսոնն ո՞ւր է, ինչ ես կարծում:

— Պարոն Նիլսոնը, եթե թույլ կտաք,— վերմակի տակից հանդարտ ձայնով ասաց Պիպին,— պարոն Նիլսոնն այն փոքրիկ կանաչ մահճակալիկում է պառկած:

Գողերը վախից քիչ էր մնում անմիջապես դուրս նետվեին սենյակից: Բայց հանկարծ անդրադարձան Պիպիի ասածին: Այսինքն, որ պարոն Նիլսոնը քնած էր կանաչ մահճակալիկում: Լապտերի լույսը գցելով մահճակալիկին՝ տեսան քնած փոքրիկ կապիկին: Որոտ Կառլսոնը չկարողացավ զսպել ծիծաղը:

— Ծաղիկ Բլում, նայիր,— ասաց նա,— պարոն Նիլսոնն ուրեմն կապիկ է, հա-հա-հա:

— Հա, իսկ դուք կարծում էիք ինչ է,— վերմակի տակից հանդարտ ձայնով հարցրեց Պիպին,— խոտ հնձող մեքենա:

— Մայրդ, հայրդ տանը չեն,— հարցրեց Բլումը:

— Չէ,— ասաց Պիպին,— տանը չեն, շատ հեռու են:

Որոտ Կառլսոնն ու Ծաղիկ Բլումն ուրախությունից սկսեցին հավի պես կչկչալ:

— Լսում ես, այ աղջիկ,— ասաց Որոտ

Կառլսոնը,— վեր կաց, հետդ խոսելու բան ունենք:

— Չեմ կարող, քնած եմ: Չլինի էլի մի հանելուկ եք ուզում: Ուրեմն՝ դեռ էս մեկը գուշակեք. այն ինչն է, ինչը, որ գնում, գնում է ու երբեք տեղ չի հասնում:

Այդ ժամանակ Ծաղիկ Բլումը վճռական շարժումով քաշեց Պիպիի վերմակը:

— Դու սկոտիս պարո՞ւմ ես,— հարցրեց Պիպին ու հայացքը հառեց նրան:— Ես պարում եմ:

— Շատ ես հարցեր տալիս,— ասաց Որոտ Կառլսոնը:— Թող մի քիչ էլ մենք հարցեր տանք: Օրինակ՝ որտեղ

ես պահում էն փողերը, որ իրիկունը գետնին էիր փռել:

— Պահարանի վրայի ճամպրուկի մեջ,— ազնվորեն պատասխանեց Պիպին:

Որոտ Կառլսոնն ու Ծաղիկ Բլումը պայծառացան:

— Հույս ունեմ՝ դեմ չես լինի, եթե մենք դրանք վերցնենք, փոքրիկ ընկեր:

— Օ՛, ինչ եք ասում,— ասաց Պիպին,— իհարկե, դեմ չեմ:

Այդ լսելով՝ Ծաղիկ Բլումի մոտեցավ և իջեցրեց ճամպրուկը:

— Հույս ունեմ՝ դեմ չես լինի, եթե դրանք հետ վերցնեմ, փոքրիկ ընկեր,

— ասաց Պիպին, վեր թռավ անկողնուց ու մոտեցավ Ծաղիկ Բլումին:

Ծաղիկ Բլումը չհասկացավ՝ ինչ կատարվեց, բայց ճամպրուկը մի վայրկյանում հայտնվեց Պիպիի ձեռքին:

— Կատակը՝ մի կողմ,— բարկացավ Որոտ Կառլսոնը:— Էստեղ արի՝ ճամպրուկով հանդերձ:

Եվ ամուր բռնելով Պիպիի ձեռքից՝ փորձեց իրեն ձգել բաղձալի ավարը:

— Կատակը՝ մի կողմ, մի քիչ էլ՝ մյուս կողմ,— ծաղրեց Պիպին և բարձրացնելով Որոտ Կառլսոնին՝ նստեցրեց պահարանի վրա: Մի

ոոպեից Ծաղիկ Բլումն էլ հայտնվեց նրա կողքին: Գողերն արդեն վախեցան: Նրանք սկսեցին հասկանալ, որ Պիպին ինչ-որ սովորական աղջնակ չէ: Սակայն ճամպրուկն այնուամենայնիվ գայթակղիչ էր, այնպես որ, նրանք իսկույն մոռացան իրենց վախը:

— Ծաղի՛կ Բլում, երե՛ք-չորս,— գոչեց Որոտ Կառլսոնը, և նրանք միաժամանակ ցատկեցին պահարանից ու հարձակվեցին ճամպրուկը ձեռքին հանգիստ Կանգնած Պիպիի վրա: Բայց Պիպին մի մատով հետ հրեց նրանց, այնպես որ, նրանք հայտնվեցին սենյակի անկյունում: Հետո մինչև խեղճերը

կհասցնեին կանգնել, Պիպին կայծակնային արագությամբ մի պարան բերեց և ճարպկորեն նրանց ոտքերն ու ձեռքերը ամուր կապեց: Այստեղ նրանք սկսեցին ուրիշ երգ երգել.

— Աղաչում ենք, սիրելի՛ օրիորդ, — ասաց Որոտ Կառլսոնը,— ների՛ր մեզ, մենք ուղղակի կատակեցինք: Մեզ մի՛ ծեծիր, մենք խեղճ աղքատ թափառականներ ենք: Մենք եկանք՝ մի քիչ հաց խնդրելու:

Ծաղիկ Բլումն էլ այդ ընթացքում մի քիչ արցունք թափեց:

Պիպին տեղավորեց ճամպրուկը, ապա շրջվեց դեպի իր գերիները:

— Ձեզնից մեկն ու մեկը սկոտիս պարել գիտի:

— Հըմ, ը-ը-ը,— ասաց Որոտ Կառլսոնը,— կարծում եմ, երկուսս էլ կկարողանանք գլուխ հանել:

— Օ՛, ինչ զվարճալի կլինի,— Պիպին ուրախությունից ծափ տվեց:— Հետս մի քիչ չէիք պարի: Ես նոր եմ սովորել:

— Հա, բա ոնց,— պատասխանեց Որոտ Կառլսոնը՝ մի քիչ շփոթված:

Պիպին մի հսկայական մկրատ բերեց և իր հյուրերին կապանքներից ազատեց:

— Ափսոս, երաժշտություն չկա,— տխրեց նա: Բայց հետո հնարը գտավ

և դառնալով Ծաղիկ Բլումին՝ ասաց.

— Կարող ես սանր փչել, մենք էլ կպարենք:

Ծաղիկ Բլումն իսկապես կարող էր սանր փչել: Այն էլ այնպես, որ տան բոլոր անկյուններում լսվում էր: Պարոն Նիլսոնը կիսաքուն բարձրացավ անկողնուց, որ տեսնի՝ ինչ է կատարվում: Պիպին սենյակով մեկ պտտվում էր Որոտ Կառլսոնի հետ: Դեմքն այնքան լուրջ էր, և այնպիսի ոգևորությամբ էր պարում, կարծես կյանքի և մահու հարց լիներ:

Վերջապես Ծաղիկ Բլումը հրաժարվեց փչելուց՝ պատճառաբանելով, թե սանրը

անտանելի ցավացնում է շրթունքները: Ամբողջ օրը փողոցներում անցկացրած Որոտ Կառլսոնի ոտքերն էլ սկսել էին հոգնել:

— Չէ՛, չէ՛, խնդրում եմ, մի քիչ էլ,— աղաչում էր Պիպին և շարունակում պարել: Իսկ Ծաղիկ Բլումին ու Որոտ Կառլսոնին մնում էր լուռ ենթարկվել:

Գիշերվա ժամը երեքին Պիպին ասաց.

— Ես մինչև հինգշաբթի կպարեի: Բայց դուք ոնց որ թե հոգնած ու սոված եք:

Եվ իրոք այդպես էր՝ չնայած նրանք չէին հանդգնում ասել: Պիպին

սեղանին դրեց հաց, պանիր, կարագ, ապուխտ, սառը միս և կաթ, հետո նրանք միասին նստեցին սեղանի շուրջ՝ Ծաղիկ Բլումը, Որոտ Կառլսոնն ու Պիպին, և այնքան կերան, որ համարյա քառակուսի դարձան: Պիպին մի քիչ կաթ լցրեց մի ականջի մեջ:

— Ականջի ցավի դեպքում լավ է,— բացատրեց նա:

— Խեղճ աղջիկ, ականջդ ցավո՞ւմ է,— հետաքրքրվեց Ծաղիկ Բլումը:

— Չէ,— ասաց Պիպին,— բայց հնարավոր է՝ հետո ցավի:

Վերջապես թափառականները վեր կացան, շնորհակալություն

հայտնեցին ճաշի համար և թույլտվության խնդրեցին հրաժեշտ տալու:

— Ինչ հրաշալի էր, որ եկաք: Իսկապես արդեն պիտի գնա՞ք,— ափսոսանքով ասաց Պիպին:

— Երբևէ քեզ նման լավ սկոտիս պարող չեմ տեսել, շաքարաքլորս, — ասաց նա Որոտ Կառլսոնին:

— Ջանասիրաբա՛ր պարապիր, որ լավ սանր փչես,— ասաց նա՝ դիմելով Ծաղիկ Բլումին, — էլ շրթունքներդ չես ցավացնի:

Երբ նրանք արդեն դռան մոտ էին, Պիպին ամենքին մեկական ոսկեդրամ տվեց:

— Դուք ազնվորեն վաստակեցիք դրանք,— ասաց նրանց:

Գլուխ 9. ՊԻՊԻՆ ՀՅՈՒՐ Է ԳՆՈՒՄ

Թոմիի ու Անիկայի մայրիկը պատրաստվում էր սուրճի հրավիրելու մի քանի տիկնանց: Տեսնելով, որ թխվածքները բավարար են՝ մտածեց, որ Թոմին ու Անիկան իրենց հերթին կարող են Պիպիին էլ նույն օրը հրավիրել: Նրա կարծիքով՝ երեխաներն այդպիսով նվազագույն հոգս կպատճառեն:

Լսելով մոր որոշումը՝ Թոմին ու Անիկան անասելի ուրախացան և

վազեցին՝ Պիպիին իրենց մոտ հրավիրելու: Պիպին իր հին, ժանգոտած ցնցուղով այգու սակավաթիվ ծաղիկներն էր ջրում: Այդ ամբողջ օրը երկնքից հորդառատ անձրև էր թափվում, ուստի Թոմին ասաց Պիպիին, որ դա, համենայն դեպս, անօգուտ է:

— Հա՛, քեզ համար հեշտ է էդպես ասել,— սրտնեղեց Պիպին:— Բայց ես, ամբողջ գիշեր արթուն պառկած, երազել եմ, թե երբ եմ վեր կենալու, որ ջրեմ: Այնպես որ, իմացած լինես՝ չեմ թողնի, որ ինչ-որ խղճուկ անձրև ինձ խանգարի:

Անիկան հայտնեց ցնցող հրավերի մասին:

— Ի՞նձ, սուրճի,— բացականչեց Պիպին և այնպես հուզվեց, որ սկսեց վարդի թփի փոխարեն Թոմիին ջրել: — Վայ, ինչ անենք: Օ՛յ, շատ եմ հուզվում: Բա որ ինձ լավ պահել չկարողանամ:

— Իհարկե կկարողանաս, — հանգստացրեց Անիկան:

— Այդքան վստահ մի՛ եղիր, — ասաց Պիպին, — ես փորձել եմ, հավատա: Չնայած քանի անգամ նկատել եմ, որ մյուսների կարծիքով՝ ես ինձ բոլորովին պահել չգիտեմ: Այն էլ այն դեպքում, որ ինձ շատ լավ էի պահում, ոչ մի ջանք չէի խնայում: Նավի վրա երբեք նման բաների մասին չէինք մտածում: Բայց

խոստանում եմ, որ այսօր կաշխատեմ ամեն ինչ անել, որ դուք իմ պատճառով ստիպված չլինեք ամաչել:

— Հրաշալի է,— ասաց Թոմին, և ինքն ու Անիկան տուն վազեցին:

— Ցերեկը՝ ժամը երեքին, տեմ՝ չմոռանաս,— գոչեց Անիկան՝ անձրևանոցի տակից դուրս նայելով:

Ցերեկվա ժամը երեքին Սեթերգրենների առանձնատան աստիճաններով չափազանց գեղեցիկ մի օրիորդիկ էր բարձրանում: Երկարագուլպա Պիպին էր: Մազերը հետաքրքրության համար թափել էր,

և դրանք առյուծի բաշի նման իջնում էին ուսերին: Շրթունքներին կարմիր կավիճ էր քսել, հոնքերին էլ մուր, ինչից բավական ահարկու տեսք էր ստացել: Նույն կարմիր կավիճով ներկել էր եղունգները, իսկ կոշիկները զարդարել էր խոշոր, կանաչ վարդերով:

— Հույս ունեմ, որ այս ցերեկույթին ամենագեղեցիկը կլինեմ, — ինքն իրենից գոհ քթի տակ մռթմռթաց նա՝ դռան զանգը խփելով:

Սեթերգրեն ընտանիքի հյուրասենյակում երեք հարգարժան տիկնայք էին նստած, ինչպես նաև Թոմին, Ավիկան և նրանց մայրիկը: Սուրճի սեղան էր բացված, և

բուխարիկում վառվում էր կրակը: Տիկիններն իրար հետ խաղաղ զրույց էին անում, իսկ Թոմին ու Ալիկան, բազմոցին նստած, ալբոմ էին թերթում: Խաղաղ և հանգիստ էր:

Բայց հանկարծ հանգիստը խախտվեց:

— Ի զեեեեեն:

Այդ ականջ ծակող ծղրտոցը լսվեց նախամուտքից, և քիչ հետո Պիպին արդեն կանգնած էր դռան շեմին: Նրա բարձր ու անսպասելի գոչյունը սարսափեցրել էր տիկնանց:

— Ջոկա՛տ, առա՛ջ: Քայլով մարշ,— լսվեց հաջորդ հրամանը, և Պիպին զինվորական քայլով մոտեցավ

տիկին Սեթերգրենին:

— Կանգ ա՛ռ,— հրահանգեց նա և կանգ առավ:

— Ձեռքերն առա՛ջ, մեկ, երկո՛ւ,— գոչեց նա և երկու ձեռքով ամուր բռնեց տիկին Սեթերգրենի ձեռքն ու սրտանց թափահարեց:

-— Խոնարհվե՛լ,— բացականչեց նա և արժանապատվորեն գլուխ տվեց: Հետո ժպտալով տիկին Սեթերգրենին՝ սիրալիր ձայնով ասաց.

— Ես պարզապես շատ ամաչկոտ եմ, ու եթե ինքս ինձ հրամաններ չտայի, մինչև հիմա դեռ նախամուտքում կանգնած կլինեի, կհամառեի ու սիրտ

չէի անի ներս մտնել:

Խոսքն ավարտելով՝ սլացավ դեպի մյուս տիկինները և նրանց բոլորի այտերը համբուրեց:

— Շարմոնթ[6], շարմոնթ, ինչպիսի՜ պատիվ,— ասաց նա, որովհետև մի անգամ լսել էր, թե ինչպես մի պատվավոր պարոն այդպես էր ասել մի տիկնոջ:

Հետո տեղավորվեց ամենալավ աթոռին: Տիկին Սեթերգրենը սպասում էր, որ երեխաները կբարձրանան Թոմիի ու Ավիկայի սենյակ, սակայն Պիպին չէր պատրաստվում տեղից վեր կենալ: Նա ձեռքերը խփեց ծնկներին և

սուրճի սեղանին նայելով՝ ասաց.

— Տեսքից որ շատ համով է թվում: Դե, ճրբ ենք սկսելու:

Նույն վայրկյանին տան սպասուհին՝ Էլլան, ներս մտավ՝ սուրճը ձեռքին, և տիկին Սեթերգրենն ասաց.

— Համեցեք:

— Շո՛ւտ եմ ասել՝ առաջինը ես եմ,— գոչեց Պիպին և երկու ցատկով հայտնվեց սեղանի մոտ: Արագ-արագ մի ամբողջ ափսե լիքը թխվածք լցրեց, սուրճի բաժակի մեջ հինգ կտոր շաքար գցեց, սերուցքի կեսը դատարկեց իր բաժակի մեջ և հետո միայն վերադարձավ իր աթոռի մոտ, մինչդեռ տիկինները նոր միայն

մոտեցել էին սեղանին:

Պիպին ոտքերը ձգեց և թխվածքներով լի ափսեն դրեց ծնկներին: Հետո թխվածքները սկսեց աշխուժորեն թաթախել սուրճի մեջ, ապա բերանն այնքան լիքը լցրեց, որ չնայած բոլոր ճիգերին, չկարողացավ մի բառ անգամ արտաբերել: Մի թափով իր թխվածքների վերջը տվեց: Վերջացնելով վեր կացավ, այնպես հարվածեց ափսեին, ասես դափ լիներ, և մոտեցավ սեղանին՝ տեսնելու, թե էլի թխվածք մնացել է: Տիկինները անբարեհամբույր նայում էին Պիպիին, սակայն նա չէր նկատում: Ձվարթ մենախոսելով՝ պտտվում էր սեղանի շուրջը և այս ու

այն կողմից թխվածք թռցնում:

— Չափազանց հաճելի է, որ ինձ հրավիրեցիք, — ասաց նա:— Ինձ դեռ երբեք սուրճի չէին հրավիրել:

Սեղանին սերուցքով տորթ էր դրված՝ մեջտեղում կարմիր կրեմով նախշեր: Պիպին, ձեռքերը մեջքին պահած, նայում էր դրան: Անսպասելիորեն նա կռացավ և բերանով փախցրեց տորթի նախշերը: Սակայն նա շատ արագ էր թեքվել և երբ բարձրացավ, ամբողջ դեմքը լցոզված էր սերուցքով:

— Հա-հա-հա,— ծիծաղեց նա,— հիմա կարող ենք աչքակապուկ խաղալ, որովհետև առանց ջանք թափելու

պատրաստի վարող ունեցանք: Ոչ մի բան չեմ տեսնում:

Եվ լեզուն դուրս հանելով՝ ամբողջ սերուցքը լպստեց:

— Վա՛յ, ինչ ահավոր բան ստացվեց,— ասաց նա:— Տորթն ամեն դեպքում էսպես փչացած չենք թողնի, ավելի լավ է՝ ես դրա վերջն էլ տամ:

Ասելն ու անելը մեկ եղավ: Նա թխվածքների թիակով գործի անցավ և շատ կարճ ժամանակում գործը գլուխ բերեց: Ամբողջ տորթն անհետացավ: Պիպին գոհունակությամբ փորը թփթփացրեց: Տիկին Սեթերգրենը մի որպեսով խոհանոց էր գնացել և

պատահածին տեղյակ չէր: Իսկ մյուս տիկինները խստորեն նայում էին Պիպիին: Նրանք նույնպես ուզում էին տորթի համը տեսնել: Պիպին, նկատելով նրանց՝ իրեն հառած դժգոհ հայացքները, որոշեց մի քիչ սփոփել նրանց:

— Էսպիսի բանի պատճառով չարժե տխրել, — ասաց նա, — կարևորը, որ մարդ առողջ լինի: Երբ մարդ սուրճի է հրավիրված, պիտի ուրախ անցկացնի ժամանակը:

Հետո իր ասածը հաստատելու համար վերցրեց շաքարամանը և շաքարի կտորները թափեց հատակին:

— Վայ, էս ինչ էր,— սուր ձայնով ճչաց նա:— Ինչ սխալ բան արեցի: Ես կարծեցի, թե շաքարավազն է: Բայց լինելու բանը լինում է, ոչինչ չես կարող անել: Բարեբախտաբար, դեռ կարելի է սխալը ուղղել, եթե մարդ շփոթվել է, կծովի շաքարը ցանել է գետնին, մնում է ավազ-շաքարը կծի:

Խոսքն ավարտելով՝ վերցրեց շաքարավազի ամանը, մի քիչ լցրեց լեզվին և կծեց:

— Էսպէս, ափսո՛ս,— ասաց,— սա որ չի օգնում, էլ ոչինչ չի օգնի:

Հիասթափվելով շաքարավազի ամանի ամբողջ պարունակությունը դատարկեց գետնին:

— Ի նկատի ունեցեք, որ սա շաքարավազն էր,— ասաց նա:— Էնպես որ, ես ճիշտ եմ: Եթե շաքարավազը չի կարելի ավազի նման շաղ տալ, ինչներին է պետք, ասեք խնդրեմ:

Այդ պահին ներս մտավ տիկին Սեթերգրենը և, տեսնելով գետնին շաղ տված շաքարը, ամուր բռնեց Պիպիի թևից ու տարավ նստեցրեց բազմոցին՝ Թոմիի ու Անիկայի կողքին: Ինքն էլ վերադարձավ տիկինների մոտ և առաջարկեց երկրորդ բաժակ սուրճը: Տորթի անհետացումը միայն ուրախացրեց նրան: Մտածեց, թե հյուրերն այնքան են հավանել, որ լրիվ կերել են:

Պիպին, Թոմին ու Անիկան,

բազմոցին նստած՝ ցածրաձայն զրույց էին անում: Բուխարիկում կայծկլտում էր կրակը: Տիկինները երկրորդ բաժակն էին խմում, և նորից ամեն ինչ խաղաղ ու հանգիստ էր: Եվ ինչպես հաճախ է պատահում սուրճի սեղանի մոտ, տիկինները խոսք բացեցին իրենց սպասուհիների մասին: Այլևս խղճով սպասուհիներ չկան, այս հարցում բոլորն էլ համամիտ էին, քանի որ ոչ մեկը գոհ չէր իր սպասուհուց: Նրանք եկան այն եզրակացության, որ, ըստ էության, մարդ չպիտի սպասուհի պահի: Շատ ավելի լավ է մարդ տան գործերն ինքն անի, որովհետև այդ դեպքում գոնե վստահ կլինի, որ

ամեն ինչ կարգին է արված:

Պիպին, բազմոցին նստած, ուշադիր լսում էր, և հենց տիկինները մի պահ լռեցին, ասաց.

— Մի ժամանակ տատիկս մի սպասուհի ուներ, անունը՝ Մալին: Ոչ մի թերություն չուներ՝ չհաշված ոտքերի կոշտուկները: Միայն մի տարօրինակություն ուներ, հենց որ օտար մարդ էր գալիս, հարձակվում էր վրան ու ոտքը կծում: Եվ հայհոյում էր: Օ՛, էնպես էր հայհոյում: Ամբողջ թաղամասով մեկ լսվում էր: Բայց դա լինում էր, երբ նա խաղալու տրամադրություն էր ունենում: Սակայն անծանոթները ոչ մի կերպ չէին ուզում հասկանալ դա: Մի

անգամ մի ծեր երեցկին էր եկել տատիկիս մոտ: Մալինը դեռ նոր էր ընդունվել: Երբ Մալինը հարձակվեց և ատամներով բռնեց երեցկնոջ ոտքից, եղեցկինը մի էսպիսի ճիչ արձակեց, որ վախից Մալինի ատամներն էլ ավելի խորը մխրճվեցին ոտքի մեջ: Իսկ հետո չէր կարողանում դուրս հանել: Նա էդպես կպած մնաց երեցկնոջը մինչև ուրբաթ: Տատիկս ստիպված այդ օրը կարտոֆիլն ինքը մաքրեց: Դե, ի վերջո, գործը գլուխ բերեց: Էնպես ջանասիրաբար էր մաքրել ու մաքրել, որ ոչ մի կարտոֆիլ չէր մնացել: Միայն կճեպներ էին: Բայց դե այդ ուրբաթից հետո երեցկինը էլ

տատիկիս տուն ոտք չդրեց: Չէր հասկացել, որ կատակ էր: Թե չէ Մալինը շատ ուրախ ու կատակասեր էր՝ չնայած, ամեն դեպքում, նա էլ երբեմն նեղանում էր. չեմ կարող ժխտել: Մի անգամ, երբ տատիկս պատառաքաղով հասցրել էր նրա ականջին, ամբողջ օրը թթված ման եկավ:

Պիպին շուրջը նայեց և սիրալիր ժպտաց:

— Խնդրեմ, էս էլ մեր Մալինը,— ասաց ու ձեռքերն իրար զարկեց:

Տիկինները ձևացրին, թե ոչինչ չեն լսել, և շարունակեցին իրենց խոսակցությունը:

— Եթե իմ Ռոզան գոնե մաքրասեր լիներ,— ասաց տիկին Բերգրենը,— գուցե ես իրեն էլի մի կերպ հանդուրժեի: Բայց նա ոնց որ իսկական խոզ լինի:

— Բա որ Մալինի՛ն տեսնեիք,— մեջ ընկավ Պիպին:— Մալինը էնպես գարշելի կեղտոտ էր, որ ուղղակի տեսնել էր պետք: Մաշկն այնքան

մուգ էր, որ տատիկս երկար ժամանակ կարծում էր, թե նա սևամորթ է, իսկ նրա մաշկը պարզապես ամբողջովին ներծծված էր չմաքրվող կեղտով: Մի անգամ նույնիսկ հյուրանոցի կողքի շուկայում նրան առաջին մրցանակ էին տվել ամենակեղտոտ եղունգների համար: Բա, չեք կարող երևակայել, թե էդ կինն ինչ անտանելի կեղտոտ էր, — գոհունակությամբ ավարտեց Պիպին:

Տիկին Սեթերգրենը խիստ հայացքով նրան նայեց:

— Կարո՞ղ եք պատկերացնել,- ասաց տիկին Գրանբերը— վերջերս, երբ իմ Բրիտան պիտի տեղ գնար, առանց

տատանվելու վերցրել հագել էր իմ կապույտ մետաքսե շորը: Դա արդեն վերին աստիճանի անհանդուրժելի չի:

— Ըհմ, և ասեմ ձեզ, — չդիմացավ Պիպին, — ոնց որ ճիշտ մեր Մալինի զույգը լինի: Տատիկս մի վաղդագույն շապիկ ուներ, ամենաշատը դա էր սիրում: Բայց, ցավոք, Մալինն էլ էր հենց դա սիրում: Եվ ամեն առավոտ տատիկս ու Մալինը կռիվ էին անում, թե ով պիտի հագնի այդ շապիկը: Վերջը համաձայնության էին եկել, որ երկուսն էլ կհագնեն, բայց մեկումեջ, որպեսզի արդարացի լինի: Իսկ թե էդ Մալինը ինչեր էր անում, էլ չեմ ասում: Լինում էր, որ նա վազելով ներս էր

ընկնում և, չնայած իր հերթը չէր, ասում էր. «Այսօր ոչ մի շաղգամի շիլա չեք ստանա, եթե վարդագույն շապիկը չտաք՝ հագնեմ»: Խեղճ տատիկիս ինչ էր մնում անելու, շաղգամի շիլան նրա ամենասիրած ճաշն էր: Ստիպված տալիս էր վարդագույն շորը: Մալինն էլ ստանալուն պես միանգամից թռչում էր խոհանոց ու այնպիսի մեծ եռանդով էր շաղգամով շիլա սարքում, որ բոլոր պատերին շիլա էր ցայտում:

Մի որպե լռություն տիրեց: Հետո տիկին Ալեքսանդերսոնն ասաց.

— Ես լիովին վստահ չեմ, իհարկե, բայց խիստ կասկածում եմ, որ իմ

Հիլդան գողություն է անում: Արդեն մի քանի անգամ նկատել եմ, որ առարկաներ են կորչում:

— Իսկ Մալինը,— սկսեց Պիպին, բայց այդ ժամանակ տիկին Սեթերգրենը հրամայեց երեխաներին.

— Այս րոպեիս բարձրացեք ձեր սենյակը:

— Բայց ես ուզում էի պատմել, որ Մալինն էլ էր գողանում, — ասաց Պիպին: — Գող կաչաղակի նման: Աչքն էլ չէր թարթում: Նա սովորություն ուներ գիշերն արթնանալու ու մի քիչ գողություն անելու, թե չէ հանգիստ չէր քնում: Մի անգամ տիկնիկիս դաշնամուրը

հաջողացրել էր մտցնել իր պահարանի վերևի դարակը: «Նա չափազանց ճարպիկ է»,- ասում էր տատիկս:

Այդ պահին Թոմին ու Ավիկան, Պիպիի թևերի տակից բռնելով, քաշեցին նրան աստիճաններով վեր: Տիկիններն արդեն երրորդ բաժակն էին խմում, և տիկին Սեթերգրենն ասաց.

— Ես իսկապես չեմ ուզում դժգոհել իմ Էլլայից, բայց դե շատ է ամանեղեն ջարդում, այդ մի բանն անում է:

Մի կարմիր մազափունջ երևաց աստիճանների վերևում:

— Իսկ ինչ վերաբերում է Մալինին,—

ասաց Պիպին,— ձեզ երևի հետաքրքիր է, թե ինքը սովորաբար ման ման ջարդում էր, թե չէ: Այո, հաստատ ասեմ ձեզ: Նա շաբաթվա մեջ մի առանձին օր էր հատկացնում ամաններ ջարդելուն: Տատիկս ասում էր, որ այդ օրը երեքշաբթին էր: Եվ երեքշաբթի՝ առավոտվա ժամը հինգից սկսած, լսվում էր ամանեղենի զրնգոցը: Այդ հրաշալի աղջիկը սկսում էր սուրճի բաժակներից ու գավաթներից և ուրիշ թեթև ամաններից, հետո շարունակում էր ճաշի ափսեներով և վերջացնում մեծ մատուցարաններով: Տատիկս պատմում էր, որ խոհանոցում ամբողջ օրն էնպիսի աղմուկ էր, որ

մարդու ականջ էր շոյում: Իսկ եթե Մալինը ճաշից հետո էլի ժամանակ էր ունենում, գնում էր հյուրասենյակ փոքրիկ մուրճիկը ձեռքին ու, տո՛ւր թե կտաս, ջարդում էր պատերից կախած հին հնդկական ամանները: Տատիկս միշտ նոր ամանեղեն էր առնում չորեքշաբթի օրերին,— Պիպին խոսքը վերջացրեց ու անհետացավ աստիճանների վերևում:

Այստեղ տիկին Սեթերգրենի համբերությունը սպառվեց: Նա, աստիճաններով վազելով, բարձրացավ երեխաների սենյակ, մոտեցավ Պիպիին, որ հենց այդ պահին Թոմիին գլխի վրա կանգնել

էր սովորեցնում:

— Դու այլևս երբեք այստեղ չգաս,— ասաց տիկին Սեթերգլենը,— եթե քեզ այսքան վատ ես պահում:

Պիպին ապշած նրան նայեց, և՝ կամաց-կամաց աչքերն արցունքներով լցվեցին:

— Ես գիտեի, որ էսպես կլինի,— ասաց նա,— որ ես ինձ պահել չեմ կարողանա: Էլ չարժի փորձել, ես երբեք էլ չեմ կարողանա սովորել: Ես պիտի նավի վրա մնացած լինեի:

Հետո գլուխ տվեց տիկին Սեթերգրենին, հրաժեշտ տվեց Թոմիին ու Անիկային և սկսեց դանդաղորեն աստիճաններով իջնել:

Տիկնայք նույնպես պատրաստվում էին տուն գնալու: Պիպին նստեց կոշիկների պահարանին և նայում էր, թե ինչպես են նրանք հագնում իրենց գլխարկներն ու վերարկուները:

— Շատ ցավալի է, որ դուք չեք սիրում ձեր սպասուհիներին,— ասաց նա:— Ա՛յ թե Մալինի նման սպասուհի ունենայիք: «Նրա նմանը աշխարհում չես գտնի», — ասում էր տատիկս:— Լսե՛ք, մի անգամ Ճնդյան տոներին, երբ պիտի ամբողջական խոճկոր մատուցեր, գիտե՞ք ինչ արեց: Գրքում կարդացել էր, որ խոճկորը պետք է մատուցել ականջներին փայլփլուն թղթեր, իսկ բերանը՝ խնձոր մտցրած: Խեղճ Մալինը չէր հասկացել, որ

խնձորը խոճկորի բերանի համար էր: Պիտի տեսնեիք, երբ նա մտավ Ծնողյան տոներին սպասուհու շորերով ու մի խոշոր խնձոր բերանին: Ինչ տեսարան էր: Տատիկս ասաց. «Մալի՛ն, դու գի՛ժ ես»: Իսկ Մալինը չէր կարող ոչ մի բառ արտաբերել, միայն գլուխն էր թափ տալիս, ու ականջների թուղթը խշխշում էր: Նա, իհարկե, փորձեց ինչ-որ բան ասել, բայց միայն «բըլ-բըլ-բըլ» ստացվեց: Եվ ոչ էլ կարող էր սովորականի պես մարդկանց կծել, մանավանդ որ էնքան շատ անծանոթներ էին եկել հենց այդ օրը: Հա՛, իսկի ուրախ Ծնողյան տոներ չեղան խեղճ Մալինի համար, —

տխուր վերջացրեց Պիպին:

Տիկիններն արդեն հագնված էին և վերջին անգամ հրաժեշտ էին տալիս տիկին Սեթերգրենին: Պիպին նրան ընդառաջ վազեց և շշնջաց.

— Կներեք, որ չկարողացա ինձ լավ պահել: Ցտեսություն:

Հետո գլխին դրեց իր հսկայական գլխարկն ու հետևեց տիկնանց: Բայց դարպասի մոտից նրանց ճանապարհները բաժանվեցին: Պիպին գնաց դեպի Վիլլա Վիլեկուլա, իսկ մնացածը՝ հակառակ ուղղությամբ:

Հազիվ էին հասցրել նրանք մի քանի քայլ գնալ, երբ հետևում լսեցին մեկի

հևոցը: Պիպին էր վազելով գալիս:

— Պատկերացրեք՝ ոնց էր տատիկս վշտացել, երբ կորցրեց Մալինին: Պատկերացրե՛ք՝ մի երեքշաբթի առավոտ, երբ Մալինը հասցրել էր շատ-շատ մի տասը-քսան բաժակ ջարդել, փախավ գնաց, և էլ ոչ մի լուր նրանից: Էնպես որ, տատիկս ստիպված այդ օրը էր ամանեղենը ջարդել: Խեղճը սովոր չէր այդ գործին, ու ձեռքերին կոշտուկներ էին առաջացել: Մալինին այլևս երբեք չտեսավ: «Շատ ափսոս, ինչ հրաշալի սպասուհի էր»,— ասում էր տատիկս:

Պիպին գնաց, տիկիններն էլ շտապեցին հեռանալ: Մի քանի մետր չէին անցել, երբ հեռվից լսեցին

Պիպիի ձայնը, որ թռքերի ամբողջ ուժով գոռում էր.

— Մ-ա-լ-ի-ն-ը-ե-ր-բ-ե-ք-չ-է-ր -ա-վ-լ-ու-մ-մ-ա-հ-ճ-ա-կ-ա-լ- ն-ե-ր-ի-տ-ա-կ:

Գլուխ 10. ՊԻՊԻՆ ՀԱՆԴԵՍ Է ԳԱԼԻՍ ՈՐՊԵՍ ՓՐԿԱՐԱՐ

Կիրակի օրը՝ ճաշից հետո, Պիպին նստել ու մտածում էր, թե ինչ է անելու: Թոմին ու Անիկան իրենց հայրիկի և մայրիկի հետ թեյի էին հրավիրված, այնպես որ, այդ օրը նրանց չէր կարող սպասել:

Առավոտվանից հասցրել էր արդեն շատ զվարճալի բաներով զբաղվել: Շատ վաղ էր արթնացել և պարոն Նիլսոնին անկողնու մեջ մատուցել էր հյութ ու բուլկիներ: Նա այնքան

անուշիկ տեսք ուներ, երբ երկնագույն գիշերանոցով նստած իր մահճակալիկին՝ երկու ձեռքով բռնել էր հյութի բաժակը: Հետո Պիպին կերակրել ու մաքրել էր ձիուն՝ ընթացքում պատմելով ծովում անցկացրած ժամանակվա իր արկածների մասին: Հետո հյուրասենյակի պաստառին նկարչությամբ էր զբաղվել: Ստեղծագործությունը պատկերում էր կարմիր զգեստով ու սև գլխարկով մի գեր տիկին, որի մի ձեռքին դեղին ծաղիկ էր, մյուսին՝ սատկած առնետ: Պիպիի կարծիքով՝ չափազանց գեղեցիկ էր և զարդարում էր ամբողջ սենյակը: Դրանից հետո էլ

պահարանի մոտ նստած՝ ուսումնասիրել էր իր՝ բոլոր ձվերն ու խեցիները և վերհիշել բոլոր հրաշալի վայրերը, որտեղից ինքն ու հայրը գտել էին դրանք, և աշխարհի այն բոլոր փոքրիկ խանութները, որոնցից գնել էին այժմ իր դարակներում պահվող այդ հիանալի առարկաները: Դրանից հետո պարոն Նիլսոնին փորձել էր սկոտիս սովորեցնել, բայց կապիկն ընդվզել էր: Մի պահ մտածել էր ձիու հետ փորձել, բայց փոխարենը մտել էր սնդուկի մեջ ու կափարիչն իր վրա փակել: Այդպես խաղում էր, իբր ինքը պահածոյացված ձուկ էր պահածոյի տուփի մեջ, միայն թե ափսոս էր, որ

Թոմին ու Անիկան էլ իր հետ չէին, որ իրենք էլ ձուկ լինեին:

Սկսել էր մթնել: Նա իր փոքրիկ, կարտոֆիլի նման քիթը կպցրել էր պատուհանի ապակուն և նայում էր աշնանային մթնշաղին: Հանկարծ հիշեց, որ մի քանի օր ձիով ման չի եկել և որոշեց դուրս գալ: Դա այդ հաճելի կիրակի օրվա գեղեցիկ վերջաբանը կլիներ:

Դրա համար նա դուրս գնաց, դրեց իր հսկայական գլխարկը, վերցրեց պարոն Նիլսոնին, որը, մի անկյունում նստած, խաղ էր անում քարե գնդիկներով, թամբեց ձիուն ու իջեցրեց պատշգամբից: Եվ ճանապարհ ընկան, պարոն Նիլսոնը՝

Պիպիի վրա, Պիպին՝ ձիու:

Ցուրտ էր, փողոցներն էլ սառած էին, և կարգին դղրդում էր, երբ նրանք ձիով անցնում էին: Պարոն Նիլսոնը, Պիպիի ուսին նստած, փորձում էր ծառերի կողքով անցնելիս ճյուղերից բռնել: Բայց Պիպին այնքան արագ էր քշում, որ ոչ մի կերպ չէր հաջողվում: Փոխարենը ծառերի ճյուղերը շրմփացնում էին ականջներին, և նրան դժվարությամբ էր հաջողվում գլխարկը գլխին պահել ու իր տեղից վայր չընկնել: Պիպին սլանում էր այդ փոքրիկ քաղաքով, և մարդիկ վախվորած կպչում էին տների պատերին, երբ նա անցնում էր նրանց կողքով:

Այդ քաղաքում, անշուշտ, հրապարակ կար: Այնտեղ մի փոքր, դեղին ներկված քաղաքապետարանի շենք կար և մի քանի հին, գեղեցիկ, միահարկ շենքեր: Կար նաև մի նորակառույց եռահարկ շենք, որը «երկնաքեր» էին անվանում, որովհետև քաղաքի ամենաբարձր շենքն էր: Կիրակի օրը՝ հետճաշյա ժամին, այդ փոքրիկ քաղաքը շատ հանգիստ ու խաղաղ էր թվում: Բայց անսպասելի լռությունը խախտեց մի բարձր ճիչ.

— Երկնաքերը վառվում է: Հրդեհ, հրդեհ:

Բոլոր կողմերից մարդիկ էին վազում սարսափահար աչքերով: Մի հրշեջ

մեքենա անցավ՝ համառորեն տագնապի ազդանշան տալով և քաղաքի փոքրիկ երեխաները, որոնց համար հրշեջ մեքենա տեսնելը միշտ մեծ ուրախություն էր, այժմ սարսափից լաց էին լինում, որովհետև վախենում էին, որ իրենց տանն էլ է հրդեհ բռնկվելու: Երկնաքերի դիմացի հրապարակում մեծ ամբոխ էր հավաքվել, որին ոստիկանները փորձում էին քշել, որպեսզի հրշեջ մեքենան կարողանա մոտենալ: Երկնաքերի պատուհաններից երևում էին կրակի բոցերը, իսկ ծուխն ու կայծերն էլ ընկնում էին հրշեջների վրա, որ քաջաբար նետվել էին կրակը

հանգցնելու: Կրակը բռնկվել էր առաջին հարկում, բայց շատ արագ տարածվել էր վերևի հարկերը: Հանկարծ հրապարակում հավաքված մարդկանց աչքին մի տեսարան երևաց, որ քիչ մնաց սարսափից բոլորի շունչը կտրվի: Շենքի ամենավերևում ձեղնահարկ կար, և հանկարծ մի մանկական ձեռք բացեց ձեղնահարկի պատուհանը, և երկու փոքրիկ տղա, այնտեղ կանգնած, օգնություն էին կանչում:

— Մենք չենք կարողանում իջնել, որովհետև աստիճանների վրա կրակ կա,— բղավեց նրանցից մեծը: Նա հինգ տարեկան էր, իսկ եղբայրը՝ մի

տարով փոքր: Նրանց մայրիկը գործերով դուրս էր եկել, և այժմ նրանք բոլորովին մենակ էին այնտեղ:

Հրապարակում հավաքված մարդկանցից շատերը սկսեցին լաց լինել, հրշեջների ղեկավարն էլ անհանգիստ տեսք ուներ: Իհարկե, հրշեջ մեքենայի վրա սանդուղք կար, սակայն այն այդքան բարձր չէր հասնում: Շենք մտնելն ու երեխաներին փրկելն անհնար էր: Հուսահատությունը համակեց բոլորին, երբ հասկացան, որ երեխաներին ոչնչով չեն կարող օգնել: Իսկ երկու փոքրիկ խեղճ տղաները, վերևում կանգնած, լաց էին լինում: Ընդամենը մի քանի

որպեսզի կրակը կհասներ նաև ձեղնահարկ:

Բազմության մեջ երևաց Պիպին՝ ձիու վրա նստած: Նա հետաքրքրությամբ նայում էր հրշեջ մեքենային և մտածում, թե արդյոք իր համար էլ չգնի դրա նմանը: Նա շատ էր հավանել այն, որովհետև կարմիր գույնի էր և որ մեծ աղմուկ էր բարձրացնում, երբ անցնում էր փողոցներով: Հետո նայեց կայծկլտացող բոցերին և մտածեց, որ շատ զվարճալի կլիներ, եթե մի քանի կայծ ընկներ իր վրա:

Որոշ ժամանակ անց նա ուշադրություն դարձրեց նաև ձեղնահարկի փոքրիկ տղաների վրա:

Ի զարմանս Պիպիի՝ նրանց տեսքից բոլորովին չէր երևում, թե կրակի վտանգը ինչ-որ զվարճալի բան է: Դա Պիպին չէր կարող հասկանալ և պիտի հարցներ շուրջը խմբված մարդկանց.

— Ինչո՞ւ են երեխաները լաց լինում:

Սկզբում պատասխանի փոխարեն հեկեկոցներ լսեց, մինչև վերջապես մի գեր տղամարդ պատասխանեց.

— Հա, բա ինչ էիր կարծում: Չե՞ս կարծում, որ ինքդ էլ լաց կլինեիր, եթե վերևում լինեիր ու չկարողանայիր իջնել:

— Ես երբեք լաց չեմ լինում,— ասաց Պիպին:— Բայց եթե նրանք իսկապես

իջնել են ուզում, ինչ՞ւ որևէ մեկը նրանց չի օգնում:

— Որովհետև հնարավոր բան չի,— ասաց գեր քեռին:

Պիպին մի պահ մտածեց:

— Մի երկար պարան ճարեք ինձ համար,— ասաց նա:

— Ինչի՞դ է պետք,— հարցրեց գեր քեռին,— երեխաները շատ փոքր են, որ կարողանան պարանով իջնել: Կամ թե դու ոնց կբարձրանաս, որ պարանը նրանց տաս:

Երկնաքերի պատի մոտ մի բարձր ծառ կար: Ծառի սաղարթը մոտավորապես ձեղնահարկի

պատուհանի բարձրության վրա էր: Բայց ծառի ու պատուհանի միջև ամենաքիչը երեք մետր հեռավորություն էր: Ծառի բունն էլ հարթ էր և առանց որևէ ճյուղերի, որ հնարավոր լիներ բարձրանալ: Եվ ոչ էլ Պիպին էր կարող մագլցել նրա վրա:

Հրդեհը սաստկանում էր, ձեղնահարկի երեխաները ճչում էին, և հրապարակի բազմությունը լաց էր լինում:

Պիպին իջավ ձիուց և մոտեցավ ծառին: Ապա վերցրեց պարանը և ամուր կապեց պարոն Նիլսոնի պոչից:

— Դու Պիպիի խելոք տղան ես, չէ՞,- ասաց նա ու նրան ծառի բնին նստեցնելով՝ թեթևակի հրեց: Կապիկը հրաշալի հասկացավ, թե ինչ է իրենից պահանջվում: Նա ծառի բնով սուսուփուս բարձրացավ: Դե, փոքրիկ կապիկի համար դա, իհարկե, բոլորովին էլ դժվար չէր:

Հրապարակի ողջ ժողովուրդը, շունչը պահած, նայում էր պարոն Նիլսոնին: Շուտով նա հասավ ծառի սաղարթին: Մի ճյուղի վրա տեղավորվելով՝ նա նայում էր Պիպիին: Վերջինս ձեռքով արեց նրան, որ նորից ներքև իջնի: Նա այդպես էլ արեց, բայց իջավ ծառի բնի մյուս կողմից: Այնպես որ, երբ

պարոն Նիլսոնը նորից հայտնվեց գետնին, պարանը ծառի ճյուղի վրայով կախվել էր, և այժմ երկու ծայրերն էլ հայտնվել էին ներքևում:

— Դու էնքան խելոք ես, պարո՛ն Նիլսոն, որ ուզածդ ժամանակ պրոֆեսոր կդառնաս,— ասաց Պիպին՝ արձակելով նրա պոչին ամրացված պարանի մի ծայրի հանգույցը:

Մոտակայքում մի մարդ զբաղված էր իր տունը վերանորոգելով: Պիպին վազեց և այնտեղից մի երկար տախտակ բերեց: Ապա տախտակը թևի տակ դնելով՝ վազեց ծառի մոտ, մյուս ձեռքով բռնեց պարանից և ոտքերով հենվեց ծառի բնին: Շատ

արագ նա ճարպկորեն բարձրացավ վերև, և մարդիկ զարմանքից դադարեցին լաց լինելուց: Երբ նա հասավ սաղարթին, ձեռքի տախտակը հարմարեցրեց մի հաստ ճյուղի վրա և սկսեց զգուշորեն հրել դեպի ձեղնահարկի պատուհանը, մինչև որ վերջապես տախտակը հասավ դրան և ասես կամուրջ դարձավ պատուհանի ու ծառի միջև:

Հրապարակի բազմությունը բոլորովին լուռ էր: Նրանք լարված սպասում էին: Պիպին կանգնեց տախտակի վրա: Նա բարեկամաբար ժպտաց ձեղնահարկի տղաներին:

— Էս ինչ տխուր տեսք ունեք,— ասաց նա,— հո փորացավ չունեք:

Եվ տախտակից ցատկեց ներս:

— Ձեզ մոտ շատ տաք է,— ասաց նա: — Հաստատ կարող եմ ասել, որ էսօր էստեղ էլ վառարանը վառելու կարիք չի լինի: Ինձ թվում է՝ վաղը ամենաշատը չորս չոփիկը բավարար կլինի:

Հետո տղաներին գրկեց, ամեն մեկին մի թևի տակ դրեց ու նորից բարձրացավ տախտակի վրա:

— Հիմա մի քիչ կզվարճանանք,— ասաց:— Ոնց որ լարախաղաց լինենք:

Եվ երբ հասավ մեջտեղին, մի ոտքը բարձրացրեց, ճիշտ ինչպես կրկեսում: Մի շշուկ անցավ ներքևում

կանգնած մարդկանց մեջ, իսկ երբ դրանից անմիջապես հետո հանկարծ Պիպիի կոշիկն ընկավ, մի քանի տարեց կանայք ուշագնաց եղան: Բայց Պիպին բարեհաջող ու անվնաս տղաների հետ հասավ ծառին, և ներքևում սպասող բոլոր մարդիկ այնպես «ուռա» գոչեցին, որ այդ որոտը մութ երեկոյան խլացրեց հրդեհի աղմուկը:

Հետո Պիպին իր մոտ քաշեց պարանը ու մի ծայրն ամուր կապեց ծառի ճյուղից: Ապա տղաներից մեկի մեջքին կապեց պարանի մյուս ծայրը և դանդաղ ու զգուշորեն իջեցրեց նրան երջանիկ մոր մոտ, որ հրապարակում կանգնած՝ սպասում

էր: Նա փաթաթվեց իր տղային և, արցունքներն աչքերին, գրկեց նրան: Սակայն Պիպին բացականչեց.

— Դե պարանի ծայրն արձակե՛ք: Էստեղ մի տղա էլ կա, որը, գիտե՛ք, թռչել չի կարող:

Մարդիկ օգնեցին բացելու պարանի կապը, և տղան ազատվեց: Պիպին կարողանում էր լավ կապեր անել: Նավի վրա էր սովորել: Հետո նորից վերև քաշեց պարանի ծայրը, և երկրորդ տղայի հերթը հասավ՝ ներքև իջնելու:

Այժմ Պիպին մենակ էր մնացել ծառի վրա: Նա արագ ցատկեց տախտակի վրա, և բոլոր մարդիկ զարմացած

նայում էին նրան, թե ինչ է անելու: Պիպին հետուառաջ էր անում այդ նեղ տախտակի վրա: Նա գեղեցիկ բարձրացնում-իջեցնում էր ձեռքերը ու երգում խռպոտ ձայնով, որ հրապարակի մարդիկ հազիվ էին լսում.

Վառվում է մի կրակ,
Վառվում, ինչպես մի ճրագ,
Վառ կայծերով անհամար:
Այն վառվում է քեզ համար,
Այն վառվում է ինձ համար,
Այն վառվում է բոլոր
Պարողների համար:

Երգելով պարում էր, ավելի ու ավելի արագ ու արագ, և մարդկանցից

շատերը սարսափից փակել էին աչքերը, որովհետև վախենում էին, որ նա կընկնի ու ջարդուփշուր կլինի: Հսկա բոցերը խփում էին ձեղնահարկի պատուհանից, և բոցերի լույսով Պիպին շատ պարզորոշ էր երևում: Նա ձեռքերը բարձրացրել էր դեպի երեկոյան երկինքը և իր վրա տեղացող կայծերի անձրևի տակ բարձր գոչում էր.

— Ինչ ուրախ, ուրախ, ուրախ վտանգավոր կրակ է:

Հետո նա ցատկեց ուղիղ պարանի վրա:

Եվ նա ներքև սահեց, կայծակի արագությամբ հասավ գետնին:

— Մի քառակի ուռա Երկարագուլպա Պիպիի պատվին, կեցցե Պիպին,— գոչեց հրշեջների ղեկավարը:

— Ուռա, ուռա, ուռա, ուռա,— գոռացին բոլոր մարդիկ: Իսկ մեկը գոռաց հինգ անգամ. Պիպին էր:

Գլուխ 11. ՊԻՊԻԻ ԾՆՆԴՅԱՆ ՕՐԸ

Մի օր Թոմին ու Անիկան իրենց փոստարկղում մի նամակ գտան:

«ԹՄԻԻՆ ԵՎ ԱՆԻԿԱԻՆ». գրված էր վրան: Իսկ երբ բացեցին, մի բացիկ տեսան, որի վրա գրված էր.

«ԹՈՄԻՆ ԵՎ ԱՆԻԿԱ ՀՐԱՎԻՐՎԱՑ ԵՆ ՊԻՊԻԻ ԾԸՆՈՒՆԴԻՆ ՎԱՂԸ ԵԱՇԻՑ ՀԵՏՕ: ՀԱՔՈՒՍՏԸ՝ ԻՆՉ ՎՈՐ ՈՒՉՈՒՄ ԷՔ»:

Թոմին ու Անիկան այնքան ուրախացան, որ սկսեցին ցատկոտել ու պարել: Իրենք հրաշալի հասկացան բացիկում ասվածը՝

չնայած որ մի քիչ տարօրինակ կերպով էր գրված:

Պիպին դժվարությամբ էր հաջողեցրել գրել այն: Ճիշտ է, անգամ դպրոցում նա չէր ճանաչել «Ո» տառը, բայց փաստորեն, համենայն դեպս, մի քիչ գրել գիտեր: Այն ժամանակ, երբ Պիպին հոր հետ ծովով ճամփորդում էր՝ երբեմն երեկոյան հոր նավաստիներից մեկը Պիպիի հետ նստում էր տախտակամածին ու փորձում էր նրան գրել սովորեցնել: Ցավոք, Պիպին բոլորովին ուշիմ ու համբերատար աշակերտ չէր: Եվ սովորաբար ասում էր.

— Էհ, Ֆրիդրիֆ (այդ նավաստու

անունը Ֆրիդոլֆ էր), չէ՛, գրողի ծո՛ցը գնա սովորելը, ձեռ քաշի, ավելի լավ է բարձրանամ կայմին, տեսնեմ՝ վաղը ինչ եղանակ է սպասվում:

Դրա համար ամենևին էլ զարմանալի չէր, որ գրելու գործը դժվար էր գնում: Պիպին մի ամբողջ գիշեր արթուն նստել էր և ճգնել այդ հրավիրատոմսի վրա և միայն լուսաբացին, երբ աստղերը սկսել էին մարել Վիլլա Վիլեկուլայի վերևում, նա գաղտագողի մոտեցել էր Թոմիի ու Անիկայի տանը ու նամակը գցել նրանց փոստարկղը:

Հենց որ Թոմին ու Անիկան եկան դպրոցից, սկսեցին պատրաստվել հրավերքին: Անիկան մորը խնդրեց,

որ օգնի մազերը սանրելու: Մայրիկը հավաքեց նրա մազերը և մեծ մետաքսյա ժապավեն կապեց: Թոմին մազերը թրջել էր, որ բացարձակ հարթ լինեն: Նա ընդհանրապես չէր հանդուրժում, որ մազերը քիչ ալիքաձև լինեն: Հետո Անիկան ուզեց հագնել իր ամենագեղեցիկ շրջազգեստը, բայց մայրիկն ասաց, որ չարժի, որովհետև Անիկան հազվադեպ էր Պիպիի տանից վերադառնում մաքուր ու կոկիկ: Այնպես որ, Անիկան ստիպված էր բավարարվել իր նախորդ՝ ամենագեղեցիկ զգեստով: Թոմին շատ չէր մտահոգվող թե ինչ է հագնելու, միայն թե գեղեցիկ լիներ:

Նրանք, բնականաբար, նվեր էին պատրաստել Պիպիի համար: Վերցրել էին իրենց սեփական գանձանակի փողերը և դպրոցից վերադառնալիս վազել կենտրոնական փողոցի խաղալիքների խանութն ու առել մի հրաշալի ..., իսկ թե ինչ, որոշ ժամանակ պիտի գաղտնի մնար: Այժմ նվերը պատրաստ էր՝ կանաչ թղթով ու շատ ժապավեններով փաթաթված, և երբ Թոմին ու Անիկան հագնվեցին, Թոմին վերցրեց նվերը, ու նրանք ճանապարհ ընկան: Նրանց հետևեց մայրիկի խիստ նախազգուշացումը, որ շորերը չկեղտոտեն: Անիկան նույնպես պիտի

մի քիչ տեղ տաներ նվերը, իսկ հանձնելու ժամանակ երկուսով էին բռնելու. այդպես էին պայմանավորվել:

Արդեն նոյեմբեր ամիսն էր, և շուտ էր մթնում: Երբ Թոմին ու Ալիկան մտան Վիլլա Վիլեկուլայի դարպասից, ձեռքերով ամուր բռնեցին իրար, որովհետև բավական մութ էր Պիպիի այգում, և հնամենի ծառերն էլ, որ ճիշտ այդ ժամանակ վերջին տերևներն էին կորցնում, այնքան չարագուշակ էին սվսվում:

— Խոր աշուն է,— հոգոց հանելով՝ ասաց Թոմին: Չափազանց հաճելի էր տեսնել Վիլլա Վիլեկուլայի լուսավոր պատուհանները ու

մտածել, որ իրենք այնտեղ ծնունդի են հրավիրված:

Սովորական օրերին Թոմին ու Անիկան սովորություն ունեին մտնելու հետնամուտքից, բայց այսօր գնացին դեպի շքամուտքը: Ձին չերևաց պատշգամբում: Թոմին քաղաքավարի թակեց դուռը: Դռան հետևից լսվեց մի խուլ ձայն.

Մութ գիշերով ո՞վ է գալիս
Արահետով դեպ իմ տուն.
Ուրվական է, թե խղճալի՝
Ճանապարհը կորցրած բու:

— Չէ, Պի՛պի, մենք ենք,— գոչեց Անիկան,— դուռը բաց:

Պիպին բացեց դուռը:

— Օ՛հ, Պի՛պի, ինչ ասացիր այդ «ուրվականի» մասին, ես շատ վախեցա,— ասաց Անիկան՝ բոլորովին մոռանալով շնորհավորել Պիպիին:

Պիպին սրտանց ծիծաղեց ու բացեց խոհանոցի դուռը: Ի՜նչ հրաշալի էր հայտնվել լուսավոր ու տաք սենյակում: Ծննդյան օրը նշելու էին խոհանոցում, որովհետև ամենալավ տեղն էր: Ներքևի հարկում երկու սենյակ կար միայն, մեկը՝ հյուրասենյակը, մյուսը՝ Պիպիի ննջարանը: Իսկ խոհանոցը մեծ ու ընդարձակ էր, ու Պիպին ամեն ինչ կարգի էր բերել այնտեղ: Գետնին

գորգեր էր փռել, իսկ սեղանին մի նոր սփռոց էր, որ ինքն էր կարել: Իր ասեղնագործած ծաղիկներն իսկապես բավական տարօրինակ էին, բայց Պիպին պնդում էր, որ հեռավոր Հնդկաստանում ճիշտ այդպիսի ծաղիկներ էին աճում, և դրանք հենց այդպիսին էլ պիտի լինեն: Վարագույրները փակ էին, իսկ բուխարիկում ճրթճրթոցով բոցկլտում էր կրակը: Փայտե արկղի վրա նստած էր պարոն Նիլսոնն ու կաթսաների կափարիչներն իրար էր խփում, իսկ մի անկյունում կանգնած էր ձին: Բնականաբար, նա նույնպես հրավիրված էր խնջույքին:

Վերջապես Թոմին ու Անիկան հիշեցին, որ պիտի շնորհավորեն Պիպիին: Թոմին գլուխ տվեց, իսկ Անիկան խոնարհվեց, ապա առաջ բերեցին կանաչ կապոցն ու ասացին. «Պատիվ ունենք շնորհավորելու»: Պիպին շնորհակալություն հայտնեց և անհամբեր սկսեց քանդել կապածը: Եվ միջից մի նվագարկղիկ երևաց: Պիպին ուղղակի գժվեց հիացմունքից: Փաթաթվեց Թոմիին, գրկեց Անիկային, շոյեց նվագարկղիկը, հետո էլ՝ փաթեթավորման թուղթը: Հետո նա լարեց նվագարկղիկն, ու պլինգ-պլոնգի հետ միջից մի երաժշտություն լսվեց, որ կարելի էր

ենթադրել՝ «Ա՛խ, իմ անգին Ավգուստին» երգն էր:

Պիպին նորից ու նորից էր լարում, և, թվում էր, մնացած ամեն ինչի մասին մոռացել է: Բայց հանկարծ ինչ-որ բան հիշեց:

— Սիրելիներս, ախր դուք էլ ձեր ծննդյան նվերները պիտի ստանաք,— ասաց նա:

— Լավ, բայց մեր ծնունդը չի, չէ՞,— ասացին Թոմին ու Անիկան:

Պիպին ապշած նրանց նայեց:

— Հը՞մ, բայց իմ ծնունդն է, ինչքան գիտեմ, ուրեմն ես էլ ձեզ կարող եմ ծննդյան նվերներ տալ: Թե՞ ձեր

դասագրքերում ինչ-որ մի տեղ գրված է, որ այդպես չի կարելի: *Պատկաբակմական* աղյուսակի հետ է կապված, որ չեն անում այդպես:

— Դե չէ, պարզ է, որ կապ չունի,— ասաց Թոմին:— Ուղղակի ընդունված չէ: Բայց ես ինքս մեծ հաճույքով մի նվեր կստանամ:

— Ես էլ,— միացավ Անիկան:

Այդ ժամանակ Պիպին վազեց հյուրասենյակ և պահարանի վրայից երկու փաթեթ բերեց: Թոմին իր փաթեթը բացեց և փղի ժանիքից պատրաստված մի փոքրիկ ֆլեյտա գտավ, իսկ Անիկայի փաթեթում թիթեռնիկի տեսքով մի գեղեցիկ

կրծքազարդ էր: Թիթեռնիկի թևերը զարդարված էին կարմիր, կապույտ ու կանաչ քարերով:

Այժմ, երբ բոլորը ստացան իրենց ծննդյան նվերները, սեղան նստելու ժամանակն էր: Ինչ բազմաթիվ ու բազմատեսակ թխվածքներով ու քաղցրավենիքներով էր լցված սեղանը: Թխվածքները, ճիշտ է, բավական արտասովոր տեսք ունեին, բայց Պիպին նշեց, որ դրանք Չինաստանում շատ ընդունված են: Հետո Պիպին բաժակները սերուցքով շոկոլադի ըմպելիք արեց և արդեն բոլորը կարող էին զբաղեցնել իրենց տեղերը:

Իսկ Թոմին առաջարկեց.

— Երբ մայրիկն ու հայրիկը հյուրեր են ընդունում, պարոններին միշտ մի բացիկ են տալիս, ուր նշվում է, թե ո՞ր տիկնոջը պիտի առաջնորդեն սեղանի մոտ: Ինձ թվում է՝ լավ կլինի՝ մենք էլ այդպես անենք:

— Լավ, եկե՛ք,— համաձայնեց Պիպին:

— Չնայած ավելի վատ մեզ համար, որովհետև մեր մեջ, փաստորեն, միայն ես եմ պարոն,— անվստահորեն ասաց Թոմին:

— Աչքիդ է երևում,— ասաց Պիպին:— Չլինի՞ թե կարծում ես, որ պարոն Նիլսոնն օրիորդ է:

— Չէ՛, իհարկե, չէ՛, պարոն Նիլսոնին բոլորովին մոռացել էի,— ասաց

Թոմին: Եվ նա նստեց արկղի վրա ու մի բացիկի վրա գրեց. «Պարոն Սեթերգրենը պատիվ ունի առաջնորդելու օրիորդ Երկարագուլպային»:

— Պարոն Սեթերգրենը դե ես եմ,— բավականությամբ ասաց նա և բացիկը մեկնեց Պիպիին: Ապա գրեց հաջորդ բացիկը. «Պարոն Նիլսոնը պատիվ ունի առաջնորդելու օրիորդ Ալեթերգրենին»:

— Ձին էլ անպայման պիտի մի բացիկ ստանա,— վճռականորեն ասաց Պիպին:— Նույնիսկ եթե մեզ հետ սեղան չի նստելու:

Եվ Թոմին ստիպված Պիպիի

թելադրությամբ գրեց հաջորդ բացիկի վրա. «Ձին պատիվ ունի հանգիստ կանգնելու անկյունում և այդ դեպքում թխվածք ու շաքար կստանա»:

Պիպին, բացիկը պահելով ձիու դնչի մոտ, ասաց.

— Կարդա՛ ու ասա՝ ինչ ես կարծում:

Եվ քանի որ ձին որևէ առարկություն չուներ, Թոմին բռնեց Պիպիի թևն ու առաջնորդեց սեղանի մոտ: Պարոն Նիլսոնը բոլորովին մտադրություն չուներ Անիկային ուղեկցելու, այդ պատճառով Անիկան ողջ նախաձեռնությունն իր վրա վերցրեց և, նրան գրկած, տարավ սեղանի

մոտ: Նա էլ, սակայն, հրաժարվեց որևէ աթոռի վրա նստելուց ու տեղավորվեց ուղղակի սեղանին: Ոչ էլ շոկոլադի ըմպելիք խմելու ցանկություն ուներ, բայց հենց Պիպին նրա համար ջուր լցրեց, կապիկը երկու ձեռքով բռնեց բաժակն ու գլխին քաշեց:

Անիկան, Թոմին ու Պիպին վայելելով ուտում էին: Անիկան ասաց, որ եթե Չինաստանում այդպիսի թխվածքներ են լինում, ուրեմն ինքը երբ մեծանա, այնտեղ է տեղափոխվելու:

Պարոն Նիլսոնը բաժակը դատարկել էր, ձեռքերի մեջ պտտում էր, իսկ հետո՝ շրջած գլխին դրեց: Այդ

տեսնելով՝ Պիպին էլ նույնն արեց, բայց քանի որ ամբողջը դեռ չէր խմել, ճակատին մի փոքրիկ առվակ երևաց, որ ծորաց քթի վրայով: Բայց Պիպին լեզուն դուրս հանեց և կանգնեցրեց այն:

— Ոչ մի կաթիլ չպիտի կորչի,— ասաց նա: Թոմին ու Անիկան մինչև գլխին դնելն ամբողջությամբ դատարկեցին իրենց բաժակները:

Երբ բոլորը կշտացան ու հագեցան, ձին էլ ստացավ իր հասանելիքը, Պիպին արագ վերցրեց սփռոցի չորս ծայրերից ու բարձրացրեց այնպես, որ բոլոր բաժակներն ու թխվածքների սկուտեղները լցվեցին իրար վրա, ինչպես պարկի մեջ: Այդ

ամբողջ կապոցը գցեց արկղի մեջ.

— Հենց որ ուտում-վերջացնում եմ, սիրում եմ միանգամից հավաքել, — ասաց նա:

Ահա եկավ խաղալու ժամանակը: Պիպին առաջարկեց «Գետնից բարձր» կոչվող մի խաղ խաղալ: Դա շատ պարզ խաղ էր: Միակ բանը, որ մարդ պիտի աներ, ցատկել-անցնել ամբողջ խոհանոցով՝ ոչ մի անգամ գետնին չդիպչելով: Պիպին մի վայրկյանում մի ամբողջ պտույտ գործեց սենյակով: Անգամ Թոմին ու Անիկան հաջողեցրին գլուխ բերել դա: Նրանք սկսեցին լվացարանից, և եթե հաջողվում էր բավական ճիշտ նշան բռնել ու ցատկել, ապա մարդ

հայտնվում էր ճիշտ գազօջախի վրա, այնտեղից էլ՝ արկղի վրա, արկղի վրայից էլ՝ գլխարկների դարակի վրայով՝ սեղանին, հետո էլ երկու աթոռների վրայով՝ անկյունի պահարանին: Անկյունի պահարանից մինչև լվացարանը մի քանի մետր հեռավորություն էր, բայց, բարեբախտաբար, ձին էր կանգնած այնտեղ, և եթե մարդ մագլցեր ձիու վրա պոչի կողմից ու կախվեր ձիու վզից, ապա մի ճարպիկ ոստյունով կհայտնվեր ճիշտ լվացարանի վրա:

Երբ նրանք բավական ժամանակ խաղացին, և Անիկայի շորն արդեն բոլորովին էլ նրա նախավերջին լավագույն շորը չէր, այլ միայն նախա-

նախա-նախա- վերջին լավագույնը, իսկ Թոմին էլ ծխնելույզ մաքրողի նման սևացել էր, որոշեցին մի ուրիշ բան հնարել:

— Չգնանք վերև՝ ձեղնահարկ, ու տեսնենք՝ ուրվականները ոնց են,— առաջարկեց Պիպին:

Անիկան դեռ հևում էր:

— Ուր... ուր... ուր... վաղաներ կան վերևում,— հարցրեց նա:

— Ուրվականներ կան: Էն էլ ինչքան,— ասաց Պիպին:— Տանիքը լիքն է ուրվականներով ու ոգիներով: Քայլելուց էլ ոտքերի տակ են ընկնում: Դե՛, չգնանք:

— Օ՛,— հառաչեց Ավիկան ու հանդիմանանքով նայեց Պիպիին:

— Մայրիկն ասել է՝ ոչ մի ուրվական ու ոգի չկա,— ինքնավստահ ասաց Թոմին:

— Ես էլ եմ կարծում,— ասաց Պիպին: — Ոչ մի տեղ չկան, ճիշտ է, բացի այստեղից, որովհետև բոլոր եղածները ապրում են իմ ձեղնահարկում: Ու իմաստ էլ չունի խնդրել, որ թողնեն գնան: Բայց դե նրանք անվտանգ են: Ուղղակի կսմթում են թևերդ էնպես, որ հետո կապտում է, ու մեկ էլ ոռնում են: Մեկ էլ իրենց գլուխներով կեգլի են խաղում:

— Իր...իր...իրենց գլուխներով կեգլի՞ են խաղում, — շշնջաց Անիկան:

— Ճիշտ էդպես,— հաստատեց Պիպին:— Դե եկե՛ք գնանք վերև, հետները խոսենք: Ես լավ եմ կեգլի խաղում:

Թոմին չէր ուզում ցույց տալ, թե վախենում է և նաև ուզում էր գոնե մի անգամ իսկական ուրվական տեսնել: Ա՛յ թե դասարանի տղաներին պատմելու բան կլինի: Բացի այդ, նա ինքն իրեն հանգստացնում էր, որ ուրվականները Պիպիի ներկայությամբ չեն հանդգնի որևէ բան անել: Եվ նա որոշեց գնալ Պիպիի հետ: Խեղճ Անիկան ոչ մի պայմանով էլ համաձայն չէր, բայց

մտքով հանկարծ անցավ, որ հնարավոր է՝ մի փոքրիկ-փոքրիկ ոգի կարող է ներքև իջնել, երբ նա խոհանոցում մենակ նստած կլինի: Դա էլ վճռեց ամեն ինչ: Ավելի լավ է Պիպիի ու Թոմիի հետ միասին լինել հազար ուրվականի մեջ, քան խոհանոցում՝ թեկուզ ամենափոքրիկ ձագուկ ուրվականի հետ:

Պիպին գնաց առջևից: Բացեց ձեղնահարկ տանող դուռը: Ահավոր մութ էր: Թոմին ամուր բռնվել էր Պիպիից: Անիկան էլ ավելի ամուր կառչել էր Թոմիից: Եվ այդպես բարձրանում էին նրանք աստիճաններով: Յուրաքանչյուր քայլից նրանց ոտքերի տակ ճռճռում

ու ճռճռում էր: Թոմին սկսել էր փոշմանել, որ համաձայնվել էր բարձրանալ վերև, իսկ Անիկան նույնիսկ չէր կասկածում: Նա վստահ էր, որ չարժեր բարձրանալ:

Այսպիսով՝ կամաց-կամաց աստիճանը վերջացավ, և նրանք հայտնվեցին ձեղնահարկում: Այնտեղ բոլորովին մութ էր. միայն լուսնի լույսի մի բարակ շերտ էր ընկնում գետնին: Երբ քամին փչում էր ճեղքերից, բոլոր անկյուններից հառաչներ ու ծվծվոցներ էին լսվում:

— Ողջույն բոլոր ուրվականներին,— գոչեց Պիպին:

Եթե որևէ ոգի էլ կար այնտեղ, նա,

համենայն դեպս, չպատասխանեց:

— Ոչ մեկը չկա. էդպես էլ գիտեի,— տխրեց Պիպին:— Նրանք գնացել են Ուրվականների և ոգիների միության ղեկավարության նիստի:

Անիկան հանգստացած շունչ քաշեց և հույս ուներ, որ նիստը բավական երկար կտևի: Բայց հենց այդ պահին ձեղնահարկի մի անկյունից սարսափելի ճիչ լսվեց:

— Ո՛ւ-հո՛ւ-հուո՛ւ,— լսվեց այնտեղից, և մի վայրկյանից Թոմին տեսավ մթության մեջ խշխշոցով դեպի իրեն եկող մեկին: Նա զգաց, որ ինչ-որ մի բան թեթևակի քսվեց նրա ճակատին, և տեսավ, թե ինչպես մի սև

ուրվագիծ անհետացավ բաց մնացած փոքրիկ օդանցքից: Նա լեղապատառ ճչաց.

— Ուրվական, ուրվական:

Անիկան էլ ձայնակցեց:

— Խեղճը հաստատ ուշացել է խորհրդակցությունից,— ասաց Պիպին:— Եթե, իհարկե, դա ուրվական էր: Ոչ թե ինչ-որ մի բու: Համ էլ ոչ մի ուրվական էլ չկա,— շարունակեց նա մի պահ լռելուց հետո,— դե ինչքան ավելի եմ մտածում, այնքան ավելի է թվում, որ բու է: Ով որ պնդի, թե ուրվականներ կան, քթին կհասցնեմ:

— Բայց դու ինքդ ասացիր,— ասաց

Անիկան:

— Հա՛, դե ինչ,— ասաց Պիպին,— ուրեմն ես իմ քթին պիտի հասցնեմ:

Եվ նա կանգնեց ու մի կարգին հասցրեց իր իսկ քթին:

Դրանից հետո Թոմին ու Անիկան մի քիչ հանգստացան: Նույնիսկ այնքան քաջություն զգացին, որ հանդգնեցին մոտենալ պատուհանին և նայել պարտեզին: Մեծ, գորշ ամպերը լողալով անցնում էին երկնքով և հնարավորությունը բաց չէին թողնում լուսնին ծածկելու: Ծառերն էլ խշշում էին:

Թոմին ու Անիկան շրջվեցին: Բայց այդ պահին, օ՛, սարսափ, տեսան

իրենց ընդառաջ եկող մի սպիտակ կերպարանք:

— Ուրվակն,— սարսափահար բղավեց Թոմին:

Անիկան այնպես վախեցավ, որ անգամ ձայն հանել չէր կարող: Կերպարանքն ավելի ու ավելի էր մոտենում, և Թոմին ու Անիկան իրար փաթաթվեցին ու աչքերը փակեցին: Բայց հանկարծ լսեցին, որ ուրվականն ասաց.

— Տեսեք՝ ինչ գտա: Հայրիկիս գիշերանոցը հին նավաստիական արկղում էր՝ այն հեռավոր անկյունում: եթե ես արդեն հագել եմ, ուրեմն կարող եմ իմը դարձնել:

Պիպին նրանց մոտ եկավ ոտքերին քսվող գիշերանոցով:

— Պիպի, քիչ էր մնում սարսափից մեռնեի,— ասաց Անիկան:

— Բայց դե գիշերանոցները վտանգավոր չեն,— հավատացրեց Պիպին:— Նրանք կծում են միայն ինքնապաշտպանության համար:

Պիպին որոշեց ինչպես հարկն է փորփրել նավաստիների արկղը: Նա բարձրացրեց ու տարավ արկղը պատուհանի մոտ, բացեց կափարիչն այնպես, որ լուսնի լույսը լուսավորի պարունակությունը: Դրա մեջ լիքը հին շորեր կային, որոնք Պիպին ուշադրությամբ շուռումուռ էր

տալիս ձեղնահարկի գետնին: Մեջը նաև հեռադիտակ կար, մի քանի հին գիրք, երեք ատրճանակ, մի դաշույն և մի տոպրակ ոսկեդրամներ:

— Թիդելիպոմ- փիդելիդեյ, — գոհունակությամբ գոչեց Պիպին:

— Ինչ հետաքրքիր է,— ասաց Թոմին:

Պիպին ամեն ինչ լցրեց գիշերանոցի մեջ, և նրանք նորից իջան խոհանոց: Ավիկան անչափ գոհ էր, որ իջան ձեղնահարկից:

— Երեխաներին չի թույլատրվում հրազենի դիպչել,— բացականչեց Պիպին և ամեն ձեռքով մեկական ատրճանակ վերցրեց:— Հակառակ դեպքում կարող է մի բան պատահել,

— ասաց նա և միաժամանակ սեղմեց երկու ատրճանակների ձգանները:— Կարգին կրակեց,— արձանագրեց նա ու նայեց առաստաղին: Այնտեղ, ուր կպել էին գնդակները, երկու անցք էր երևում:

— Ո՞վ գիտի,— ասաց նա՝ հույսով լի,— երևի գնդակները ծակել անցել են առաստաղը և խրվել մի ուրվականի ոտքի մեջ: Սա թող նրանց դաս լինի, որ մտածեն, երբ մյուս անգամ որոշեն գործի անցնել և փոքրիկ ու անմեղ երեխաներին վախեցնել: Որովհետև, կարծում եմ, եթե նույնիսկ դրանք գոյություն չունեն, դա գիտակցելով՝ նրանք չպետք է մարդկանց վախեցնեն: Կուզեք, ամեն մեկդ մի

ատրճանակ վերցրեք,— հարցրեց նա:

Թոմին ցնծության մեջ էր, Անիկան էլ շատ էր ուզում ինքն էլ մի ատրճանակ ունենալ, միայն թե ոչ լիցքավորված:

— Մենք արդեն կարող ենք իսկական ավազակախումբ կազմել, եթե ուզենանք,— ասաց Պիպին ու հեռադիտակն աչքերին դրեց:— Ինձ թվում է՝ սրանով ես կարող եմ Հարավային Աֆրիկայում նույնիսկ լվերին տեսնել,— շարունակեց նա:— Սա մեզ շատ պետք կգա, եթե որոշենք ավազակախումբ դառնալ:

Ճիշտ այդ պահին դուռը թակեցին: Թոմիի ու Անիկայի հայրիկն էր եկել՝

իր երեխաներին տուն տանելու: Նա ասաց, որ վաղուց նրանց քնելու ժամանակն էր: Թոմին ու Ավիկան շտապ շնորհակալություն հայտնեցին և հրաժեշտ տվեցին ու հավաքեցին իրենց պատկանելիք իրերը՝ սրինգը, կրծքազարդն ու ատրճանակները:

Պիպին առաջնորդեց իր հյուրերին դեպի պատշգամբ և նայեց, մինչև նրանք անհետացան այգու դարպասներից: Նրանք շրջվեցին ու ձեռքով հրաժեշտ տվեցին Պիպիին: Տան լույսն ընկել էր նրա վրա: Նա կանգնած էր իր ձիգ, կարմիր հյուսքերով և իր հոր գիշերանոցով, որը կպել էր ոտքերին: Մի ձեռքին ատրճանակ էր, մյուս ձեռքին՝

դաշույն, որը թափահարելով հրաժեշտ էր տալիս:

երբ Թոմին ու Ալիկան և նրանց հայրիկը հասան իրենց դարպասին, լսեցին, որ Պիպին կանչում է նրանց: Նրանք կանգնեցին ու ականջ դրեցին: Ծառերը սվսվում էին, այնպես որ, նրանք հազիվ էին կարողանում լսել նրան: Բայց վերջապես լսեցին:

— Երբ մեծանամ, ծովահեն եմ դառնալու,— գոռում էր նա,— կգամք միասին ծովահեն դառնանք:

Notes

[←1]

Ֆրյոկեն – օրիորդ (շվեդերեն)

[←2]

Կրոնա – շվեդական դրամ

[←3]

Օրե – շվեդական մանրադրամ

[←4]

Տրոլ – սկանդինավյան հեքիաթային հերոս

[←5]

Սկոտիս – Եվրոպական պարի տեսակ

[←6]

Պիպին սխալ է արտասանում ֆրանսերեն «շարման» (charmant՝ հիանալի) բառը